# Հյուսիսային ՏԱԽ-ի Տեղական զարգացման ռազմավարություն 2022-2026 թթ.

ԳՅՈՒՄՐԻ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Հապավումներ ..... 4**

**1. Տարածքի սահմանումը ..... 5**

1.1 Տարածքի և տարածքի բնութագրերի նկարագրություն՝ տարածքային վերլուծություններով ..... 5

1.2 Տեղեկություններ ժողովրդագրական կառուցվածքի և միտումների մասին ..... 6

**2. Զարգացման կարիքների վերլուծություն ..... 10**

2.1 Տարածաշրջանի նկարագրությունը և սոցիալ-տնտեսական իրավիճակը ..... 10

2.1.1 Գյուղատնտեսություն ..... 11

2.1.2 Կրթություն և սոցիալական ներառում ..... 15

2.1.3 Զբոսաշրջություն ..... 18

2.1.4 Փոքր և միջին ձեռնարկատիրություն (ՓՄՁ) ..... 21

2.1.5 Գենդերային իրավիճակի նկարագրություն և վերլուծություն ..... 22

2.1.6 Բնապահպանություն ..... 30

2.2 Տարածաշրջանի SWOT վերլուծություն ..... 32

**3. Կարիքների գնահատում՝ ռեսուրսների և առաջնահերթությունների ստուգում ..... 42**

**4. Գործողությունների ծրագիր ..... 45**

4.1 Ռազմավարության նպատակները ..... 45

4.2 Գործողությունների նկարագրություն ..... 45

4.3 Միջոլորտային թեմաներ ..... 65

4.3.1 Գենդերային հավասարություն ..... 65

4.3.2 Բնապահպանություն ..... 72

4.3.3 Սոցիալական ներառում ..... 76

4.4 Ռիսկերի գնահատում ..... 80

4.5 Նորարարություն ..... 84

4.6 Կայունություն ..... 85

4.7 Այլ ռազմավարությունների և նախագծերի հետ համապատասխանեցման ապահովում (քաղաքականության համատեքստ) ..... 87

**5. Ցանցային կապեր և համագործակցություն ..... 88**

**6. ՏԱԽ կազմակերպչական կառուցվածք, ղեկավարում և որակի ապահովում ..... 90**

6.1 Կազմը և կառուցվածքը ..... 90

6.2 Կանոններ, առաջադրանքներ, գործողության և իրականացման եղանակներ ..... 91

6.3 ՏԱԽ-ի կառավարումը ..... 92

6.4 Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցում ..... 93
6.5 Մշտադիտարկման և ինքնագնահատման ընթացակարգ..... 93
**7. Ֆինանսական պլան ..... 96**
**8. Նախապատրաստման և մշակման գործընթաց ..... 98**
8.1 Տեղացիների ներգրավվածության նկարագրությունը ..... 98
8.2 Փորձագետների դերի նկարագրությունը ..... 99
**9.Հավելվածներ ..... 100**

# Հապավումներ

| | |
|---|---|
| ՏԱԽ | տեղական ակտիվ խումբ |
| ՀԿ | հասարակական կազմակերպություն |
| ՔՀԿ | քաղաքացիական հասարակության կառույց |
| ԲՀԿ | բարեգործական հասարակական կազմակերպություն |
| ՎՎ | Վորլդ Վիժն |
| ՏՏ | տնային տնտեսություն |
| ՊՈԱԿ | պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՀՈԱԿ | համայնքային ոչ առևտրային կազմակերպություն |
| ԱԶԳ | Ավստրիական զարգացման գործակալություն |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՓՄՁ | փոքր և միջին ձեռնարկատիրություն |

**Այս հրապարակումը պատրաստվել Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Շիրակի մարզում» ծրագիրը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության տեսակետները:**

# 1. Տարածքի սահմանումը

## 1.1 Տարածքի և տարածքի բնութագրերի նկարագրություն՝ տարածքային վերլուծություններով

ՏԱԽ-ի տարածքն ընդգրկում է Շիրակի մարզի հյուսիսային երկու խոշորացված համայնքների՝ Աշոցքի և Ամասիայի 21 բնակավայրեր, որոնք բոլորը գյուղական բնակավայրեր են: **Ամասիա** բազմաբնակավայր համայնքից ՏԱԽ տարածքում ներառված է 9 մշտական՝ Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի, Ջրաձոր և մեկ ոչ մշտական բնակեցված բնակավայր (Կամխուտ), որոնք փռված են Ախուրյան գետի երկու ափերին և գտնվում են ծովի մակարդակից 1630-2000 մետր բարձրության վրա: **Աշոցք** համայնքից ՏԱԽ տարածքում ընդգրկված է 11 բնակավայր՝ Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ և Փոքր Սեպասար, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1990-2150 մետր բարձրությունների վրա:

**Քարտեզ 1**

ՏԱԽ տարածքի ընտրության համար, որպես բազմաֆունկցիոնալ չափում, հաշվարկվել է մարզի բոլոր բնակավայրերի համայնքային զարգացման ինդեքսը, որի համար հավաքվել և օգտագործվել են համայնքների վերաբերյալ մեծ ծավալով երկրորդային տվյալներ: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են բնակչության թիվը, երիտասարդության համամասնությունը, սոցիալական աջակցության համակարգում ներառված տնային տնտեսությունների համամասնությունը, նախադպրոցական հաստատությունների առկայությունը, ծնելիությունը, ջրի և գազի սպասարկման հասանելիությունը, համայնքային եկամուտը, զբաղվածության մակարդակը, արտագաղթը, ՔՀԿ-ների թիվը և այլն:

Ելնելով վերոնշյալ չափանիշներից, ինչպես նաև հաշվի առնելով տեղացիների ու համայնքների հետաքրքրությունները՝ ձևավորվել է Շիրակի հյուսիսն ընդգրկող Տեղական ակտիվ խմբի տարածքը (Քարտեզ 1)։

Տարածքն ընդգրկող բնակավայրերի հիմնական մասում կլիման բարեխառն ցամաքային է, բնորոշ կարճատև զով ամառով և երկար ու ցուրտ ձմեռով, իսկ ավելի բարձրադիր հատվածներում՝ ցուրտ լեռնային։ Օդի տարեկան միջին ջերմաստիճանը +4,1°C է, հունվար ամսին միջին ջերմաստիճանը հասնում է -10°C-ից -14°C, հուլիսին՝ +10-ից +16°C։ Ամռանն օդի բացարձակ ջերմաստիճանը հասնում է մինչև +32°C-ի, իսկ ձմռանը՝ -36-ից - 40°C-ի։ Տարածքում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 650-700 մմ։

Տարածքն ընդգրկող բնակավայրերի միջև ամենամեծ հեռավորությունը (Ողջի-Սարագյուղ) կազմում է 54 կմ, իսկ բնակավայրերից միջին հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է մոտավորապես 32 կմ։

ՏԱԽ տարածքով է անցնում Գյումրի-Նինոծմինդա (Վրաստան) միջպետական նշանակության ավտոճանապարհը։

Տարածքն ընդգրկող բնակավայրերում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ, ինչպես նաև գյուղմթերքի վերամշակմամբ, մասնավորապես՝ կաթնամթերքի։ Տարածքում արտադրվում է լոռի, չանախ, սուլուգուլի և այլ պանրատեսակներ, որոնք սպառվում են ինչպես մարզում, այնպես էլ Հայաստանի մյուս մարզերում և հանրապետության սահմաններից դուրս։

## 1.2 Տեղեկություններ ժողովրդագրական կառուցվածքի և միտումների մասին

Շիրակի հյուսիսն ընդգրկող տեղական ակտիվ խմբի տարածքի մշտական բնակչության թիվը կազմում է **11914** (Աղյուսակ 1)։ Տարածքի բնակչության թվով ամենամեծ բնակավայրը Աշոցքն է՝ 2815 բնակչով, իսկ ամենափոքրը՝ Կամխուտը, որն ունի ընդամենը 11 բնակիչ։

Տարածքում ընդգրկված բնակչության մեծ մասը վերաբնակեցվել է Արևմտյան Հայաստանի Մուշի, Ալաշկերտի, Բասենի և Կարսի գավառներից 1920-ական թվականներին, բնակչության մի ստվար մաս տեղափոխվել ու բնակություն է հաստատել Ջավախքից։

| Աղյուսակ 1. Շիրակի մարզի հյուսիսային ՏԱԽ-ն ընդգրկող համայնքները/բնակավայրերը և դրանց ընդհանուր բնակչության թիվը | | | |
|---|---|---|---|
| Համայնք | ՏԱԽ-ում ընդգրկված բնակավայրեր | Բնակչությունը՝ ըստ բնակավայրի[1] | Բնակչություն |
| Ամասիա | Ամասիա | 1656 | 11914 |
| | Արեգնադեմ | 429 | |
| | Բանդիվան | 221 | |
| | Բյուրակն | 634 | |
| | Գտաշեն | 203 | |
| | Հովտուն | 155 | |
| | Մեղրաշատ | 363 | |
| | Ողջի | 357 | |
| | Ջրաձոր | 247 | |
| | Կամխուտ | 11 | |
| Աշոցք | Աշոցք | 2815 | |
| | Բավրա | 686 | |
| | Զույգաղբյուր | 532 | |
| | Թավշուտ | 388 | |
| | Կարմրավան | 234 | |
| | Կրասար | 547 | |
| | Ղազանչի | 648 | |
| | Մեծ Սեպասար | 919 | |
| | Սարագյուղ | 258 | |
| | Սիզավետ | 396 | |
| | Փոքր Սեպասար | 215 | |

Տարածքի բնակչության սեռատարիքային բաշխման տվյալների (Հավելված 1) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության մեծամասնությունը արական

[1] ՀՀ ԱՎԿ, բնակչության տվյալներն ըստ բնակավայրերի, հունվար, 2020:

սեռի է (52,9%), իսկ կանայք կազմում են 47,1%-ը (Գծապատկեր 4): Այս միտումը նկատվում է բոլոր բնակավայրերի դեպքում, բացառությամբ Բյուրակնի, որտեղ կանանց թիվը մի փոքր ավելի է:

ՏԱԽ տարածքում առկա ժողովրդագրական իրավիճակի կարևորագույն հիմնախնդիրներից է բնակչության ծերացումը, որը վերջին տասնամյակում գնալով ավելի է արագանում: Տարածքի բնակչության 20,5%-ը մինչև 19 տարեկան են, 20-ից 41 տարեկանները կազմում են բնակչության՝ 29,8, իսկ 42-ից 64 տարեկանները՝ 38,4 %-ը: 65 և բարձր տարիք ունեցող բնակչությունը կազմում է 11,3 %, ինչը ցույց է տալիս բնակչության ժողովրդագրական ծերացման բարձր մակարդակը:

Գծապատկեր 4. Տարածքի բնակչության սեռային բաշխումը




Գծապատկեր 5. Տարածքի բնակչության տարիքային բաշխումը




Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե բնակչության կառուցվածքում 65-ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող:

Տարածքն ընդգրկող բնակավայրերում վերջին 20 տարիների ընթացքում գրանցված բացասական միտումներ ունեցող ժողովրդագրական փոփոխություններն արտացոլում են վերջին տարիներին բնակչության արտագաղթն ու բնական վերարտադրության անկումը:

*Գծապատկեր 6*-ում ներկայացված է տարածքի բնակչության բնական աճը՝ հաշվի առնելով վերջին 20 տարիների ծնելիության և մահացությունների թիվը: Հատկապես, 2010թ.-ից հետո բնական աճը կտրուկ անկում է ապրել, որը տնտեսական ճգնաժամի պատճառով արտագաղթի ավելացման հետևանք է: 2020թ.-ին բնական աճի ցուցանիշը եղել է բացասական՝ կորոնավիրուսի համաճարակի, ինչպես նաև պատերազմի հետևանքով մահացությունների թվի կտրուկ աճով պայմանավորված:

Գծապատկեր 2: Տարածքի բնակչության բնական աճը 2000-2020թթ.




Այսպիսով, տարածքն ընդգրկող բնակչության սեռատարիքային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր բնակավայրերի առաջ ծառացած են նույն ժողովրդագրական հիմնախնդիրները, որոնք բխում են տարածքի ընդհանուր իրավիճակից ու սոցիալ-տնտեսական խնդիրներից: Դրանք էլ իրենց հերթին ազդում են բնակչության կյանքի որակի ու կենսապայմանների վրա, ինչն էլ հանգեցնում է արտագաղթի ու ծնելիության անկման:

# 2. Զարգացման կարիքների վերլուծություն

## 2.1 Տարածաշրջանի նկարագրությունը և սոցիալ-տնտեսական իրավիճակը

ՏԱԽ-ի տարածքում ընդգրկված բնակավայրերը հիմնականում ունեն նմանատիպ տնտեսական նկարագիր: Ստորև ներկայացված են թիրախ բնակավայրերի հիմնական տնտեսական բնութագրերը:

Աշոցք համայնքի տարածքում ընդգրկված բնակավայրերում տնտեսությունը հիմնված է գյուղատնտեսության (հացահատիկի և կարտոֆիլի արտադրություն) և անասնապահության վրա: Աշոցք գյուղում գործում է պանրի գործարան, ինչպես նաև Բավրայի «Նոր հատիկ» հնդկացորենի վերամշակման կոոպերատիվը (գործարան)[2]:

Ամասիա համայնքի տարածքում ընդգրկված բնակավայրերում տնտեսությունը հիմնված է գերազանցապես անասնապահության վրա: Անբարենպաստ կլիմայի և ոռոգման ջրի սակավության պատճառով համայնքները չեն կարողանում ամբողջությամբ իրացնել իրենց գյուղատնտեսական ներուժը (հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի արտադրություն): Մեղվաբուծական գործունեությամբ են զբաղվում Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Մեղրաշատ և Ողջի բնակավայրերը: Ամասիայում և Բանդիվանում կան կաթի վերամշակման գործարաններ: Բացի այդ, Ամասիա գյուղում 2019 թվականից գործում է բրդի արտադրություն[3]:

Աշոցքում, Բավրայում, Մեծ Սեպասարում գործում են միջին չափի մի քանի տավարաբուծական ֆերմաներ: Արեգնադեմ բնակավայրում կառուցվում են սպանդանոց և ժամանակակից սանիտարական պահանջներին համապատասխանող անասնագոմ:

Արեգնադեմ, Գտաշեն, Ամասիա, Մեղրաշատ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Զույգաղբյուր բնակավայրերում գործում են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնք գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ծառայություններ են մատուցում գյուղացիական տնտեսություններին՝ հողի մշակման, խոտհունձի կազմակերպման և արոտների կառավարման մեջ: Բավրայում գործում է «Նոր հատիկ» կոոպերատիվը, Սիզավետում՝ «Լատիֆ» ընտանեկան կոոպերատիվը, Արեգնադեմում և Բյուրակնում՝ գյուղատնտեսական սպառողական

[2] Աշոցք համայնքի հնգամյա զարգացման պլան. Հղում՝ http://ashotsq.am/Devproject

[3] Ամասիա համայնքի հնգամյա զարգացման պլան. Հղում՝ http://amasia.am/Devproject

կոոպերատիվները։ Տարածքի գյուղերի բնակչության սպասարկման համար Ամասիա և Աշոցք բնակավայրերում գործում են պետական ծառայություններ տրամադրող և մասնավոր կառույցների ստորաբաժանումներ՝ ոստիկանություն, աշխատանք և զբաղվածություն, սոցիալական ապահովություն, կադաստրի պետական կոմիտե, բանկեր, էլեկտրաէներգիա, գազ և ջուր մատակարարող ընկերություններ, կապի և համացանցի ծառայություններ մատուցող ընկերություններ։

Տարածքն ընդգրկող բնակավայրերում, հատկապես ամենամեծ՝ Աշոցք և Ամասիա բնակավայրերում գործում են փոքր ու միջին ձեռնարկություններ, ինչպիսիք են հացի արտադրամասերը, մանրածախ առևտրի և հանրային սննդի օբյեկտները, գազալիցքավորման կայանը, հեղուկ վառելիքի լիցքավորման կետերը։

Տարածքում գործում են նաև քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ, ինչպիսիք են «Լեջամե» համայնքային զարգացման հիմնադրամը, «Ամասիա» համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ-ն, «Հյուսիսի երիտասարդներ» ՀԿ-ն, «Բավրայի Բրայթ Իմփաքթ» համայնքային զարգացման ՀԿ-ն, ինչպես նաև մի շարք երիտասարդական ոչ ֆորմալ խմբեր, երիտասարդական ծխական խորհուրդներ։ Բացի տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, ՏԱԽ տարածքում ակտիվորեն աշխատում են նաև «Կարիտաս» ԲՀԿ-ն, «Համայնքների զարգացման հիմնադրամը», «Վորլդ Վիժն-Հայաստան» կազմակերպությունը, «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն։

Տարածքի բնակլիմայական պայմաններից ելնելով, հատկապես խստաշունչ ձմեռները հաշվի առնելով՝ ձմեռային սպորտաձևերով հետաքրքրվող մարդկանց համար գործում է Աշոցքի դահուկային կենտրոնը, որ տեղացիներին առաջարկում է զբաղվել ձմեռային սպորտաձևերով։ Տարածքում գործող անհատ ձեռնարկատերերը զբոսաշրջիկներին ու տեղացիներին նաև առաջարկում են կայակինգ, կանոյինգ և սնոուբորդինգ՝ որպես ժամանցի անցկացման միջոց։

Ստորև ներկայացված են տարածքի զարգացման ռազմավարության թեմատիկ առաջնահերթությունների մանրամասն նկարագրերը՝ ըստ ոլորտների։

### 2.1.1 Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը (կաթնատու և մսատու տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը) ՏԱԽ-ի տարածքի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունն են։ Բացի տավարաբուծությունից և ոչխարաբուծությունից, տեղացիները նաև զբաղվում են խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, հացահատիկային, կերային և որոշ

մշակաբույսերի աճեցմամբ: Հատկանշական է, որ տարածաշրջանում անասնապահությամբ զբաղվում են տնային տնտեսությունների ավելի քան 90%-ը, իսկ բուսաբուծությունը համեմատաբար թույլ է զարգացած և չի համարվում գյուղատնտեսության բարձր եկամտաբեր ճյուղ, ուստի փոքր ներդրում ունի ոլորտի համախառն արտադրանքում: Բուսաբուծությունից ստացվող եկամուտները կազմում են բնակչության ամբողջ եկամուտների ոչ ավելի քան 10-15%-ը[4]:

Տարածքի բնակավայրերում հատկապես պակաս զարգացվածություն ունեն պտղաբուծությունն ու հատապտղագործությունը, չնայած նրան որ վերջիններս համարվում են ամենաեկամտաբեր քիչ ներդրումներ պահանջող ուղղություններից: Ոչ մեծ ծավալով, սակայն պտղաբուծությամբ ու հատապտղագործությամբ զբաղվում են տարածքի հարավային ցածրադիր բնակավայրերում (Բյուրակն, Մեղրաշատ, Ողջի):

Տարածքի հողային ռեսուրսների մեծ մասը բաժին է հասնում գյուղատնտեսական նշանակության հողերին (**39,364.41հա**): Գծապատկեր 8-ում արտացոլված է տարածքի գյուղատնտեսական հողերի հաշվեկշիռը՝ ըստ հողատեսքերի: Ըստ տվյալների՝ գյուղատնտեսական հողերի 49.07%-ը արոտներ են, վարելահողերը կազմում են 36.43%-ը, խոտհարքները՝ 10,14%-ը, ավելի փոքր մասնաբաժին են կազմում գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը (4,35%) և բազմամյա տնկարանները (0,01%): Հատկանշական է, որ ընդհանուր վարելահողերից (14340.28հա) միայն 1234.5հա-ն է ոռոգվողը, ինչը կազմում է մոտավորապես վարելահողերի 9%-ը: Ոռոգվող վարելահողերը բացառապես գտնվում են տարածքի՝ Ամասիա համայնքից ընդգրկված բնակավայրերում: Բազմամյա տնկարանները գտնվում են տարածքի հարավային ցածրադիր բնակավայրերում:

[4] Շիրակի մարզի հյուսիսային միավորված համայնքներում գյուղատնտեսության ներկա վիճակը, բնապահպանական մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները, ԲԻՈՍՈՖԻԱ ՀԿ, Գյումրի 2021թ., էջ 22

Գծապատկեր 8: Տարածքի գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվեկշիռն ըստ հողատեսքերի, առ 01.01.2020թ.




Ամասիա համայնքի թիրախ բնակավայրերում չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 138.6 հա, որոնք ամբողջությամբ վարելահողեր են, իսկ Աշոցք համայնքի թիրախ բնակավայրերում չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 698.3հա (վարելահող՝ 608հա, 59.4-ը, խոտհարք՝ 59,4հա, արոտ՝ 30,5հա և գյուղատնտեսական նշանակության այլ հողեր՝ 0,4հա)։

Որպես չմշակվող հողերի առկայության պատճառներ են բերվում հիմնականում հողի բերրիության ցածր մակարդակն ու հողագործության ցածր եկամտաբերությունը, միջոցների բացակայությունը, այդ թվում որակյալ սերմեր ու պարարտանյութեր ձեռք բերելու համար, ինչպես նաև տարածքում սեփականատերերի փաստացի չբնակվելը։

Այսպիսով, տարածքի հողային ռեսուրսների քանակական տվյալները ցույց են տալիս, որ թիրախ բնակավայրերը հարուստ են գյուղատնտեսական նշանակության հողային պաշարներով, որոնք բավարար են անասնաբուծության և բուսաբուծության զարգացման համար։ Գյուղատնտեսական նշանակության հողերի գերակշիռ մասը կազմում են խոտհարքներն ու արոտները, որոնք անասնաբուծության համար խթան կարող են հանդիսանալ, վարելահողերի մեծ մասնաբաժինը ևս կարող է օգտագործվել բուսաբուծության խթանման համար, սակայն ոռոգման ցանցի բացակայության պայմաններում բուսաբուծությունն ավելի ռիսկային է։ Մյուս կողմից՝ գյուղատնտեսական տեխնիկայի սակավությունն ու մաշվածության աստիճանը, գյուղատնտեսության վարման ավանդական ձևերն ու նոր մշակաբույսերի աճեցման հանդեպ թերահավատ վերաբերմունքը խոչընդոտում են բուսաբուծության զարգացումը։ Վերջին տարիներին որոշ

տնտեսվարողներ սկսել են ավանդական առվույտի, ցորենի և գարու փոխարեն աճեցնել հնդկացորեն և ոսպ՝ Բավրայում գործող հնդկաձավարի վերամշակման գործարանով պայմանավորված: Չնայած նկատվող քիչ փոփոխություններին՝ բուսաբուծությունը շարունակում է փոքր ծավալների մնալ և համարվել ցածր եկամտաբերությամբ աշխատանք՝ սահմանափակվելով քիչ թվով մշակաբույսերի և փոքր գյուղացիական տնտեսությունների շրջանակներում:

Ի տարբերություն բուսաբուծության՝ տարածքի թիրախ բնակավայրերում անասնապահությունը՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծումը, ավելի զարգացած է՝ ի հաշիվ առկա կերահանդակների: Գծապատկեր 10-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս տարածքի անասնագլխաքանակն ու մեղվաընտանիքների քանակը 2019-2020թթ.: Հետաքրքրական է, որ խոշոր ու մանր եղջերավորների, խոզերի ու թռչունների քանակն աճել է 2019թ.-ի համեմատ, իսկ մեղվաընտանիքների քանակը բավականին նվազել է, ինչը պայմանավորված է մարզում ու հանրապետությունում տարածված հիվանդությունների պատճառով տեղի ունեցած զանգվածային անկումներով:

Գծապատկեր 10: Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը և մեղվաընտանիքների քանակը թիրախ տարածքում 2019-2020թթ.




| | Խոշոր եղջերավոր | Մանր եղջերավոր | Խոզեր | Թռչուններ | Մեղվաընտանիքներ |
|---|---|---|---|---|---|
| 2019 | 15921 | 15666 | 1093 | 17101 | 2013 |
| 2020 | 16824 | 16672 | 1213 | 18267 | 1697 |

Անասնագլխաքանակի տվյալների վերլուծությունը նաև ցույց է տալիս, թե տարածքի ո՛ր բնակավայրերում ինչպիսի՛ կենդանիների բուծումն է ավելի տարածված: Այսպիսով, տվյալները ցույց են տալիս, որ Աշոցք համայնքի թիրախ բնակավայրերում ավելի տարածված է տավարաբուծությունը, իսկ Ամասիայի թիրախ բնակավայրերում՝ ոչխարաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը : Մեղվաբուծությունը նույնպես բնորոշ է տարածքի հարավային բնակավայրերին (Հավելված 2):

**Տավարաբուծությունը** հիմնականում իրականացվում է փոքր գյուղացիական տնտեսություններում՝ ավանդական տեխնոլոգիաներով և արոտամսուրային պահվածքով: Բուծվող խոշոր եղջերավորների մեծ մասը կովկասյան գորշ ցեղն է,

որը լավ հարմարեցված է տեղի բնակլիմայական պայմաններին: Քիչ, բայց նաև հանդիպում են հոլշտեյն, շվից, սիմենթալ և սևաբղետ ցեղի կենդանիներ և դրանց խառնուրդներ:

Թե՛ տավարաբուծությունը, թե՛ ոչխարաբուծությունը հատուկ են փոքր գյուղացիական տնտեսություններին և իրականացվում են արոտամսուրային պահվածքով: Տարածքում բուծվում են մի քանի էնդեմիկ ցեղատեսակներ, ինչպիսիք են՝ մազեխ, բոզախ, բալբաս, հայկական կիսակոպտաբուրդ, որոնք հարմարված են տեղի պայմաններին: Միջազգային ու տեղական այլ ծրագրերով փորձ է արվում նոր ցեղատեսակների բուծման, որի հետևանքով մեղվաընտանիքների քանակը բավականին նվազել է, ֆրանսական բլանշ ցեղատեսակի մի քանի տասնյակ ոչխարներ (մսատու) են տրամադրվել տեղացի ֆերմերներին: Ոչխարաբուծության շնորհիվ ստացված ոչ միայն միսն ու կաթն են սպառվում տեղական ու արտաքին շուկաներում, այլ նաև բուրդն է վերամշակվում Ամասիայի բրդի վերամշակման գործարանում:

Տարածքի բնակավայրերում պահվող հիմնական թռչնատեսակը հավն է, սակայն կան նաև որոշակի քանակությամբ սագեր, բադեր, հնդկահավեր: Հավերի ամենատարածված ցեղատեսակը երևանյանն է:

Թիրախ տարածքում բնական լանդշաֆտները՝ ալպիական մարգագետիններով և լեռնային տափաստաններով, լավ ռեսուրս են մեղվապահության առումով, սակայն այդքան էլ լիարժեք չեն օգտագործվում: Մեղվաբուծության համար նաև խթանիչ հանգամանք է թունաքիմիկատների չօգտագործման հանգամանքը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ գյուղատնտեսության անասնաբուծության ճյուղը թիրախ բնակավայրերում բավականին զարգացած է՝ չնայած նրան, որ տարբեր բնակավայրերում տարբեր նախընտրելի ուղղություններ են զարգացած: Հակառակ դրան՝ բուսաբուծությունը, մասնավորապես՝ նոր մշակաբույսերի ներդրումն ու մշակումը, գյուղատնտեսական նորագույն տեխնոլոգիաներով դեռևս կարիք ունի զարգացման՝ հաշվի առնելով առկա հողային հսկայական ռեսուրսներն ու բնակլիմայական պայմանները:

## 2.1.2 Կրթություն և սոցիալական ներառում

Հայաստանը վերջին տարիներին որոշակի առաջընթաց է գրանցել աղքատության կրճատման ուղղությամբ, սակայն դեռևս առկա են զարգացման մարտահրավերներ, հատկապես մարդկային կապիտալի զարգացման դաշտում, որն անհրաժեշտ է երկրի աշխատուժի արտադրողականությունը բարձրացնելու համար: Կազմակերպությունները խնդիրների են հանդիպում թափուր աշխատատեղերն անհրաժեշտ հմտությունների տիրապետող աշխատողներով համալրելու և նրանց պահելու հարցում: Գլխավոր խոչընդոտներից մեկը աշխատուժի համապատասխան հմտությունների պակասն է: Կրթության անբավարար որակը՝

հատկապես գործնական հմտությունների և արդիական գիտելիքների մասով, ի հայտ է եկել որպես առանցքային մարտահրավեր։ Նեղ մասնագիտական հմտություններից բացի, հայաստանաբնակ երիտասարդների մեջ պակասում են, օրինակ, հիմնախնդիրների լուծման, քննական ու ստեղծարար մտածողության, թիմային աշխատանքի և առաջնորդության ընդհանրական հմտությունները։ Մինչ գործատուները խոսում են հմտությունների պակասի մասին, աշխատուժի մի ստվար զանգված գործազուրկ է կամ տնտեսապես ոչ ակտիվ։ Սա էլ իր հերթին դրդում է մեծ ծավալներով արտագնա աշխատանքի։ Այս խնդիրը հատկապես վառ արտահայտված է Շիրակի մարզում։

Համաթվից կարելի է հետևություն անել, որ այսօր Հայաստանում ծնված երեխան՝ չափահաս դառնալով կունենա ընդամենը 58 %-ն այն արտադրողականության, որը կունենար լիարժեք կրթություն և առողջություն ունենալու պարագայում։ ՄԿՀ այս ցուցանիշը գլխավորապես վերագրվում է կրթության որակի և որակյալ կրթական ծառայությունների անհավասար հասանելիության խնդիրներին։ ՄԿՀ-ը ցույց է տալիս, որ Հայաստանում վեց տարեկանում ուսումնական հաստատություն հաճախել սկսող երեխան 11-ամյա հանրակրթությունը ֆորմալ ավարտում է 18 տարեկանում։ Սակայն դրան համադրելով երեխաների փաստացի սովորածը՝ կրթական վերջնարդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրակրթության տարիների թիվը համարժեք է 8-ի։ Սրա հետևանքը 3.3 տարվա ուսումնառության բացն է։ Աղքատ ընտանիքների և հեռավոր բնակավայրերի երեխաների շրջանում, այլ սովորողների համեմատ, ավելի մեծ է ֆորմալ կրթությունից դուրս մնալու ցուցանիշը, և նրանք հաճախ հետամուտ չեն լինում սովորելու այլ հնարավորությունների։ Ֆորմալ կրթական համակարգից զատ, նրանց նաև չի առաջարկվում այլընտրանք, քանի որ հատկապես գյուղական բնակավայրերում այդ հնարավորությունները մշուշոտ են։ Ուսումնառության բացը նշանակալի խնդիր է առաջացնում, որը հետևանքներ է ունենում ողջ կյանքի ընթացքում անհատի բարեկեցության և արտադրողականության վրա։ Ուսման թերի որակը նշանակում է, որ կրթությունը չի կատարում իր «խոստումը», այն չի նպաստում աղքատության կրճատմանը կամ կայուն աճին և, ամենայն հավանականությամբ, բերում է սոցիալական ու տնտեսական հարատև անհավասարության։

Հայաստանում դպրոցական երեխաների շուրջ մեկ երրորդը չի կարողանում վարժ կարդալ, մոտավորապես նույն քանակի սովորողներ չունեն տարրական գիտելիքներ մաթեմատիկայի վերաբերյալ։

Այս շրջանում Հայաստանը խորամուխ է եղել հանրակրթության չափորոշչի և կրթական ծրագրերի հավակնոտ բարեփոխումների, ինչը սովորողներին հնարավորություն կընձեռի լիարժեք իրացնելու իրենց ներուժը և ապահովելու երկրի սոցիալական, տնտեսական ու քաղաքական զարգացումը։ Սակայն սա իր հերթին մի շարք մարտահրավերներ է բերում, հատկապես ուսուցիչների մասով։ Բարեփոխումների շրջանակներում Հայաստանը փորձում է ուսուցման և ուսումնառության իր ավանդական մոտեցումից անցում կատարել կարողունակությունների (կոմպետենցիաներ) վրա հիմնված կրթության համակարգի։ Այս անցումն իրողություն դարձնելը բարդ ձեռնարկ է լինելու, քանզի

բոլոր նյութերը, չափորոշիչներն ու կրթական ծրագրերը և կրթության գործընթացները պատմականորեն եղել են գիտելիքահենք, ուսուցչակենտրոն և գծային։ Կարողունակությունների վրա հիմնված կրթությունը խիստ կարևոր և նպաստավոր է 21-րդ դարի հմտությունների զարգացումը խթանելու համար, այդ թվում՝ քննական մտածողություն, ճկունություն, ստեղծարարություն և համագործակցություն, պահանջում է հարցախույզ ու մարդակենտրոն դասավանդում, և կենտրոնանում է ուսումնական պրոցեսի վերջնարդյունքների (գիտելիք, հմտություններ և վերաբերմունք), այլ ոչ թե այն բանի վրա, թե աշակերտներն ի՛նչ պետք է սովորեն տվյալ ժամանակահատվածում՝ ավանդականորեն սահմանված առարկայական բովանդակության շրջանակներում։

Առկա հնարավորությունների մասով, վերոնշյալ մոտեցումները չեն կարող կյանքի կոչվել միայն ֆորմալ կրթական համակարգում, հատկապես եթե հաշվի ենք առնում այդ համակարգի ֆինանսավորումը, մոտեցումները, ունեցած մարդկային կապիտալը։ Այդ բացերը կարող են լրացվել ակտիվ՝ ոչ ֆորմալ կրթական կենտրոնների, նախաձեռնությունների, խմբերի կայացման պարագայում, որոնք փոխգործակցության դաշտում կաշխատեն նույն ֆորմալ համակարգի հետ։

Տարածքի բոլոր բնակավայրերում կրթության տրամադրումը հիմնականում սահմանափակվում է կրթության առաջնային օղակներում՝ դպրոցներում տրամադրվող կրթությամբ։ Տարածքի 21 բնակավայրերում գործում է 19 դպրոց, այդ թվում՝ 16 միջնակարգ, 2 հիմնական (Սարագյուղ և Կարմրավան բնակավայրեր) և 1 տարրական (Հովտուն բնակավայր)։ Մեծ Սեպասար և Փոքր Սեպասար բնակավայրերի համար գործում է մեկ միջնակարգ դպրոց։ Ըստ համայնքապետարանների տվյալների՝ տարածքի բոլոր դպրոցների ընդհանուր աշակերտների թիվը կազմում է 1464։

Տարածքի բնակավայրերում գործում են 9 նախակրթարան և մանկապարտեզ, որտեղ հաճախում են ընդհանուր 275 երեխա։ Բնակավայրերի մեծ մասում չեն գործում նախակրթարաններ երեխաների քիչ քանակի և շենքային պայմանների բացակայության պատճառով։

Տարածքի խոշոր բնակավայրերում՝ Աշոցքում և Ամասիայում, գործում են նաև «Աշոցքի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը և «Ամասիայի արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ը, որոնք սպասարկում են նաև շրջակա բնակավայրերի երեխաներին։ Ամասիայում գործում է նաև «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը։ Տարածքի բնակավայրերում արտադասարանական և ոչ ֆորմալ կրթությունը հիմնականում ապահովվում է տեղական հասարակական կազմակերպությունների և երիտասարդական խմբերի կողմից, որոնք չեն գործում բոլոր բնակավայրերում և հնարավորություն չունեն իրենց ծառայությունները հասանելի դարձնելու տարածքում բնակվող բոլոր երեխաների ու երիտասարդների համար։

Տարածքի բնակավայրերում բարձր գործազրկության մակարդակը (գրանցված գործազուրկների թիվը՝ 1147), ինչպես նաև աղքատության ցուցանիշները ցույց են տալիս տարածքի բնակչության խոցելիության բարձր մակարդակը, ինչն արտահայտվում է հիմնականում հաշմանդամություն ունեցող անձանց,

կենսաթոշակառուների, երիտասարդության ու կանանց շրջանում և հետևանք է նաև վերջիններիս նկատմամբ կարծրատիպային մոտեցումների ու ոչ ներառական միջավայրի առկայության: Ըստ տվյալների՝ տարածքում կենսաթոշակառուների թիվը կազմում է 1422, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ 294: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ սոցիալական ծառայություններ մատուցող անձանց (հոգեբան, լոգոպեդ, սոցիալական աշխատող և այլն) թիվը շատ ցածր է և երբեմն սահմանափակվում է միայն համայնքապետարաններում սոցիալական աշխատողի առկայությամբ: Ինչպես փաստում է Տարածաշրջանային վերլուծության և ելակետային գնահատման զեկույցը[5], համայնքապետարաններում աշխատող սոցիալական աշխատողներից շատերը չունեն համապատասխան մասնագիտական որակավորում, ինչը համարվում է որակյալ սոցիալական ծառայության կարևորագույն նախապայմաններից մեկը: Միևնույն ժամանակ, սոցիալական աշխատողի միջամտություն պահանջող դեպքերի թիվը շատ մեծ է, իսկ այս նպատակի համար հատկացված ռեսուրսը՝ սահմանափակ: Տարածքի բնակավայրերում մեծ պահանջարկ է առկա որակավորված սոցիալական աշխատողների, որոնք որակյալ ծառայություններ կմատուցեն սոցիալապես անապահով խոցելի խմբերին: Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների բացակայության և/կամ ինստիտուցիոնալ կարողությունների պակասի պատճառով տարածքում խոցելի խմբերի սոցիալական ներառման գործառույթը հիմնականում իրականացվում է տեղական ու միջազգային կազմակերպությունների կողմից, որոնց ռեսուրսները ևս սահմանափակ են և չեն ընդգրկում բնակչության լայն շրջանակներին: Տարածքում սոցիալական ներառումը խթանելու համար ծրագրեր են իրականացրել և իրականացնում «Կարիտաս» ԲՀԿ-ն, «Վորլդ Վիժն Հայաստանը» (ՎՎ) և տեղական մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք ոչ միայն անմիջական աջակցություն են ցույց տալիս խոցելի խմբերին, այլ նաև պատրաստում և վերապատրաստում են համապատասխան մասնագետների: ՎՎ-ը ծառայություններ է մատուցում տարածքի 21 բնակավայրերից 15-ում (Ամասիա, Աշոցք, Արեգնադեմ, Բանդիվան, Բավրա, Բյուրակն, Գտաշեն, Թավշուտ, Զույգաղբյուր, Կրասար, Մեծ Սեպասար, Ղազանչի, Սիզավետ, Ողջի և Փոքր Սեպասար բնակավայրերում)՝ իրականացնելով «Երեխաների հովանավորության» ծրագիրը և խթանելով բնակավայրերի երկարաժամկետ զարգացմանն ուղղված աշխատանքները: «Վորլդ Վիժն Հայաստանը» Սեպասարում և Աշոցքում հիմնել է ցերեկային կենտրոններ, որտեղ դժվարին պայմաններում ապրող 80 երեխա անցնում են դասապատրաստում, ստանում առողջ սնունդ ու օգտվում են հոգեբանի, լոգոպեդի և հատուկ մանկավարժների ծառայություններից:

### 2.1.3 Զբոսաշրջություն

Շիրակի մարզը՝ որպես զբոսաշրջային ուղղություն, վերջին տարիներին սկսել է ակտիվորեն զարգանալ, սակայն շեշտադրում հիմնականում կատարվում է քաղաքային զբոսաշրջության վրա՝ չնայած այն հանգամանքին, որ գյուղերը ևս ունեն զբոսաշրջության խթանման մեծ ներուժ, ինչը նաև ամրագրված է Շիրակի

[5] հղում

մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգում[6]: Ըստ հայեցակարգի՝ տարվա կտրվածքով մարզ այցելող զբոսաշրջիկների (այդ թվում նաև՝ ներքին զբոսաշրջիկների) մոտավոր ընդհանուր թիվը տարբեր տվյալներով տատանվում է 30000-35000-ի սահմաններում, որոնց բացարձակ մեծամասնությունը չի գիշերում մարզի տարածքում, այսինքն՝ բավարար գումար չի ծախսում տեղում:

Հայեցակարգը, ի թիվս զբոսաշրջային այլ ուղղությունների, որպես հիմնական զարգացման թիրախ է սահմանում ագրոտուրիզմը, էկոտուրիզմը, գաստրոտուրիզմը, արկածային և սպորտային զբոսաշրջությունը: Այս առումով, ՏԱԽ-ի տարածքում ընդգրկված բնակավայրերը ևս ունեն առաջարկվող ծառայություններ ու ապրանքներ, որոնք կարող են օգտագործվել՝ զբոսաշրջիկների համար տարածքն ավելի գրավիչ ու հասանելի դարձնելու համար: Հարուստ մշակութային ժառանգությունը, որն իրենց հետ բերել են տեղացիները, և որն արտահայտվում է հետաքրքիր ավանդույթներով, ճաշատեսակներով ու կենցաղավարությամբ, տարածքի համար զբոսաշրջային մեծ ռեսուրս կարող է ծառայել, սակայն այն չի օգտագործվում:

Տարածքում կան բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, ինչպիսիք են՝ Քարե դուռ՝ քարանձավային բնակատեղին Զրաձորում, Բանդիվանի ամրոց, Դողդոջուն կաղամախու ծառուտներն ու ջրվեժն Ամասիայում, Մեծ Սեպասար և Կրասար գյուղերի մոտ միախառնվող Ախուրյան և Աշոցք գետերը, Ախուրյանի կիրճը, որն Արփի ազգային պարկի մաս է:

Տարածքում քիչ զարգացած են զբոսաշրջային ենթակառուցվածքները, սակայն կան որոշ ենթակառուցվածքներ, որոնք կարող են օգտագործվել, ինչպիսիք են Մեծ Սեպասար և Աշոցք գյուղերում գործող հյուրատները (Մեծ Սեպասարի տուրիզմի կենտրոն և Միքայելյանների հյուրատուն), որոնք իրենց ծառայություններն են առաջարկում զբոսաշրջիկներին, սակայն առաջարկվող ծառայությունները հիմնականում սահմանափակվում են գիշերակացի կազմակերպմամբ: Ղազանչիում գործում է Արփի լիճ ազգային պարկի այցելուների կենտրոնը, որը ևս լավ հնարավորություն է այցելուներին ուղղորդելու տարածքում առկա զբոսաշրջային վայրեր ու առաջարկելու ծառայություններ, որոնք տեղացիները կարող են տրամադրել:

ՏԱԽ-ի տարածքում հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, ինչը հնարավորություն ու հեռանկարներ է ստեղծում գյուղատնտեսական զբոսաշրջության զարգացման համար: Ագրոտուրիզմն ամենամասսայականներից մեկն է աշխարհում, ինչին ձգտում են հատկապես քաղաքային բնակիչները, որոնք պատրաստ են վճարել որոշ ժամանակ գյուղական միջավայրում ապրելու, բնական ծագմամբ և էկոլոգիապես մաքուր սնունդ ճաշակելու, վայրի բնության մեջ գտնվելու, իրենց ուժերով նոր, դժվարամատչելի կամ հեռավոր վայրերը բացահայտելու համար: Զբոսաշրջիկների համար հետաքրքիր արտադրանք կարող է ծառայել նաև տարածքի մարդկանց կենցաղավարության մաս կազմելը՝ կով կթելը, ոչխարներին ու այծերին կերակրելը, ձիերին պայտելը, վարուցանքի ու բերքահավաքի իրականացումը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների

[6] Shirak_Tourism_concept (mtad.am)

պատրաստումը, առհասարակ տեղացիների նիստուկացը դիտարկելն ու դրա մաս կազմելը: Այս առումով տարածքի գյուղերը մեծ հնարավորություն ունեն, քանզի շատ հեռու չեն գտնվում Գյումրուց, որը վերջին տարիներին գրանցել է զբոսաշրջության մեծ հոսք: Գյումրի այցելող զբոսաշրջիկները կարող են դառնալ պոտենցիալ սպառող տեղացիների կողմից առաջարկվող գյուղատնտեսական զբոսաշրջության ծառայությունների:

Գյուղատնտեսական զբոսաշրջության մաս է կազմում նաև զբոսաշրջության մեղվաբուծական ուղղությունը, երբ զբոսաշրջիկները մասնակցություն են ունենում մեղվաբուծության գործընթացներին, համտեսում և/կամ գնում են էկոլոգիապես մաքուր մեղր ու բուժիչ հատկություններ ունեցող մեղվամթերքներ, այս առումով ևս տարածքի ալպիական գոտիներով հարուստ բնակավայրերը, որտեղ զարգացած է մեղվաբուծությունը, հնարավորություն ունեն զբոսաշրջիկներին նմանատիպ ծառայություններ առաջարկելու:

Մյուս կողմից՝ տարածքի զբոսաշրջային պոտենցիալը գնահատելիս չենք կարող հաշվի չառնել նաև բնակլիմայական պայմանները, հատկապես խստաշունչ ձմեռներն ու ձյան առկայությունը: Ձմեռային զբոսաշրջության զարգացման առումով տարածքն ունի մի քանի անվիճելի առավելություններ, որոնցից հիմնականներն են՝ սեզոնին՝ ձյան մշտական առկայությունը, արևոտ օրերի մեծ քանակը ձմռան ամիսներին, ինչը մեղմում է ցրտի գործոնը, հարմար բնական լանդշաֆտները՝ ձմեռային մարզաձևերի զարգացման համար, ճանապարհա-տրանսպորտային կայացած ենթակառուցվածքներն ու աշխարհագրական բարենպաստ դիրքը: Զբոսաշրջության արկածային և սպորտային ուղղության զարգացման համար արդեն իսկ քայլեր արվել են, ինչի արդյունքն է Աշոցքում գործող դահուկային կենտրոնը, որն ունի բավականաչափ ռեսուրս և ենթակառուցվածքներ զբոսաշրջիկների ձմեռային ժամանցն ապահովելու համար: Ձմեռային սպորտային զբոսաշրջության ծառայություններ են առաջարկվում նաև Ամասիայում, մասնավորապես՝ սնոուբորդինգ: Չնայած առաջարկվող ծառայություններին՝ դեռևս կարիք կա տարածքում արկածային ու սպորտային զբոսաշրջության մասսայականացման, ի դեպ, ոչ միայն ձմեռային սպորտաձևերի:

Ամռան ամիսներին ևս արկածային զբոսաշրջությունը կարող է խթանվել՝ հաշվի առնելով տարածքում արշավների համար բարենպաստ պայմաններով վայրերը, Ախուրյան գետի առկայությունը, որը ներկայումս օգտագործվում է տեղական և մարզային որոշ կազմակերպությունների կողմից, որոնք զբոսաշրջիկներին առաջարկում են կայակինգի և կանոյինգի ծառայություններ:

Այսպիսով, տարածքի զբոսաշրջային ներուժի օգտագործման ներկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ծառայությունները ոչ բավարար են զբոսաշրջիկներին ամբողջական փաթեթներ առաջարկելու համար: Տարածքում առկա են զբոսաշրջության խթանման նախադրյալներ, որոնք չեն օգտագործվում տեղացիների կողմից՝ տնտեսական զարգացման հասնելու համար:

## 2.1.4 Փոքր և միջին ձեռնարկատիրություն (ՓՄՁ)

Տարածքում տնտեսության զարգացման կարևոր ճյուղերից մեկն է նաև սպասարկման ու վերամշակման ոլորտում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրությունները (ՓՄՁ), որոնք հիմնականում կենտրոնացված են Աշոցք ու Ամասիա բնակավայրերում, քանի որ վերջիններս ունեն ավելի լավ զարգացած ենթակառուցվածքներ և ավելի մեծ բնակչություն, որ առաջարկվող ապրանքների ու ծառայությունների հիմնական սպառողն են, նաև պոտենցիալ աշխատակիցները:

Համայնքապետարաններից ստացված և համայնքային զարգացման ծրագրերից վերցված տվյալների համադրումը ցույց է տալիս, որ տարածքում գործում են ընդհանուր թվով **69 ՓՄՁ-ներ**, որոնց մեծ մասը՝ **55**-ը, բաժին է հասնում առևտրային սեկտորին, ինչն ընդգրկում է հիմնականում մանրածախ առևտուրը: Արտադրությամբ զբաղվող ՓՄՁ-ների թիվը **5**-ն է, իսկ ծառայություններ մատուցողներինը՝ **9**-ը (Գծապատկեր 7): Արտադրությամբ զբաղվող ՓՄՁ-ները հիմնականում ներգրավված են կաթնամթերքի վերամշակման, հացաբուլկեղենի և բրդի արտադրության ոլորտում: Մինչդեռ ծառայությունները սահմանափակվում են վարսավիրական և ավտոսպասարկման շրջանակներում: Տարածքի բոլոր բնակավայրերում գործում է առնվազն 1 առևտրային կետ, բացի Հովտուն և Ջրաձոր բնակավայրերից, որտեղ առևտրային կետեր ընդհանրապես չկան:

Ըստ տվյալների՝ ՓՄՁ-ներում ընդգրկված աշխատողների ընդհանուր թիվը հասնում է **456**-ի, որոնց մեզ մասը աշխատում է տարածքում գործող արտադրություններում, մյուս մասը ինքնազբաղ անհատ ձեռնարկատերեր են (Հավելված 3):




Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած առկա ՓՄՁ-ների՝ տեղացիներին մատուցվող ծառայությունների ու ապրանքների հասանելիության խնդիր կա, քանի որ գործող ՓՄՁ-ները հիմնականում կենտրոնացված են խոշոր բնակավայրերում, ուր հասնելը շատ ժամանակ խոչընդոտ է՝ տրանսպորտի բացակայության և ճանապարհների դժվարանցանելիության պայմաններում: Հետևաբար կարիք կա

բնակավայրերում խթանելու ձեռներեցությունը բնակչության առաջնային ծառայությունների մատուցման ոլորտում։

### 2.1.5 Գենդերային իրավիճակի նկարագրություն և վերլուծություն

Շիրակի մարզում սոցիալ-ժողովրդագրական և գենդերային պատկերը, իրավիճակն ու զարգացումները պայմանավորում են գործոնների բարդ ու փոխկապակցված համախումբ, որ դիտարկելի է 2 մակարդակում՝ ընդհանուր/համակարգային և տեղական/լոկալ։

Ընդհանուր/համակարգային գործոններից շատերը ձևավորվել են դեռևս խորհրդային շրջանում, սակայն մինչ օրս պահպանում են ուղղակի և անուղղակի ազդեցություններ։

Գործոններից առաջինը կապվում է Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանի (համընկնում է մարզի ներկայիս տարածքին) զարգացման միտումների և հատկապես քաղաքայնացման/ ուրբանիզացիայի ակտիվ գործընթացների հետ։

Գյումրին (նախկինում՝ Լենինական) Հայաստանի երկրորդ քաղաքն է և համակարգաստեղծ նշանակություն ուներ ողջ շրջանի համար. դեպի այստեղ էր հիմնականում ուղղված գյուղերի ավելցուկային աշխատուժը, որոշակի տարածում ուներ ճոճանակային միգրացիան[7]. բնակարանային ակտիվ շինարարությունը, արդյունաբերության զարգացումը բարենպաստ պայմաններ էին ստեղծում նաև երիտասարդ ընտանիքների սոցիալական շարժունության, ինքնուրույնության համար։ Դինամիկ զարգացող մյուս քաղաքները՝ Արթիկ, Մարալիկ, շրջկենտրոնները՝ Ամասիա, Աշոցք (Ղուկասյան) և Ախուրյան, քաղաքատիպ ավանները, այստեղ գործող արդյունաբերական ձեռնարկություններով նույնպես ապահովում էին սոցիալ-տնտեսական ակտիվ զարգացում։

Այս ամենը, մի կողմից, հավասարակշռում էր տղամարդու և կնոջ մասնակցությունը տնտեսական կյանքին, մյուս կողմից՝ կնոջն ավելի «տեսանելի» էր դարձնում հանրային ու քաղաքական կյանքում[8]։
Երկրորդ գործոնը Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանի գյուղատնտեսության կառուցվածքն է, որն ազդել է գենդերային դերերի և դրանց մասին պատկերացումների վրա։

Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանի գյուղատնտեսության հիմնական ճյուղերը՝ երկրագործությունը (հիմնականում՝ հացահատիկի մշակություն), կարտոֆիլի, ճակնդեղի մշակությունն ու անասնապահությունն էին. կանանց մասնակցությունն այս ճյուղերին ուներ որոշ առանձնահատկություններ։ Հացահատիկային կուլտուրաների մշակությանը նրանց ներգրավվածությունը սահմանափակվում էր

[7] Գ. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975, էջ 146-147։
[8] Մանրամասն տե՛ս Л. Валесян, Производственно-территориальный комплекс Армянской ССР, Ер., 1970, стр. 326-332։ 1980-ական թթ., օրինակ, Լենինականի քաղկոմի առաջին քարտուղարը ողջ հանրապետությունում հայտնի Դոնարա Ասքանազի Հարությունյանն էր։ Խորհրդային Միությունը քվոտայավորում էր նաև բոլոր մակարդակի ընտրովի մարմիններում կնոջ ներգրավվածությունը։ Դժվար է ասել, թե իրականում ինչ խնդիր էին լուծում այս գործողությունները, սակայն որոշակի ազդեցություն, այնուամենայնիվ, ունենում էին։

հիմնականում բերքահավաքին մասնակցությամբ, իսկ անասնապահությանը՝ կաթնատնտեսությունը կազմակերպելով։ Կարտոֆիլի, ճակնդեղի մշակությանը կանանց մասնակցությունն ավելի ակտիվ էր ու մեծ ջանքեր պահանջող։

Ըստ այդմ, կնոջ՝ գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցության տեսանկյունից Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանը տարբերություններ ուներ Արարատյան դաշտի, այգեգործական և բանջարաբուծական այլ շրջանների համեմատությամբ, որտեղ կնոջ զբաղվածությունն ավելի շատ էր, ծանրաբեռնվածությունը՝ ավելի մեծ։

Ավելցուկային աշխատուժը կլանում էր հիմնականում Գյումրին, որտեղ գյուղատնտեսությունից աստիճանաբար օտարվող երիտասարդությունը կարողանում էր լուծել նաև սոցիալական շարժունության, կրթության, բնակարանի հարցերը։

Մարզի սոցիալ-ժողովրդագրական և գենդերային պատկերի վրա էական ազդեցություն ունեցավ 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը՝ խաթարելով կայունացած պատկերը։ Երկրաշարժի սոցիալ-տնտեսական հետևանքների ազդեցությունը տևեց տասնամյակներ և հաղթահարված չէ մինչ օրս։

Մեծ է երկրաշարժի ու անկախությանն անմիջապես հաջորդած ճգնաժամի ազդեցությունը նաև գենդերային պատկերի ու զարգացումների վրա։ Մարզի քաղաքները, առաջին հերթին՝ Գյումրին, կորցրին համակարգային նշանակությունը, իսկ կանայք ու տղամարդիկ դուրս մղվեցին զբաղվածության նախկին դաշտերից։ Ձևավորված սոցիալ-մասնագիտական վակուումն ուղեկցվեց զանգվածային արտագաղթով ու արտագնացությամբ։

Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական բնութագրերի վրա էական ազդեցություն ունեցավ նաև 1991թ. իրականացված հողի սեփականաշնորհման և բարեփոխումների գործընթացը, որ փոխեց տնտեսական գործունեության կազմակերպման հիմքերը գյուղական միջավայրում՝ նախկին խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների փոխարեն ձևավորելով անհատական գյուղացիական և կոլեկտիվ տնտեսություններ։ Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության ոլորտի ճգնաժամը հաղթահարված չէ մինչ օրս՝ շարունակելով ազդել մարզի սոցիալ-ժողովրդագրական և գենդերային պատկերի վրա։

Սեփականաշնորհումը գենդերային և հատկապես կնոջ մասնակցության տեսանկյունից ունեցավ մեկ այլ կարևոր ազդեցություն։

Խորհրդային համակարգում կնոջ հանրային «տեսանելիությունը» ապահովվում էր նաև նրան տնտեսության ոլորտ ներգրավելով։ Սեփականաշնորհումից հետո կինը, կարելի է ասել, դարձավ անտեսանելի, սահմանափակվեց ընտանիքով ու սեփական տնտեսության շրջանակներում զբաղվածությամբ, որը տնտեսական արդյունավետության, արդյունքի, բյուջեին ունեցած մասնակցության տեսանկյունից չէր չափվում։ Սա այսօրվա պատկերացումների վրա ազդող կարևոր փոփոխություն էր։

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Շիրակի մարզում ներկա վիճակի և ընդհանուր զարգացումների վրա ազդել ու ազդում է առնվազն երեք կարևոր գործոն.

*Ա. Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումների, քաղաքայնացման գործընթացների միտումներ և դրանց կտրուկ փոփոխություն վերջին երեսնամյակում.*

*Բ. 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժով, սոցիալ-տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ արտագաղթի ու արտագնացության բարձր ծավալներ.*

*Գ. գյուղատնտեսության ճյուղային կառուցվածք՝ կնոջ մասնակցության որոշակի առանձնահատկություններով:*

Այս և այլ գործոնների ազդեցության հետևանքով Շիրակի մարզում այսօր ինչպես սոցիալ-ժողովրդագրական, այնպես էլ գենդերային պատկերը որոշակիորեն խախտված է:

Մարզը հանրապետությունում աղքատության և ծայրահեղ աղքատության ամենաբարձր տեսակարար կշիռն ունի: Աղքատները կազմում են բնակչության 48.4%, ծայրահեղ աղքատները՝ 1.7%[9]: Բարձր են արտագնա աշխատանքի մեկնողների ցուցանիշները, ինչն արձանագրված է նաև պաշտոնական փաստաթղթերում: 3447 բնակիչ ունեցող Պեմզաշեն գյուղից, օրինակ, 1000-ից ավել տղամարդ մեկնում է արտագնա աշխատանքի:10

Հետազոտությունները ցույց են տալիս, որ խոցելի են նաև կանայք, որոնց վերաբերող ցուցանիշներով մարզը բարենպաստ վիճակագրություն չունի: ԱՎԾ տվյալներով, 2020թ. զբաղվածները մարզում կազմել են 81.4 հազ. մարդ, որից 41.7 հազ. տղամարդ և 39.7 հազ. կին[11]: Նույն հրապարակման համաձայն, գյուղատնտեսական ոլորտներում զբաղվածները կազմել են 28 հազ., իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտների զբաղվածները՝ 53.4 հազ. մարդ, այսինքն՝ շուրջ երկու անգամ ավել[12]: Ի տարբերություն այս ցուցանիշների՝ գյուղատնտեսության ոլորտում անհամեմատ ավելի բարձր է ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշը: Այսպես, 2020թ. Շիրակի մարզի 35.4 հազար ոչ ֆորմալ զբաղվածներից 28.5 հազ. ներգրավված է եղել գյուղատնտեսական զբաղմունքներում[13]:

Կանանց ակտիվությանն առնչվող խնդիրներ արձանագրվում են նաև զբաղվածության մակարդակի տվյալները դիտարկելիս: 2020թ. տվյալների համաձայն՝ մարզում զբաղվածություն ունի աշխատանքային ռեսուրսների ընդամենը 41.2%-ը, տղամարդկանց համապատասխանաբար 45.3%-ը և կանանց 37.6%-ը[14]: Շիրակի մարզում բարձր է նաև գործազրկության մակարդակը՝ 17.3%, իսկ կանանց շրջանում՝ 12.9%: Գյուղական բնակավայրերում, քաղաքների համեմատությամբ, գործազուրկների տեսակարար կշիռը ավելի ցածր է՝ 9.7%:

[9] ՀՀ Շիրակի մարզը թվերով, 2021, էջ 147 // https://www.armstat.am/file/doc/99527583.pdf:
[10] Պեմզաշեն համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիր, էջ 8// 24949.pdf (mtad.am)
[11] ՀՀ Շիրակի մարզը թվերով, 2021, էջ 60 // https://www.armstat.am/file/doc/99527583.pdf:
[12] Նույն տեղում, էջ 61:
[13] Նույն տեղում, էջ 62:
[14] Նույն տեղում, էջ 65:

Պաշտոնապես որպես գործազուրկ գրանցված կանանց թիվը (8198) գրեթե կրկնակի բարձր է տղամարդկանց թվից[15]։

Ծրագրում ներառված և հետազոտության ընթացքում դիտարկված համայնքները (Աշոցք և Ամասիա խոշորացված, ինչպես նաև Ձիթհանքով, Քարաբերդ, Լանջիկ, Սառնաղբյուր, Պեմզաշեն, Լեռնակերտ, Հառիճ, Նահապետավան) տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և գենդերային պատկերի տեսանկյունից էական տարբերություններ մարզի այլ համայնքների համեմատությամբ չունեն։ Որոշակի տարբերություններ կան ըստ արտագնա աշխատանքի մեկնողների թվի (Սառնաղբյուրն ու որոշ համայնքներ ավանդաբար համարվել են «խոպանչիների» գյուղեր)։

Ուսումնասիրված համայնքների փաստաթղթերում, զարգացման ծրագրերում գենդերային մանրամասն վիճակագրություն չի ներկայացվում, հիմնականում բերվում են այն տվյալները, որ հետագայում ընդհանրացվում ու ներկայացվում են Ազգային վիճակագրական ծառայության կողմից[16]։ Գենդերային մանրամասն վիճակագրության հավաքագրման տեսանկյունից ևս մեկ խնդիր է այն, որ 2021թ. տեղի ունեցավ հերթական խոշորացումը։ Ամասիա ու Աշոցք խոշորացված համայնքներն ըստ էության նախկին շրջաններն են, իսկ երրորդ Տարածքային ակտիվ խմբի մաս կազմող համայնքներից մի քանիսը՝ Անի, իսկ մյուսները Արթիկ խոշորացված համայնքի մեջ են մտնում։ Խոշորացումից հետո նոր ընտրությունների արդյունքում փոփոխություններ է կրել նաև ավագանիների կազմը, քանի որ ընտրությունը տեղի է ունեցել ըստ կուսակցական ցուցակների՝ համամասնական սկզբունքով։ Ըստ նոր ընտրությունների արդյունքների՝ Աշոցք խոշորացված համայնքի ավագանու 13 անդամից 5-ն է կին, Ամասիա խոշորացված համայնքի ավագանու 8 անդամից 2-ը, կին է նաև համայնքի ղեկավարը[17], Արթիկ խոշորացված համայնքի 21 անդամից 6-ն է կին և Անի խոշորացված համայնքում ավագանու 15-հոգանոց կազմում կին չկա[18]։

Այս վիճակագրությունն ընդամենն արտացոլում է գենդերային իրավիճակը մարզում և առանձին համայնքներում, սակայն հնարավորություն չի տալիս խորքային, մանրամասն ու համակողմանի վերլուծությունների, հատկապես երբ փորձ է արվում գենդերային իրավիճակն ու զարգացումների միտումները դիտարկելու տարբեր մոտեցումների, օրինակ, ներկայում լայն տարածում ունեցող «Գենդեր և զարգացում» մոտեցման համատեքստում, որը հստակ առանձնացնում է կանանց ու տղամարդկանց ոչ միայն իրավունքների, պարտականությունների, այլև պատասխանատվությունների ներդաշնակ բաշխվածության առաջնայնությունը։

Հետազոտության ընթացքում անցկացված ֆոկուս-խմբային հարցումները, ինչպես նաև փաստաթղթերի վերլուծությունը հնարավորություն տվեցին արձանագրելու,

[15] Նույն տեղում, էջ 67-69։
[16] Տե՛ս օրինակ Ամասիա համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը. mtad.am։
[17] Այս համայնքում ընտրությունների արդյունքները վիճարկվում են, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով ընտրվածները հրաժարվել են մանդատներից, սակայն ԿԸՀ-ն ճանաչել է ընտրությունների արդյունքները։
[18] Մանրամասն տե՛ս Շիրակի մարզպետարանի կայքը։ Շիրակի մարզպետարան (mtad.am)

որ մարզում, այդ թվում՝ ընտրված կլաստերներում լուրջ խնդիրներ կան հենց «գենդեր և զարգացում» մոտեցման համատեքստում:

Շարունակում են գերակա մնալ կարծրատիպերը՝ կնոջ ու տղամարդու դերերի մասին «ավանդական» պատկերացումները, ըստ որոնց՝ *տղամարդը, դրսում աշխատելով, եկամուտ ապահովողն է, կինը՝ տնային տնտեսություն վարողը:* Այս ընկալումն իրականում խորքային հիմնախնդիրներ է առաջացնում, քանի որ հաճախ կանայք «կամավոր» զիջում են այն հարթությունները, որտեղ կարող են դերակատարում ունենալ: Սրա վկայությունն է, օրինակ, կանանց ցածր ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում:

Պատկերացումների այս մոդելը խնդրահարույց է մեկ այլ տեսանկյունից ևս. այն, ըստ էության, դուրս է թողնում խորհրդային զարգացումները, որոնք կնոջն ավելի տեսանելի էին դարձրել հանրային ու տնտեսական կյանքում:

*Կնոջ ու տղամարդու դերերի մասին «ավանդական» պատկերացումները սահմանափակում են որոշումների ընդունմանը մասնակցելու կնոջ հնարավորությունները նույնիսկ այն դեպքում, երբ նրա մասնակցությունը տնտեսական կյանքին, տնտեսության կազմակերպմանը շարունակում է մնալ բավականին ակտիվ:* Այսպես, ընտանիքի ներսում, հատկապես եթե տղամարդն արտագնա աշխատանքի է մեկնել, կինը կառավարում է բյուջեն, պլանավորում ծախսերը, սակայն խուսափում է հանրային կյանքին ակտիվ մասնակցությունից: 2020թ. Արցախյան պատերազմի մեծ կորուստներով պայմանավորված՝ կանայք այսօր առերեսվում են նաև պատերազմին զոհված, հաշմանդամություն ստացած կամ վիրավորված տղամարդկանց փոխարինելուն, ինչը նրանցից պահանջում է լրացուցիչ էմոցիոնալ և կազմակերպչական ջանքեր ու հմտություններ: Այնինչ կրթության և մշակութային նորմերով պայմանավորված՝ կանայք հաճախ անպատրաստ են գտնվում այս «նոր դերերին», սակայն պարտադրված ստանձնում են «առաջնորդությունը»՝ չունենալով դրա համար բավարար հմտություններ:

Կանայք թեպետ ունեն իրավական հնարավորություն, բայց սովորաբար չեն մասնակցում հանրային կառավարմանը և համայնքային որոշումների ընդունմանը: Այս իրավիճակը հաշվի առնելով՝ կանանց հանրային մասնակցության խթանումը պետք է խրախուսվի համայնքային կառավարման մարմինների կողմից, քանի որ կանայք սովորաբար համայնքների բնակչության կեսն են կազմում, և առանց նրանց կարիքների ու առաջնահերթությունների հաշվարկման, մշակված զարգացման ծրագրերը չեն կարող արդյունավետ լինել:

«Ավանդական» պատկերացումների այս մոդելից բխում են նաև մնացյալ սահմանափակումները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ *գյուղատնտեսության այն մոդելը, որ այսօր գոյություն ունի մարզում, ըստ այդմ նաև ընտրված համայնքներում, հեռանկարային չէ:*

Ցածր բերքատվությունը, կերային բազայի ապահովման խնդիրները, իրացման շուկայի սահմանափակությունն ու իրացման բարդությունները, մթերքի ցածր

գները բերում են նրան, որ գյուղատնտեսությունն ընտանիքների մեծ մասի համար ապահովում է պարզ վերարտադրություն: Ըստ այդմ, և՛ տղամարդկանց, և՛ կանանց ներգրավվածությունը նման մոդելում ի սկզբանե ունի ցածր արդյունավետություն:

Մարզի գյուղատնտեսության այսօրվա առանձնահատկություններից է այն, *որ կնոջ մասնակցությունը երկրագործական աշխատանքներին նվազել է խորհրդային շրջանի համեմատությամբ:* Անասնապահության ոլորտում ևս փոփոխություններ կան, քանի որ շատ տնտեսություններ կաթը չեն վերամշակում, այլ հանձնվում է մթերող կազմակերպություններին:

Փոխարենը կինը լրացուցիչ պատասխանատվություն ու ծանրաբեռնվածություն է ստանձնում այն ընտանիքներում, որտեղ տղամարդը պարբերաբար մեկնում է արտագնա աշխատանքի:

Հարցումներն ու դիտարկումները ցույց տվեցին, որ ընտանիքում, լայն առումով՝ համայնքում, կնոջ այս գործառույթի մասին պատկերացումներն ու ընկալումները բավարար չափով գիտակցված չեն, հաճախ ընկալվում են որպես սովորական՝ ըստ այդմ սահմանափակելով կնոջ տնտեսական ակտիվության հնարավորությունները նույնիսկ այն դեպքում, երբ պետական ու միջազգային կառույցներն ու կազմակերպությունները նման հնարավորություններ առաջարկում են:

Կնոջ տնտեսական սահմանափակ ակտիվությունը իր հերթին սահմանափակում է գոյություն ունեցող տնտեսական մոդելի փոփոխության, կատարելագործման, բազմազանեցման հնարավորությունները:

Գյուղատնտեսությունը Շիրակի մարզում, կարելի է ասել, շարունակում է մնալ «տղամարդկային դեմքով, առանց տղամարդու բավարար մասնակցության»:

«Կանացի դեմքը» այս դեպքում ոչ միայն գյուղատնտեսության, այլև տնտեսության ու սոցիալ-մշակութային զարգացման բազմազանեցման հնարավորություն է, քանի որ թույլ կտա քարտեզագրել, կատարելագործել ու շրջանառել «ավանդական» գիտելիքը բնության, համայնքի, լանդշաֆտի, պարենային անվտանգության, կենսապահովման տարբեր ռազմավարությունների, ճգնաժամերի պայմաններում դիմադրողականության ստրատեգիաների մասին, որ առկա է ցանկացած գյուղական համայնքում, սակայն բավարար չափով կարևորված չէ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ գիտելիքի կրողը, ինչպես նաև պրակտիկաների հիմնական կենսագործողը կինն է: Գիտելիքի կարևորումն այս տեսանկյունից հնարավորություն կտա, մի կողմից, խորացնելու և ամրապնդելու սերունդների միջև կապերը, իսկ մյուս կողմից՝ նպաստելու մարզի ու դիտարկված միավորների համար կարևոր տարբեր ուղղությունների, այդ թվում՝ զբոսաշրջության զարգացմանը, քանի որ տեղական մշակութային ժառանգության մասին գիտելիքը ևս ունի գենդերային ուղղվածություն:

Այն միաժամանակ հնարավորություն կտա որոշակի ազդեցություն ունենալու Հայաստանի համար կարևորագույն համարվող պարենավտանգության մակարդակի բարձրացման ու պատկերացումների փոփոխության վրա: Տարբեր հետազոտություններով ապացուցված է, որ աղքատությունը, գենդերային

պատկերացումներն ու պարենային անվտանգությունը որոշակիորեն կապված են միմյանց, հատկապես եթե հաշվի ենք առնում պարենային անվտանգության 4 չափումները գենդերային տեսանկյունից.

Հասանելիություն. Սեփական տնտեսություններում սեփականության և վերահսկողության անհավասարությունները բացասաբար են անդրադառնում կանանց պարենային անվտանգության վրա, նվազեցնում են նրանց եկամուտը և սննդի մատչելիությունը:

Կայունություն. Ճգնաժամերի ժամանակ կանայք ու աղջիկները հաճախ ստիպված են լինում կրճատել իրենց սնունդը՝ տան մյուս անդամների համար: Կամ երաշտի, վատ բերքի, բնական աղետների ժամանակ մշակութային նորմերով պայմանավորված տղամարդկանց ավելի հեշտ է լինում թողնել իրենց գյուղատնտեսական դաշտերը և աշխատանք փնտրել այլ վայրերում՝ թողնելով կանանց պայքարելու իրենց ընտանիքները կերակրելու համար:

Օգտագործում. Կանայք սովորաբար պատասխանատու են լինում սնունդ պատրաստելու համար, հետևաբար նրանց դերը առանցքային է դառնում իրենց ընտանիքների սննդակարգի բազմազանության համար:

Մատչելիություն. Սննդի մատչելիությունը պայմանավորված է մշակութային պրակտիկաներով և իշխանության հարաբերություններով: Ըստ էության՝ բավարար քանակով ու որակով սնունդն ավելի քիչ մատչելի է կանանց, քան տղամարդկանց[19]:

Հայաստանում այս տեսանկյունից ևս «շեղված» պատկեր ունենք, քանի որ կինը ընտանիքում հանդես է գալիս որպես ուտեստային բազմազանություն ապահովող այն դեպքում, երբ նվազագույն հնարավորություն ունի տնտեսության կազմակերպման գործընթացի վրա ազդելու ու փոփոխություններ առաջարկելու:

Կանայք, բացի ընտանիքի սնուցումն ապահովելուց, նաև իրականացնում են փոքր ծավալների գյուղատնտեսական աշխատանքներ, հավաքում են վայրի բույսեր և պտուղներ, ապահովում ընտանիքի անդամների ջրի պաշարները, հիգիենան, ունենալով ձեռագործական հմտություններ՝ երբեմն կարողանում են եկամուտ ստանալ, խնամում են երեխաներին ու մեծահասակներին, առհասարակ՝ ընտանիքի անդամներին: Օրինակ, ըստ տարբեր տվյալների, կանայք աճեցնում են ընտանիքում սպառվող ուտեստի և մթերքի մեծ մասը, թեպետ այն դրամայնացված չի չափվում: Կանայք նաև պահում են հավեր, ընտանի այլ թռչուններ, անասնապահության մեջ զբաղվում են կաթնատնտեսությամբ, կաթ են հանձնում, կանթնամթերք պատրաստում վաճառքի ու ընտանիքում օգտագործելու համար: Այս բոլոր տվյալները, որոնք սովորաբար չեն չափվում, ցույց են տալիս, որ կանայք իրենց ընտանիքների տնտեսության մեջ ունեն առանցքային դեր: Նրանք ընտանիքներում ռեսուրսների ոչ ֆորմալ կառավարիչներ են՝ կարևոր դեր ունենալով տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման գործում:

[19] Gender and climate change research in agriculture and food security for rural development, FAO (2013):

Ընտանիքում նման ընկալումների գոյությունը, կնոջ՝ տնտեսական կարևոր գործառույթը «չնկատելը» տարածվում են նաև համայնքային ծրագրերի վրա։

Ինչպես ընտանիքում հարաբերությունները (այդ թվում՝ տնտեսական) կառուցվում են առանց գենդերային՝ տղամարդու և կնոջ դերերի հաշվառման, նույնպես և դրանք, որպես կանոն, դրսևորվում են համայնքային մակարդակում։

«Ավանդական» պատկերացումները, որ գալիս են ընտանիքից, համայնքային մակարդակում ևս շարունակում են մնալ գերակա՝ ըստ այդմ սահմանափակելով այլընտրանքն ու նույն համայնքի զարգացման հնարավորությունները։

Կինը, ըստ ֆոկուս-խմբային հարցումների արդյունքների, կարող է մասնակցել համայնքային ժողովներին, եթե դրանցում քննարկվում են կանանց մասնակցությանն առնչվող հարցեր, սակայն որոշումների կայացման, առավել ևս որոշումների վրա ազդեցության մակարդակում նրա դերակատարումը նվազագույն է։ Պատահական չէ, որ ֆոկուս խմբային հարցումների մասնակիցների կողմից հավանական ծրագրերը կամ նախաձեռնությունները, մեկ-երկու բացառությամբ, գյուղական համայնքի համար ավանդական, սակայն ոչ արդյունավետ զբաղմունքների շրջանակում էին։

*Հետազոտված միավորներում կարևոր խնդիր է նաև տղամարդու և կնոջ դերերի մասին պատկերացումների և իրական զարգացումների ու հնարավորությունների միջև խզումը։*

Այս իրողությունն ունի տարբեր պատճառներ։ Երևանում բարձրագույն կրթություն ստացող գյուղական երիտասարդներից շատերը վերադառնալու ցանկություն չունեն և որպես կանոն ձգտում են անպայման հաստատվել Երևանում։ Նույն ձգտումն ունեն նաև ծնողները։ Այս միտումը նոր չէ և բնորոշ է գյուղական միջավայրի զարգացումների համար ընդհանրապես։ Վերջին տարիներին, սակայն, կան նաև այլ միտումներ, երբ գյուղը գրավիչ է դառնում կյանքի որակի, էժանության, էկոլոգիական ավելի բարենպաստ պայմանների շնորհիվ այն դեպքում, երբ աշխատանքը ցանցային է, հեռավար։ Այսօր Հայաստանում հազարավոր երիտասարդ ծրագրավորողներ աշխատում են արտասահմանյան ընկերությունների համար առանց տնից դուրս գալու։ Գյուղական կյանքի առավելությունները, համապատասխան ենթակառուցվածքներ ունեցող որևէ մերձակա քաղաքի (Գյումրի) առկայության դեպքում, կարող են դառնալ ցանցային մասնագիտություններ ունեցողներին գրավելու լրացուցիչ խթան։ Այսինքն՝ նման դեպքերի համար առաջնային են դառնում ընտանիքի ու համայնքի զարգացումն ավելի լայն համատեքստում դիտարկելն ու ըստ այդմ գործողություններ նախաձեռնելը։

Հետազոտությունը, ինչպես նյութերի ուսումնասիրությունը, հնարավորություն տվեց առանձնացնելու գենդերային ներդաշնակ զարգացման տեսանկյունից կարևոր ևս մեկ բաղադրիչ, *որն ուղղակիորեն կապվում է ընտանիքի ու ընտանիքի մասին պատկերացումների վերաիմաստավորման հետ։*

Արտագնա աշխատանքի բացասական ազդեցությունները, դրականի կողքին, ակնհայտ են և առնչվում են առաջին հերթին երեխաների դաստիարակության ոչ բավարար մասնակցությանը: Մյուս կողմից՝ արտագնացությունից ստացված եկամուտների հիմնական մասն ուղղակի սպառվում է տեղում՝ չվերածվելով ներդրման ու ընտանիքի բարեկեցության աճի աղբյուրի: Ֆոկուս-խմբային հարցումների մասնակիցներն ընդամենը 1-2 դեպք կարողացան հիշել, երբ արտագնացությամբ ձեռք բերված եկամուտը տեղում դարձել է ներդրում: Այս իրողությունը խորքային դիտարկման դեպքում ուղղակի կապ ունի գենդերային դերերի մասին պատկերացումների հետ, քանի որ կինը չի ընկալվում որպես տնտեսական ակտիվության կրող, բիզնես նախաձեռնությունների ունակ, ինչն իր հերթին սահմանափակում է ոչ միայն կնոջ, այլև ընտանիքի հնարավորությունները:

Ընտանիքի մասին պատկերացումների վերաիմաստավորումը, հաջողված, դրական օրինակների հանրայնացումը թույլ կտան նպաստել նաև դերերի արդյունավետ բաշխման վրա հիմնված նախաձեռնությունների աճին, ընտանեկան ձեռնարկատիրության զարգացմանը:

Իրավիճակի վերլուծությունը, այսպիսով, թույլ է տալիս արձանագրել, որ Շիրակի մարզում կանանց խնդիրներն ունեն հետևյալ ընդհանուր պատկերը.

- որոշումների ընդունման մեջ սահմանափակ մասնակցություն (ապակե առաստաղ),
- որոշակի գործողություններում մասնակցության սահմանափակումներ (ապակե պատեր),
- կարողությունների զարգացման շարունակական կատարելագործման սահմանափակ հնարավորություններ,
- չվճարվող հոգատարության ու խնամքի աշխատանքի անհամաչափ մեծ բաժին,
- խոցելի աշխատանքային պայմաններ,
- գենդերային կարծրատիպեր ու մշակույթով պայմանավորված թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց վերագրվող սահմանափակող դերեր:

## 2.1.6 Բնապահպանություն

Համայնքների փոխակերպումը կենսունակ, կայուն, ճկուն ու «խելացի» բնակավայրերի դարձել է համաշխարհային գերակայություն: Այս համատեքստում համայնքների արդյունավետ կառավարումը կարևոր առաջնահերթություն է, որը պետք է հաշվի առնի շրջակա միջավայրի որակը, սոցիալական արդարությունը և կայուն զարգացումը: Սա արտացոլված է տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակով տեղի ունեցող մի շարք քաղաքական նախաձեռնություններում, ինչպես նաև միջազգային մակարդակով ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների մեջ (մասնավորապես՝ ԿԶՆ 11): Հայտնի իրողություն է, որ բազմաթիվ խնդիրների լուծումն աշխարհի շատ պետություններ տեսնում են համայնքների վերաիմաստավորման, դիմակայուն փոխակերպման, իրականացվող նորարար ու առավել ճկուն լուծումներով:

Որպես առաջարկների առանցքում ընկած հիմնական հայեցակարգ՝ մենք դիտարկել ենք բնահեն լուծումները (NBS), որոնք մեկտեղում են սոցիալ-էկոլոգիական հարմարվողականության և կենսակայունության նոր ուղիներ՝ հավասարապես հենվելով սոցիալական, բնապահպանական և տնտեսական ոլորտների վրա:

«Բնահեն լուծումներ» հասկացությունն առաջին անգամ հստակ սահմանվել է «Հորիզոն 2020» փորձագիտական խմբի վերջնական զեկույցում (ԵՀ, 2015 թ.): Եվրոպական հանձնաժողովը բնահեն լուծումները սահմանում է որպես լուծումներ, որոնք «ներշնչված են և սատարվում են բնության կողմից, դրանք ծախսարդյունավետ են, միաժամանակ ապահովում են բնապահպանական, սոցիալական և տնտեսական օգուտներ և օգնում են կենսակայունություն ձևավորելու: Նման լուծումներն ավելի ու ավելի բազմազան բնություն և բնական առանձնահատկություններ ու գործընթացներ են ներմուծում քաղաքներ և լանդշաֆտներ՝ տեղայնացված, ռեսուրսարդյունավետ և համակարգային միջամտություններով», ապահովում են էկոհամակարգային մի շարք ծառայություններ: Նմանապես, Բնության պահպանության միջազգային միությունը (ԲՊՄՄ) սահմանում է բնահեն լուծումները որպես «գործողություններ՝ ուղղված բնական կամ փոփոխված էկոհամակարգերի պաշտպանությանը, կայուն կառավարմանն ու վերականգնմանը, որոնք արդյունավետ և հարմարվողական լուծում են առաջարկում հասարակության մարտահրավերներին՝ միաժամանակ նպաստելով մարդու բարեկեցությանն ու կենսաբազմազանության պահպանմանը»:

Այսպիսով, կարելի է ասել, որ բնահեն լուծումների հիմքում կենսաբազմազանության պահպանման և էկոհամակարգային ծառայությունների մատուցման ներդաշնակեցումն է մարդկային առօրյա կենսակերպին:

**Այլ կերպ ասած, բնահեն լուծումներն առաջարկում են ինտեգրված, բազմագործառույթ լուծումներ քաղաքային ու գյուղական համայնքներում առկա մարտահրավերներին՝ բնության և բնական գործընթացներով:**

Բնահեն լուծումներն են ընկած նաև էկոգյուղերի հայեցակարգում, որի հիմնական բաղադրիչներն առաջարկում են ներդնել շահառու համայնքների տեղական զարգացման ռազմավարություններում: Հայեցակարգի հիմքում ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներն են: 1995թ.-ին որպես սոցիալական շարժում մեկնարկած նախաձեռնությունն այժմ Էկոգյուղերի համաշխարհային ցանցում (Global Ecovillage Network, GEN) մեկտեղում է տասնյակ հազարավոր էկոգյուղեր աշխարհի բոլոր մայրցամաքներում:

GEN-ի սահմանմամբ՝ էկոգյուղն ավանդական, միտումնային կամ քաղաքային համայնք է, որը ձևավորվում է կայունության չորս տիրույթներում իրականացվող (հասարակություն, մշակույթ, էկոլոգիա և տնտեսություն) ներդաշնակված գործողություններով, որոնք կոչված են զարգացնելու, վերականգնելու սոցիալական ու բնական միջավայրերը:

Ավանդական էկոգյուղեր են համարվում գոյություն ունեցող համայնքները, որտեղ մասնակցային գործընթացների արդյունքում, վերհանելով համայնքի ուժեղ և թույլ

կողմերը, բնակիչներն իրենք են ձևավորում համայնքի կայուն զարգացման ուղին՝ համադրելով համայնքին հատուկ ավանդական մոտեցումները նորարար լուծումներին։

Միտումնային էկոգյուղերը միավորում են մեկ գաղափարի շուրջ հավաքված, համայնքի կայուն զարգացման գաղափարներին հավատարիմ համախոհների։ Միտումնային էկոգյուղերը հաճախ ստեղծվում են լքված բնակավայրերում՝ վերակառուցելով դրանք։

Բնահեն լուծումների հնարավոր ազդեցությունները կարող են ի հայտ գալ տարբեր ոլորտներում, դրանց առանցքային շրջանակը ներառված է համայնքային կառավարման շրջանակներում՝ նման ոլորտներ։

1. Կլիմայի փոփոխության հարմարվողականություն
2. Բնական ռեսուրսների կառավարում (հող, ջուր, անտառներ, խոտհարքներ և արոտավայրեր և այլն)
3. Բնական և կլիմայական վտանգների կանխարգելում և մեղմացում
4. Կենսաբազմազանության պահպանում
5. Օդի որակի վերահսկում
6. Տարածքների վերականգնում
7. Գիտելիքների և սոցիալական կարողությունների զարգացում քաղաքային կայուն վերակերպման համար
8. Մասնակցային պլանավորում և կառավարում
9. Սոցիալական արդարություն և համախմբվածություն
10. Առողջություն և բարեկեցություն
11. Նոր տնտեսական հնարավորություններ և «կանաչ» աշխատատեղեր

## 2.2 Տարածաշրջանի SWOT վերլուծություն

Հաշվի առնելով ՏԱԽ-ի տարածքի սոցիալ-տնտեսական իրավիճակն ու առանձնացված թեմատիկ առաջնահերթությունները՝ յուրաքանչյուր առաջնահերթության համար անցկացվել է SWOT վերլուծություն, որի արդյունքները կարող եք տեսնել ստորև։

| ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| **S** Ուժեղ կողմեր | **W** Թույլ կողմեր |
| • Աշխարհագրական դիրք (սահմանը Վրաստանի հետ)<br>• Առկա հողային և ջրային ռեսուրսներ<br>• Ոլորտում մասնագիտական գիտելիքներով զինված անհատներ/ֆերմերներ<br>• Միջպետական ճանապարհային կապ<br>• Գյուղմթերքի վերամշակման և գյուղատնտեսական արտադրության գործարանների (կաթնամթերք, հացահատիկաընդեղեն, բրդի) առկայություն<br>• Արժեքավոր մշակաբույսերի աճեցման բավարար պայմաններ<br>• Անասնաբուծություն<br>• Մեղվաբուծություն<br>• Միջազգային դոնորների առկայություն<br>• Ազգային պարկ<br>• Սովորելու, կրթվելու, իրազեկվածությունը բարձրացնելու պատրաստակամությունը<br>• Նորարարական տեխնոլոգիաների և մոտեցումների նկատմամբ հետաքրքրությունը, դրանք ներդնելու պատրաստակամությունը<br>• Հողի բերրիության պահպանման նկատմամբ անհանգստացած, հոգատար վերաբերմունք<br>• Կլիմայական գոտիների և հողատեսքերի բազմազանություն<br>• Անմշակ վարելահողերի առկայություն<br>• Ալպյան, մերձալպյան գոտիների վայրի բուսականություն<br>• Գյումրիի սելեկցիոն կայան<br>• Հողի անալիզի կենտրոն Գյումրիում | • Ձմեռային երկար ժամանակահատված<br>• Գյուղմթերքի՝ իրատեսական արժեքով իրացման բացակայություն<br>• Տեղական շուկայում գյուղմթերքի որակի և արժեքի թույլ վերահսկում<br>• Որակավորված մասնագետների՝ կադրերի պակաս<br>• Գյուղատնտեսական տեխնիկայի պակաս հողի մշակման համար<br>• Նորարարությունների պակաս ագրոբիզնեսում<br>• Երիտասարդների պասիվություն բիզնես գործունեության մեջ<br>• Գյուղատնտեսությունում թույլ մրցակցություն, մարքեթինգ և վաճառք<br>• Հողերի լանդշաֆտային մշակման բացակայություն<br>• Անտառային գոտիների և այգիների բացակայություն<br>• Գյուղատնտեսական ենթակառուցվածքների պակաս<br>• Ոլորտը կարգավորող առանձին գերատեսչության բացակայություն<br>• Անասունների թերսնում (կերի բազայի պակաս)<br>• Ոռոգման ցանցի անկատարություն/ բացակայություն<br>• Ոռոգման ջրի անբավարարություն<br>• Մոնոկուլտուր գյուղատնտեսություն<br>• Հյուծված գյուղտեխնիկա<br>• Հյուծված, դեգրադացման վտանգի եզրին կանգնած վարելահողեր<br>• Թույլ պլանավորում և կառավարում հատկապես ֆերմերային փոքր տնտեսություններում |

| | |
|---|---|
| • Ոչխարաբուծության գենետիկ կենտրոն Ազատանում | • Գյուղատնտեսության աջակցության ծրագրերի անբավարար հասանելիություն<br>• Որակյալ գյուղատնտեսական խորհրդատվության անբավարար հասանելիություն<br>• Ավանդական մտածելակերպ, գործելակերպ<br>• Նորարարական և կայուն գյուղատնտեսության մեթոդների վերաբերյալ գիտելիքների պակաս<br>• Հողերի քարքարոտություն<br>• Արտադրություն, վերամշակում, սպառում, ամբողջական արժեշղթայի անկատարություն<br>• Ամբողջական գյուղատնտեսական ապահովագրության բացակայություն<br>• Հակակարկտային կայանների սակավություն և անարդյունավետություն<br>• Որակյալ սերմերի և տոհմային ցեղատեսակների անբավարար հասանելիություն, բացակայություն<br>• Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակ<br>• Թերզարգացած ենթակառուցվածքներ<br>• Արտագաղթով պայմանավորված աշխատուժի անբավարարություն<br>• Թանկ գյուղատնտեսական ներդրանքներ<br>• Հետբերքահավաքային (պահպանման, պահեստավորման) ենթակառուցվածկների սակավություն |
| O Հնարավորություններ | T Մարտահրավերներ |
| • Կապը արտահանման շուկայի հետ և ապրանքաշրջանառության աճ | • Ոչ ճիշտ տնտեսության վարում<br>• Արոտների սխալ օգտագործում (կառավարում) |

| | |
|---|---|
| • Արտադրության և արդյունաբերության աճ<br>• Գյուղմթերքի արտադրության բարելավում<br>• Անտառտնտեսության հիմնում<br>• Նորարարական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում<br>• Գիտափորձարարական ագրոտնտեսություն (Պերմակուլտուրաներ, ագրոանտառտնտեսություն, դարավանդային գյուղատնտեսության)<br>• Էկոտներ<br>• Հողային և ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում<br>• Ագրոզբոսաշրջության և զբոսաշրջության զարգացում<br>• Միջազգային կապեր Վրաստանի և Եվրոպայի հետ<br>• Գյուղմթերքի արտադրման և վերամշակման արտադրական ավելցուկի կիրառում<br>• Հատապտղային տնտեսությունների ստեղծում<br>• Տեղական ագրոշուկաների ստեղծման հնարավորություն<br>• LEAD4Shirak ծրագիր<br>• Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրեր<br>• Միջազգային ծրագրերից տրամադրվող աջակցություն գյուղատնտեսության ոլորտում<br>• ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումային և իրազեկության բարձրացման ծրագրեր<br>• Բարձր գոտիականության շնորհիվ արտադրության բազմազանեցման հնարավորություն | • Մշակովի հողերի ոչ ճիշտ շահագործում<br>• Գլոբալ տաքացում<br>• Գյուղտեխնիկայի սպասարկման ծախսատարության մեծացում՝ գնաճի և տնտեսական ճգնաժամի հետ կապված<br>• Նոր հիվանդություններ, միջատներ, կրծողներ, գայլեր<br>• Բնակչության ծերացում<br>• Բնակլիմայական անբարենպաստ պայմաններ, կլիմայական փոփոխություններ<br>• Բնական աղետներ<br>• Բնական ռեսուրսների կորուստ, հողերի դեգրադացիա<br>• Ֆինանսական միջոցների սակավ հասանելիություն<br>• Ֆորսմաժորային իրավիճակներ |

| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ | |
|---|---|
| **S** *Ուժեղ կողմեր* | **W** *Թույլ կողմեր* |
| • Սոցիալական աշխատողների առկայություն<br>• Հոգեբանների, լոգոպետների առկայություն<br>• Սոցիալական մանկավարժների առկայություն<br>• Սոցիալական ծառայություն մատուցող կառույցների առկայություն<br>• ՀԿ-ների առկայություն<br>• Ներառական միջավայրի ստեղծում և կիրառում (առկայություն)<br>• Սոցիալական ծրագրերի հասանելիություն<br>• Անվճար հանրային կրթություն<br>• Անվճար բժշկական ապահովագրություն<br>• Կենտրոնական հիվանդանոցի առկայություն<br>• Շտապօգնության առկայություն<br>• Ընթացիկ ռեֆորմները տեղական ինքնակառավարման ոլորտում<br>• Տեղական ոչ պետական կազմակերպությունների առկայություն<br>• Ուսուցիչների առկայություն<br>• Բազմաոլորտային մոտեցում (տարբեր առարկաների ուսումնասիրում)<br>• Ակտիվ երիտասարդների և երեխաների առկայություն<br>• Մտավոր ներուժի առկայություն<br>• Արտադպրոցական խմբակների առկայություն(դասապատրաստումներ)<br>• Ոչ ֆորմալ խմբակների առկայություն<br>• Աշխորհուրդների առկայություն<br>• Ներառական կրթության առկայություն | • Թույլ սոցիալական ինտեգրում<br>• Անբավարար բժշկական անձնակազմ<br>• Հասարակության թույլ իրազեկություն ծառայությունների և սոցիալական արտոնությունների վերաբերյալ<br>• Կանանց թույլ ակտիվություն և տեղական ինքնակառավարությունում ներկայացուցիչների պակաս<br>• Թույլ զարգացած տեղական ոչ պետական կազմակերպությունների համագործակցություն և ֆինանսական աջակցություն<br>• Տեղական բնակչության ցածր մոտիվացիա՝ մասնակցել համայնքապետարանի բյուջեի պլանավորման և բաշխման գործընթացին<br>• Ժամանակակից մասնագիտական և ոչ ֆորմալ կրթության բացակայություն<br>• Գենդերային հավասարություն, երիտասարդություն և կանանց ներգրավվածություն<br>• Թերի զարգացած սպորտային և հանգստի միջոցառումներ<br>• Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների թույլ մրցունակություն<br>• Ներառական միջավայրի ձևավորման համար համապատասխան ենթակառուցվածքների անբավարարություն<br>• Դեպքեր վարող սոցիալական աշխատողների պակաս |

| | |
|---|---|
| • Մշակութային կուլտուրայի բազմազանություն | • ՀԿ-ների և համայնքի կողմից իրականացվող ծրագրերի ոչ թիրախային պլանավորում<br>• Ուսուցիչների հմտությունների պակաս<br>• Մարզիչների պակաս<br>• Կառույցների բացակայություն (դպրոց)<br>• Նյութատեխնիկական միջոցների պակաս<br>• Փորձի փոխանակման պակաս<br>• Ոչ ֆորմալ կրթական խմբերի անհամաչափ բաշխվածություն<br>• Ոչ որակյալ կրթական ծրագրեր<br>• Համագործակցության բացակայություն<br>• Մշակութային ոլորտի մասնագետների անբավարար քանակ<br>• Մշակութային ոլորտում նյութատեխնիկական միջոցների պակաս |
| **O** Հնարավորություններ | **T** Մարտահրավերներ |
| • Բնակչության սոցիալական ինտեգրում<br>• Մասնագիտական և ոչ ֆորմալ կրթություն<br>• Պետական և միջազգային լեզուների իմացություն<br>• Առողջապահության ծառայության բարելավում<br>• Սպորտի և հանգստի ենթակառուցվածքի զարգացում<br>• Գենդերի և երիտասարդության ներգրավվածությունը տեղական ժողովրդագրական հարցերում<br>• Լրացուցիչ ֆինանսավորման և ներդրումների ներգրավում<br>• Համայնքի վրա հիմնված տեղական զարգացում<br>• Քաղաքացիական ծառայությունների զարգացում | • Բնակչության միգրացիա<br>• Վաղ ամուսնություն<br>• Քաղաքացիական անկայունություն<br>• Փախստականների ներհոսք<br>• Միգրացիա (ուղեղների արտահոսք)<br>• Համաճարակային պայմաններ<br>• Կրթության ոլորտում պետության քաղաքականության փոփոխում<br>• Սոցիալ-քաղաքական անկայուն վիճակ<br>• Բնական աղետներ<br>• Մշակութային նորարարական գաղափարների բացակայություն<br>• Մշակութային ոլորտում մարզպետարանների և համայնքապետարանների անհամակարգվածություն<br>• Մարզպետարաններում մշակութային և կրթական վարչությունների միացում |

| | |
|---|---|
| • Տեղական լրատվամիջոցների հզորացում<br>• Տեղական ոչ պետական կազմակերպությունների զարգացում<br>• Երիտասարդական ակումբների ստեղծում<br>• Բարենպաստ օրենսդրական դաշտ<br>• Կրթական ծրագրերի առկայություն երկրի ներսում<br>• Պետության կողմից աջակցություն կրթական ծրագրերում<br>• Փոխանակման ծրագրերի առկայություն<br>• Օրինակելի մոդելների առկայություն<br>• Հեռավար կրթություն<br>• Մշակույթի նախարարություն<br>• Համազգային փառատոներ մշակույթի զարգացմանն ուղղված միտումներով<br>• Տոնավաճառներ | |

| ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| S *Ուժեղ կողմեր* | W *Թույլ կողմեր* |
| • Միջպետական ճանապարհի և անցակետի առկայություն (Բավրա)<br>• Էկոլոգիական մաքուր միջավայր<br>• Տարբեր բնակավայրերի մշակութային առանձնահատկություններ<br>• Ավանդական հյուրընկալության մշակութային առանձնահատկություններ<br>• Արփի ազգային պարկի հարևանություն<br>• Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան (խոհարարություն, պանրագործություն, գորգագործություն) | • Պատմամշակութային հուշարձանների սակավություն<br>• Սննդի և գիշերակացի ծառայությունների պակաս, գոյություն ունեցող ծառայությունների ոչ կանոնավոր գործունեություն<br>• Զբոսաշրջային ոլորտի այլ ծառայությունների (զվարճանք, զբաղմունք) բացակայություն<br>• Ոլորտի մասնագետների փորձառության պակաս<br>• Շրջանի ցածր ներկայացվածություն, ճանաչելիություն |

| | |
|---|---|
| • Գյումրուն մոտ լինելը<br>• Ձյունառատ ձմեռ (Աշոցքի գոգավորությունում ձմեռները երկարատև են, ձնածածկույթն ավելի երկար է պահպանվում)<br>• Ջրային ռեսուրսներ<br>• Ամառային մեղմ կլիմա<br>• Յուրօրինակ ֆլորա և ֆաունա. հազվագյուտ տեսակներ - «Դողդոջուն կաղամախու ծառուտներ»-Ամասիա գյուղից 3 կմ արևմուտք, «Փետրախոտային տափաստան» - Ամասիա գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք:<br>• Շիրակի մարզի Աշոցք և Սարապատ միավորված համայնքների զբոսաշրջային օբյեկտների էլեկտրոնային քարտեզի առկայություն<br>• Բարձրադիր, դժվարամատչելի և կուսական բազմաթիվ վայրերի, բնական հուշարձանների առկայություն<br>• Վերջերս Շիրակի մարզի Աշոցքի դահուկավազքի կենտրոնում Եվրոպական միության պատվիրակության և Հայաստանի դահուկային սպորտի, ֆեդերացիայի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանում առաջին դահուկային փառատոնը<br>• Դիրքավորված Աշոցք՝ որպես դահուկային մարզաձևերի կենտրոն<br>• Ամասիայի բժշկական կենտրոնը գործում է Ամասիայի շրջանում և սպասարկում է երկու համայնքների՝ Ամասիային՝ իր 9 գյուղերով, և Արփի համայնքին՝ իր 13 գյուղերով:<br>• Մեղրի արտադրություն<br>• Բրդի գործարանի առկայություն | • Տարածքի մասին սակավ տեղեկություններ<br>• Հանրային տրանսպորտի բացակայություն<br>• Համայնքների միջև համագործակցության պակաս<br>• Մշակութային կյանքի պասիվություն<br>• Կրթական հնարավորությունների պակաս<br>• Օտար լեզուների տիրապետման ցածր մակարդակ<br>• Ոչ կանոնավոր զբոսաշրջային հոսքեր<br>• Զբոսաշրջային արդյունքների բազմազանության պակաս<br>• Մրգերի և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրության համեմատաբար սակավություն (Արտադրանքը հիմնականում չի վաճառվում, սպառվում է համայնքի բնակչության կողմից)<br>• Կեղտաջրերի կառավարման ենթակառուցվածքների վատ վիճակ: 8 բնակավայրեր (Գյումրի, Ախուրյան, Արթիկ, Մարալիկ, Հովունի, Երազգավորս, Ամասիա, Գոգհովիտ) ունեն կոյուղի, իսկ 7 բնակավայրեր (Կապս, Հայկավան, Մայիսյան, Շիրակ, Աշոցք, ապահովված է Զույգաղբյուր, Թորոսգյուղ) ապահովված են մասնակիորեն<br>• Բնակչության պասիվություն, անտարբերություն (ոչինչ հետաքրքիր չէ, գիտելիք չունեն) |

| | |
|---|---|
| • Ախուրյանի կիրճը՝ Եվրոպա-Ասիա բաժանում | |
| **O** Հնարավորություններ | **T** Մարտահրավերներ |
| • Զմեռային զբոսաշրջությունը տարածվում է և ընդլայնում աշխարհագրությունը, ձմեռային զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացում<br>• Տարածաշրջանային հիմնական զբոսաշրջային ռեսուրսների (Գյումրի, Արփի լիճ) հնարավորությունների օգտագործում<br>• Քիչ հայտնի կամ ոչ զբոսաշրջային, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր ուղղությունների նկատմամբ պահանջարկն ավելանում է<br>• Տարածաշրջանում միջազգային կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման հնարավորություն<br>• Աշխատաշուկայում կանանց զբավածության մակարդակն ավելի ցածր է, քան տղամարդկանցը | • Կլիմայական փոփոխություններ<br>• Տարածաշրջանն ակտիվ սեյսմիկ գոտում է գտնվում<br>• Անբարենպաստ եղանակային պայմաններ<br>• Անբարեկարգ ճանապարհներ<br>• Մայրաքաղաքից մեծ հեռավորություն<br>• Արտագաղթ, մասնագետների արտահոսք<br>• Ռեսուրսների կենտրոնացում անհատների ձեռքում<br>• Շուկայի մրցունակության պակաս<br>• Սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակը երկրում |

| ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| **S** Ուժեղ կողմեր | **W** Թույլ կողմեր |
| • բիզնեսի զարգացման համար բարենպաստ միջավայր<br>• սպասարկման ոլորտի զարգացման համար աշխարհագրական հարմար դիրք<br>• բարեկիրթ ու բարեհամբույր շփման մշակույթ<br>• հումքի առկայություն և հասանելիություն | • տարածքների բացակայություն<br>• սպասարկման օբյեկտների բացակայություն<br>• աշխատուժի պակաս<br>• ցածր աշխատավարձեր<br>• մրցակցության և այլընտրանքի բացակայություն |

| | |
|---|---|
| • օրգանիկ, մաքուր սննդի առկայություն<br>• բիզնեսով զբաղվելու մոտիվացիա ունեցող մարդկանց առկայություն<br>• փորձի փոխանակման հնարավորություններ<br>• ենթակառուցվածքների առկայություն<br>• բնական ռեսուրսներ (գետեր, լճեր, ալպյան մարգագետիններ, անտառներ, լեռներ)<br>• ազգային խոհանոցի և էթնիկ մշակույթի բազմազանություն<br>• անվտանգ ու մշտական վերահսկվող միջավայրի առկայություն<br>• բիզնես հեշտացված գրանցում | • համապատասխան նյութատեխնիկական բազայի անբավարարություն<br>• սպասարկման հմտությունների և փորձառության պակաս<br>• բիզնես պլանավորելու, վարելու, ֆինանսների կառավարման հմտությունների/գիտելիքների ու փորձի պակաս<br>• գորգագործության, կարպետագործության, թաղիքագործության, կաշվի վերամշակման մասնագետների բացակայություն<br>• բիզնես ռիսկերի գնահատման հմտությունների պակաս |
| **O** Հնարավորություններ | **T** Մարտահրավերներ |
| • պարզեցված հարկային համակարգ<br>• բաց շուկա<br>• կապ հարևան պետությունների հետ, մասնավորապես՝ Վրաստանի<br>• արտոնյալ վարկեր ՓՄՁ-ների համար<br>• երիտասարդների շրջանում բիզնեսի հանդեպ հետաքրքրության աճ<br>• ներդրումներ այլ կազմակերպությունների կողմից<br>• համայնքային ենթակառուցվածքների բարելավում | • աշխարհաքաղաքական, անվտանգային և տնտեսական վիճակի անկայունություն (պատերազմ, բնական աղետներ, գնաճ, արտարժույթի տատանումներ, համաճարակ և այլն)<br>• արտագաղթ<br>• փոքր շուկա<br>• հարկային դաշտի փոփոխություններ<br>• թիրախ ոլորտների մոնոպոլիզացիա |

# 3. Կարիքների գնահատում՝ ռեսուրսների և առաջնահերթությունների ստուգում

Տարածքի սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակի ուսումնասիրության, տեղաբնակների հետ հանդիպումների ու խորհրդակցությունների, ինչպես նաև թեմատիկ առաջնահերթությունների SWOT վերլուծության արդյունքում առանձնացվել են հետևյալ կարիքները՝

- **Տնտեսության զարգացման մեջ նոր տեխնոլոգիաների կիրառում**

Գյուղատնտեսությունը տարածքի զարգացման հիմնական ուղղությունն է, սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածքում տնային տնտեսությունները հիմնականում զբաղվում են ավանդական գյուղատնտեսությամբ, ինչն այնքան էլ եկամտաբեր չէ: Հողային ռեսուրսների առկայությունը լավ ռեսուրս է գյուղատնտեսության ոլորտում առաջընթաց գրանցելու համար, սակայն տեղացիները կարիք ունեն գյուղատնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների կիրառման, որոնք կօգնեն բնակչությանը՝ ոռոգման ցանցի բացակայության պայմաններում այլընտրանքային միջոցների օգտագործմամբ խթանելու բուսաբուծությունը:

- **Բարձրարժեք մշակաբույսերի ներդրում**

Տարածքում հիմնականում զբաղվում են ավանդական բուսաբուծությամբ, ինչը սահմանափակվում է առվույտի, ցորենի, գարու, երբեմն նաև հնդկացորենի ու ոսպի մշակմամբ: Պտղաբուծությունը և հատապտղաբուծությունը, որոնք ավելի եկամտաբեր ճյուղեր են համարվում, սակավ են զարգացած: Ուստի, տարածքում կարիք կա զարգացնելու բարձրարժեք մշակաբույսերի ու բազմամյա տնկարանների մշակումը, ինչը կբարձրացնի բուսաբուծության եկամտաբերությունը:

- **Հողի որակի և եկամտաբերության բարձրացում**

Տարածքում, որպես պատճառ վարելահողերի չօգտագործման, բերվում են հողի եկամտաբերության ցածր մակարդակը, հողերի որակի վատ վիճակը, որն առաջացել է չօգտագործման կամ ոչ ճիշտ օգտագործման (թունաքիմիկատների) հետևանքով: Այդ իսկ պատճառով կարիք կա հողի որակի գնահատման/լաբարատոր ստուգումների և դրա բարալավման ուղղությամբ աշխատանքներ կատարելու: Մյուս կողմից՝ նոր մշակաբույսերի ներդրման համար կարիք կա ստուգելու հողի թթվայնությունը, խոնավությունը և այլ կարևոր պարամետրեր, որոնք հնարավորություն կտան տեղացիներին հասկանալու, թե ինչպիսի մշակաբույսեր կարող են աճեցնել:

- **Գյուղմթերքի ծավալների ավելացում, վերամշակում և սպառում**

Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղմթերքը հիմնականում արտադրվում է փոքր տնային տնտեսությունների մակարդակում և այն դիտվում է ոչ այնքան եկամտաբեր: Մի կողմից՝ անասնաբուծության մեջ բուծվում են ցեղատեսակներ, որոնք միջին եկամտաբերություն ունեն, մյուս կողմից էլ բուսաբուծությունը սահմանափակվում է ավանդական մշակաբույսերով: Բացի եկամտաբերության խնդրից, սպառումը ևս խնդիր է գյուղացիական տնտեսությունների համար: Ուստի, գյուղմթերքի (այդ թվում՝ մսի, կաթի, բանջարեղենի) մշակումը խթանելու, եկամտաբերությունն ավելացնելու համար կարիք կա արժեշղթաների զարգացման, որոնք հնարավորություն կտան գյուղացիական տնտեսություններին իրենց ստացած գյուղմթերքը տեղում վերամշակելու և ավելի մեծ եկամուտ ստանալու:

- **Զբոսաշրջային ներուժի օգտագործում, պրոդուկտների զարգացում և վաճառք**

Տարածքի բնակլիմայական պայմանները, հատկապես ձնառատ ձմեռները և զով ամառները տեղացիների կողմից դիտարկվում են որպես ռեսուրսներ: Մյուս կողմից՝ Գյումրի քաղաքին բավականաչափ մոտ գտնվելն ու այնտեղ այցելող զբոսաշրջիկներին այլընտրանքային ուղղություններ առաջարկելը լավ հնարավորություն են առկա ռեսուրսները զբոսաշրջային նպատակով օգտագործելու համար: Ուստի, կարիք կա տարածքի զբոսաշրջային ներուժի օգտագործման, նոր զբոսաշրջային պրոդուկտների ու ծառայությունների ստեղծման ու դրանց վաճառքի կազմակերպման:

- **Տարածքի՝ որպես զբոսաշրջային ուղղության ճանաչելիության բարձրացում**

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներքին ու արտաքին զբոսաշրջության խթանման համար տարածքի բնակավայրերի հանդեպ զբոսաշրջային հետաքրքրությունը շատ ցածր է, ինչը հետևանք է տարածքի՝ որպես զբոսաշրջության ուղղության ճանաչելիության և առկա պրոդուկտների ու հնարավորությունների՝ ավելի լայն շրջանակների ներկայացման ուղղությամբ տարվող ոչ լիարժեք ու համակարգված աշխատանքի: Ելնելով վերոնշյալից՝ կարիք է առաջանում տարածքի՝ լայն շրջանակներում ճանաչելիության բարձրացման, տարածքի բրենդավորման ու մարքեթինգի խթանման:

- **Սոցիալ-կրթական ծառայությունների հասանելիության խթանում**

Տարածքում հիմնական կրթություն տրամադրող կառույցները դպրոցներն են ու նախակրթարանները (Հավելված 4): Արտադպրոցական կամ արտադասարանական կրթության տրամադրումը սահմանափակվում է որոշ հասարակական կազմակերպությունների շրջանակներում և շատ դեպքերում հասանելի չէ բոլորին: Հատկապես աղքատության բարձր ցուցանիշների, գործազրկության պարագայում բնակչության խոցելիության մակարդակն ավելի մեծ է, ու կարիք կա խոցելի խմբերի համար (կանանց, երիտասարդներին,

հաշմանդամություն ունեցող անձանց) սոցիալ-կրթական հնարավորությունների և ծառայությունների հասանելիության խթանման:

- **Սոցիալ-կրթական ծառայություններ մատուցող կառույցների, կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացում**

Տարածքում սոցիալ-կրթական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, ցավոք, հիմնականում գործում են որոշակի ծրագրերի շրջանակներում և ծրագրերի ավարտից հետո դադարում են ծառայություններ մատուցելուց: Որպեսզի ապահովվի կայուն սոցիալ-կրթական ծառայությունների տրամադրում, հատկապես խոցելի խմբերի համար, անհրաժեշտություն կա ծառայություններ մատուցող կազմակերպությունների կազմակերպական կարողությունների զարգացման:

- **Սպասարկման ոլորտի առաջնային ծառայությունների հասանելիություն**

Տարածքում գործող ՓՄՁ-ները հիմնականում սահմանափակվում են առևտրային գործունեությամբ, այնինչ բնակչության համար անհրաժեշտ այլ ծառայություններ, ինչպիսիք են՝ ժամանցի, խնամքի ծառայությունները, դեռևս մնում են անհասանելի տեղացիների համար և շատ դեպքերում իրականացվում են տնային պայմաններում, որը պակաս եկամտաբեր է: Ուստի, անհրաժեշտություն կա խթանելու սպասարկման ոլորտի ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը տարածքի բոլոր բնակավայրերում:

- **Տեղական հումքի և մարդկային ռեսուրսի օգտագործում**

Խորհրդային տարիներին տարածքի բնակչությունն ընդգրկված է եղել թեթև արդյունաբերության մեջ, ինչի արդյունքում գեներացվել են հմտություններ (կարի, շյուղագործության, գորգագործության), որոնք այժմ չեն օգտագործվում: Մյուս կողմից՝ տեղական հումքը, որն առաջանում է հիմնականում գյուղատնտեսության շնորհիվ, չի օգտագործվում պատշաճորեն, ուստի անհրաժեշտություն է առաջանում օգտագործել տեղական ռեսուրսները, ապա և դրանց համադրմամբ ստեղծել նոր ձեռնարկություններ ու աշխատատեղեր:

# 4. Գործողությունների ծրագիր

## 4.1 Ռազմավարության նպատակները

**Ռազմավարության տեսլականը**

Սույն ռազմավարության տեսլականն է՝ ***«ՏԱԽ-ի տարածքում ունենալ նոր տեխնոլոգիաների մասսայական կիրառմամբ արագ զարգացող տնտեսություն ունեցող բնակավայրեր և համայնքային զարգացման հանդեպ սեփականատիրական զգացողություն ունեցող*** **տեղաբնակներ»:**

Տեսլականի կիզակետում գյուղերի զարգացումն է, որն իրականացվում է տեղացիների սեփականատիրական բարձր զգացողության դրսևորմամբ, նոր ու արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ: Տեղաբնակներն են այն շարժիչ ուժը, որն ապահովելու է կայուն կենսապայմաններ ու արագ զարգացող տնտեսություն, ինչն իր հերթին կնպաստի անձի անհատական և սոցիալական զարգացմանը, համայնքի զարգացմանն ու հզորացմանը:

Ելնելով վերոնշյալ կարիքներից՝ խորհրդակցությունների արդյունքում սույն ռազմավարության համար սահմանվել են հետևյալ **ռազմավարական նպատակները՝**

1. գյուղատնտեսության զարգացում և եկամտաբերության բարձրացում՝ արդիական տեխնոլոգիաների ու նորարարական մոտեցումների կիրառմամբ,
2. տեղացիների համար սոցիալ-կրթական, մշակութային հնարավորությունների հասանելիության ապահովում,
3. զբոսաշրջության արժեշղթայի խթանում:

## 4.2 Գործողությունների նկարագրություն

ՏԱԽ-ի տարածքի տեղական զարգացման ռազմավարությունը կազմված է չորս ընդհանուր նպատակներից, յուրաքանչյուր ընդհանուր նպատակ բաղկացած է մասնավոր նպատակներից: Հնգամյա գործողությունների պլանը 2022-2026 թվականների համար ներկայացված է որպես ռազմավարության հավելված (Հավելված 5):

Ռազմավարությամբ առաջադրված տեսլականին միտված քայլերը առաջիկա հինգ տարիների համար ամփոփված են ընդհանուր և մասնավոր նպատակներում, որոնք զուգորդվում են համապատասխան գործողությունների ծրագրով: Սահմանվում է ընդհանուր չորս նպատակ. սահմանման և խմբավորման հիմքում տեղացիների կարիքների, ռեսուրսների ու հնարավորությունների խմբավորման

սկզբունքն է, ինչպես նաև սոցիալական ներառման, գենդերային հավասարության և բնապահպանության խթանման սկզբունքները: Յուրաքանչյուր մասնավոր նպատակին հասնելու համար նախագծված են միմյանց փոխկապակցված գործողությունները, դրանց իրականացումից ակնկալվող արդյունքները, ժամանակացույցը, անհրաժեշտ ռեսուրսները:

***Նպատակ 1. Տեղացիների համար սոցիալ-կրթական, մշակութային հնարավորությունների հասանելիության ապահովում***

Այս ընդհանուր նպատակին հասնելու համար սահմանված են հետևյալ մասնավոր նպատակները՝

- *Մասնավոր նպատակ 1.1.* Սոցիալ-կրթական ծառայություններ մատուցող կառույցների աշխատանքի արդյունավետության բարձրացում և ինստիտուցիոնալ զարգացում,

- *Մասնավոր նպատակ 1.2.* Սոցիալ-կրթական կառույցներում, պետական (ներառյալ դպրոցներում) և ոչ պետական հաստատություններում երիտասարդների ու կանանց ներգրավվածությունը/մասնակցությունը խթանող ներառական միջավայրի ստեղծում:

Այս նպատակին հասնելու համար պլանավորվում է՝

- Սոցիալ-տնտեսական ծառայություններ մատուցող կառույցների (ֆորմալ և ոչ ֆորմալ) նյութատեխնիկական միջոցների ապահովում,
- Վերապատրաստումներով, փորձի փոխանակմամբ (տեղական և միջազգային) ոլորտի մասնագետների (սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, լոգոպեդներ, հատուկ մանկավարժներ) որակի բարձրացում,
- Սոցիալ-կրթական ծառայություններ մատուցող կառույցների հիմնում և կազմակերպական զարգացում,
- Թիրախ բնակավայրերում ֆորմալ և ոչ ֆորմալ երիտասարդական աջակցող խմբերի ու կենտրոնների ստեղծում, արտադասարանական/ակումբային կրթության զարգացում՝ տեղական ռեսուրսների վրա հիմնված,
- Հատուկ կարիքներ ունեցող անձանց, երիտասարդների, դեռահասների, կանանց և ազգային փոքրամասնությունների համար մասնակցային անհրաժեշտ պայմանների ու մեխանիզմների ներդրում,
- Դուալ կրթության զարգացում, մասնավորապես՝ այն կապելով ռազմավարությամբ սահմանված գերակայություններին, ինչպես նաև մարզի հեռանկարային զարգացման հնարավորությունների փորձարկմանը՝ օգտագործելով համայնքային դպրոցների և/կամ առկա ձեռնարկությունների ռեսուրսները:

- Ժամանցի, հանգստի, զարգացման և երեխաների անվտանգ խաղալու վայրերի ստեղծում՝ նորարարական և/կամ ներառական լուծումներով, մասնավորապես՝ ճամբարներ, գրադարաններ, խաղահրապարակներ, սպորտային դաշտեր, համայնքային պուրակներ ու համայնքի ֆիզիկական տեսքի բարելավման այլ ծրագրեր,
- Միջհամայնքային, միջբնակավայրային և տեղական ակտիվ խմբերի միջև սպորտային ու մշակութային նախաձեռնություններ:

Կրթության[20] ոլորտի առաջարկությունները մշակվել են հաշվի առնելով համայնքների ունեցած հնարավորությունները, նրանց բնակիչների կարծիքները, ակնկալիքները, առկա ռեսուրսները: Առաջարկություններն ընդհանուր կետերով են, ուստի յուրաքանչյուր համայնք, բնակավայր կարող է առաջարկներից ընտրել իր կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող կետեր:

**Ոչ ֆորմալ կրթություն**

20-րդ դարի 60-ական թվականներին կյանքի բոլոր ոլորտների զարգացման ընթացքի արագացմանը և հասարակական հարաբերությունների էական փոխակերպումներին զուգընթաց՝ կրթական ոլորտ ներթափանցեց «ոչ ֆորմալ կրթություն» հասկացությունը: Ոչ ֆորմալ կրթության հիմնական նպատակը կրթական ոլորտում համարժեք պատասխան գտնելն է դարի այնպիսի մարտահրավերներին, ինչպիսիք են հասարակական ու քաղաքացիական մասնակցության անկումը, ինֆորմացիոն հասարակության պահանջները, միջազգային ինտեգրացիոն, համընդհանրացման գործընթացների ակտիվացումը և տնտեսության համակարգային փոխակերպումների ու գոյություն ունեցող ֆորմալ կրթական համակարգի միջև աստիճանաբար խորացող անջրպետը: Որպես կրթության յուրահատուկ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին (պայմաններին) համապատասխան հմտություններ, կարողություններ ու գիտելիքներ:

Համաձայն ոչ ֆորմալ կրթության մեջ ընդունված սկզբունքների՝ դրանք կարող են ձեռք բերվել կամավոր հիմունքներով, տարաբնույթ կրթական միջոցառումների ձևաչափով, որ տեղի են ունենում ֆորմալ կրթական համակարգից դուրս: Հատկանշական է, որ ոչ ֆորմալ կրթության իրականացման մեջ էական դեր են խաղում հասարակական կազմակերպությունները, որոնք առավելապես

[20] Կրթության ոլորտին առնչվող տեքստում օգտագործվել են՝ Հայաստան, Ուսուցիչների նկարագիր և քաղաքականություններ (Համաշխարհային բանկի զեկույցը), 2021թ.: Երիտասարդական աշխատանքի ոլորտում ուսուցողական արդյունքների վավերացման և ճանաչման վերաբերյալ իրականացված Սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն, «ԿԱԶԱ» հիմնադրամ, Եր., 2019թ.: Տարածաշրջանային վերլուծության և ելակետային գնահատման զեկույց, LEAD4SHIRAK «Տեղական դերակատարների զորեղացում հանուն Շիրակի մարզի զարգացման» ծրագիր, Շիրակ, 2021թ.: Научно-исследовательская и проектная деятельность учащихся учреждений общего, начального и среднего профессионального образования, под ред. Полиракповна Л. К., Вальеревна Ю. Л., Ступницкая М. А., Что такое учебный проект?, М., 2010.

ներգրավված են համայնքային և երիտասարդության հետ կատարվող կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներում:

2006 թվականի դեկտեմբերին ՀՀ Կառավարությունը հաստատել է «Ոչ ֆորմալ կրթության մասին» հայեցակարգը, որը սահմանում է ոչ ֆորմալ կրթությունը որպես անձի՝ հանրային կյանքում նրա ունեցած քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային մասնակցության, կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի ու գիտելիքների զարգացում: Հայեցակարգում սահմանվում են նաև ոչ ֆորմալ կրթությանն առնչվող հասկացությունները, առանձնացվում սուբյեկտները և այդ ոլորտում հստակեցվում ՀՀ քաղաքականության սկզբունքներն ու խնդիրները:

**Ակումբային կրթություն**

Նախկինում յուրաքանչյուր մեծ կամ փոքր կազմակերպություն, գյուղ ու քաղաք ուներ իր ակումբը՝ տարաբնույթ գործառույթներթվ: Այս փուլում ակումբի կրթական ընկալումը և «ակումբ» հասկացության՝ որպես կրթական բաղադրիչի մեկնումը առանձնահատուկ դեր ունի: Այն կարող է համախմբել ոչ ֆորմալ կրթական համակարգի իրացման ձևերը: Ակումբային կրթությունը չի պահանջում ֆորմալ ձևակերպումներ, աստիճանակարգություն և չի հանդիպում այն խոչընդոտներին, որ առկա են ֆորմալ կրթական համակարգում: Ակումբները ձևավորվում են նախաձեռնող անհատների ու խմբերի կողմից կամավորության սկզբունքով:

Կազմակերպված ակումբներում ներառվում են նույն հետաքրքրություններն ու պահանջմունքներն ունեցող անձինք: Ակումբի շրջանակներում ծավալած գործունեությունն օգնում է մասնակիցների հետաքրքրությունները զարգացնելուն և նպաստում է սովորողների օժտվածության զարգացմանը, նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելուն:

Ակումբները կազմակերպվում և գործում են իրենց անդամների սոցիալական ակտիվությունը, ստեղծագործական միտքն ու մշակութային ընկալումները, ինքնակազմակերպվածությունը, նախաձեռնողականությունը բարձրացնելու նպատակներով: Ակումբում կարգավորվում և նոր տեսք են ստանում միջանձնային հարաբերությունները: Նախաձեռնող յուրաքանչյուր անհատ կարող է համակարգել ակումբների գործունեությունը, որը միշտ կրում է բազմաֆունկցիոնալ բնույթ:

*Ի՞նչ առավելություններ ունի ակումբային գործունեությունը*

Ա. Ակումբային գործունեությունը, բացի նախասիրություններ զարգացնելուց, նաև հմտություններ ձեռք բերելու միջոց է:

Բ. Ակումբներում մասնակիցները ներառվում են ըստ իրենց նախասիրությունների, չհաջողելու դեպքում կարող են փոխել ակումբը:

Գ. Ազատ արտահայտվելու և ինքնադրսևորվելու (առանց վախի սինդրոմի) տարածք է:

Դ. Կրթության գործի կազմակերպման մեջ ներառված են բոլորը:

Ե. Չկան պասիվ և ակտիվ մասնակիցներ:

Զ. Ակումբային գործունեությունը կազմակերպվում է հավասարության սկզբունքից ելնելով, չի գործում վերևից ներքև վեկտորը: Ակումբային գործունեության կարևոր խթաններից է նաև գնահատման համակարգի, որպես այդպիսին, բացակայությունը:

*Առաջարկվող ակումբային ուղղություններ (ցանկը կարող է լրացվել ըստ շահառուների հայեցողության)*

- Ինտելեկտուալ ակումբներ
- Մարզական ակումբներ (ինչպես առանձին մարզաձևերի, այնպես էլ մարզասրահների տեսքով)
- Մշակութային ակումբներ
- Ընթերցասերի ակումբ
- Արշավականների ակումբ (հնարավոր է փոխկապակցել զբոսաշրջային գործունեությանը)
- Կինոսերների ակումբ
- Թատերական ակումբներ
- Լեզուների ուսուցման և զարգացման ակումբներ
- Ծրագրավորողների, ռոբոտաշինության ակումբներ
- Գարդենիա բուսաբուծության ակումբ

**Գիտելիքի փոխանցման խմբակներ**

Համայնքների նախնական դիտարկումները ցույց տվեցին, որ թիրախ բնակավայրերում առկա են արհեստագործական, արվեստի և այլ կիրառելի հմտություններով զբաղմունքներ, որոնք ունեն համապատասխան փորձով մասնագետներ: Համայնքներում հնարավոր է ներդնել հմտությունների փոխանցման հայեցակարգը, թեկուզ փոքր մասնագիտական խմբակներով.

- Արհեստագործական խմբակներ
- Խեցեգործության, քանդակագործության խմբակներ
- Խոհարարական գործի խմբակներ
- Խնամքի, անձնական հիգիենայի խմբակներ
- Կար ու ձևի, մոդելավորման արհեստանոցներ

Այս ցանկն ամբողջական չէ և կարող է լրացվել ըստ գյուղերում առկա մասնագետների: Խմբակների մեխանիզմի կիրառումը հնարավորություն կտա հենց տեղում՝ ձեռք բերած հմտությունները վերածելու նյութական բարիքի:

**Էկոկրթությունն** այսուհետ կրթության անբաժան և անընդհատ մասն է կազմում և սովորողներին մղում է ինքնակրթության, փորձի կուտակման, անձնային նոր արժեքների ձևավորման, բնական միջավայրի պահպանությանն ուղղված գիտելիքների ստացման: Էկոկրթությունը զարգացման երկար ճանապարհ է անցել՝ սկսած անորոշ տեղական խնդիրներից մինչև գլոբալ հիմնախնդիրներ: Կրթության այս ուղղությունն առաջացել է ինտեգրված գիտությունների սահմանագլխին՝

միևնույն ժամանակ դառնալով մեկ ամբողջական գործընթաց: Էկոլոգիական կրթությամբ ուշադրություն է դարձվում մարդ-բնություն փոխհարաբերությանը, և այդ փոխահարաբերությունը դառնում է փոխազդեցություն: Եվ ի վերջո ուսումնասիրում է բնական միջավայրը՝ որպես ամբողջական համակարգ՝ ընդգրկելով այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են սոցիալական, քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, գեղագիտական էկոլոգիաները: Էկոկրթությունն ուղղված է մի քանի խնդիրներ լուծելուն.

- սովորողների մեջ տնտեսական, սոցիալական, քաղաքական, էկոլոգիական խնդիրների փոխկապակցվածությունն ու փոխազդեցությունը քաղաքներում ու գյուղերում բացահայտելու և համեմատականներ տանելու կարողությունների ձևավորում,
- յուրաքանչյուր սովորողի հնարավորություն ընձեռել՝ ձեռք բերելու այնպիսի գիտելիքներ, որոնց շնորհիվ կպաշտպանեն բնությունը, կբարելավեն շրջակա միջավայրը, դուրս կգան սպառողի կեցվածքից,
- գործնական այնպիսի հմտությունների սերմանում, որ կիրառելով՝ միջավայրն ավելի մաքուր, խնամված ու բարեկարգ կդարձնեն:

Էկոկրթության բովանդակության մեջ կարելի է ներառել առողջ ապրելակերպը, մարդու իրավունքները, արդարությունը, բնության պահպանությունը, անկախությունը, անվտանգությունը, քաղաքական, կրոնական տարբեր հայացքների նկատմամբ հանդուրժողականությունը: Կրթական այս բաղադրիչը շատ հեշտ համատեղելի է տեղական դպրոցներում իրականացվող ծրագրերին:

**Զբոսաշրջություն**

Ցանկացած տարածաշրջան ունի իր զբոսաշրջային գրավչությունը: Անհրաժեշտ է կրթական տարբեր ձևերի համակցմամբ ստեղծել զբոսաշրջային ինդուստրիայի տարբեր ճյուղերի մասնագետներ և կարողանալ իրացնել առկա հնարավորությունները: Այս ծրագրի շրջանակներում իրատեսական է զարգացնել հետևյալ ուղղությունները, որոնք պարունակում են կրթական, գիտելիքի փոխանցման, նոր գիտելիքների, կարողությունների ձեռքբերման բաղադրիչներ.

- Տեղական գիդերի պատրաստում/վերապատրաստում
- Առկա ռեսուրսների, զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի քարտեզագրում, բրենդավորում
- Ծիսական փոքր կենտրոնների ստեղծում, մարդկային հոսքի ներառում (օր. թոնիրներում լավաշթխիկի ծես, հեքիաթասացության երեկոներ և այլն)
- Գաստրոբակերի ստեղծում և զարգացում
- Ագրոտուրիզմի կազմակերպում
- Ինքնուս ստեղծագործողների, տեղական արհեստների, արվեստների ցուցադրությունների կազմակերպում

**Դպրոցը՝ համայնքային կենտրոն**

Ստացվել է այնպես, որ Հայաստանի շատ բնակավայրերում դպրոցները բացվում են առավոտյան ու փակվում ֆորմալ դասերի ավարտից անմիջապես հետո՝ չտալով

համայնքի բնակիչներին այլ հնարավորություններ, իսկ տարվա որոշ ամիսներին դրանք ընդհանրապես փակ են։ Բազմաթիվ գյուղական համայնքներում դպրոցը փաստացի միակ կրթական, մշակութային կենտրոնն է և ըստ էության լիարժեք չի սպասարկում համայնքի շահառուներին ու նրանց կարիքները։

Մասնավորապես՝ դպրոցների բեռնվածությունը ցույց է տալիս, որ դրանց 26,3%-ը մինչև 25% բեռնվածություն ունի, դպրոցների 19,9%-ը՝ 25-50% բեռնվածություն։ Նման դեպքերում հաստատությունը պետք է ընդլայնի իր նշանակությունը՝ գործելով իբրև համայնքային կենտրոն և ապահովելով բնակավայրի մշակութային, մարզական, ժամանցային միջավայրն ու ենթակառուցվածքները, ինչպես նաև համայնքի նախադպրոցական, լրացուցիչ և շարունակական կրթության, ըստ անհրաժեշտության՝ նաև արհեստագործական կրթության բաղադրիչները։

Յուրաքանչյուր դպրոց ունի իրեն բնորոշ հնարավորություններ, որոնք անհրաժեշտ է իրացնել առավելագույնս արդյունավետ։

**Նախագծային ճամբարների կազմակերպում**

<u>Նախագիծը՝ որպես ուսուցման մեթոդ</u>

Ուսումնական նախագիծը ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է սովորող գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ որևէ խնդրի լուծմանը կամ որոշակի արդյունքի ձևակերպմանն ուղղված։ Սովորողի համար այն առավելագույնս դրսևորվելու միջոց է ինչպես խմբային աշխատանքներում, այնպես էլ անհատական մոտեցման պարագայում։ Այն հնարավորություն է տալիս սովորողին բացահայտելու իր ստեղծագործական ներուժը։ Խմբային աշխատանքների՝ նախագծերի իրականացման պարագայում այն առաջարկում է մի շարք խնդիրների լուծումներ, ինչպես նաև զարգացնում է սովորողների թիմային, փոխհամաձայնեցված և համագործակցային աշխատանքի ինֆորմալ կրթության հմտությունները։

<u>Նկարագիր</u>

<u>Նպատակ, խնդիրներ և հնարավորություններ</u>

Ա. «Ուսումնական նախագիծ» հասկացությունն ընկալվում է որպես համատեղ, նպատակաուղղված, նախապես ծրագրված խմբային կամ անհատական աշխատանք։ Նախագծային աշխատանքն ունի ընդհանուր խնդիրներ ու նպատակ, որոնց վերջնական արդյունքը, այսպես ասած, ինտելեկտուալ կոմպենսացիան է։ Այս մեթոդն ուղղված է զարգացնելու հաղորդակցության և զուգորդված հմտությունները։ Սրա մեջ համադրվում են սովորողի՝ խմբի ներսում կամ անհատապես աշխատելու ինքնուրույն որակները։

Բ. «Այն, ինչը ես կճանաչեմ և կընկալեմ, գիտեմ՝ ինչի համար է ինձ պետք, որտեղ և ինչի համար կարող եմ այդ գիտելիքը կիրառել»։ Ահա այս թեզն է ընկած ժամանակակից նախագծային մեթոդի ընկալման հիմքում։ Այս հանգամանքը

գրավում է հատկապես այն կրթական համակարգերին, որոնք փորձում են հավասարակշռություն մտցնել ակադեմիական գիտելիքի և կիրառական հմտության միջև:

Գ. Առաջանալով ազատ կրթության գաղափարի հենքով՝ նախագծային մեթոդը արդի փուլում ներառվում է կրթության տարբեր փուլերում: Նախագծային ուսուցմամբ կարելի է ուսուցանել ցանկացած տարիքի անհատի.

- բացահայտել և ձևակերպել խնդիրները
- վերլուծել դրանք
- գտնել դրանց լուծման ուղիները
- աշխատել տարաբնույթ աղբյուրների տեղեկությունների հետ
- ստացված տեղեկատվությունն օգտագործել տրված առաջադրանքի լուծման համար

Նախագծային ուսուցումը կրթական բարդ համակարգ է և ներառում է մի քանի ենթահամակարգեր: *Ինֆորմացիոն* (տեղեկատվական) ենթահամակարգը ներառում է իմացական ու բնազդային բաղադրիչներ: *Իմացական* բաղադրիչը նախնառաջ իմացումն է աշխարհի, տիեզերքի և սոցիումի կառուցվածքի մասին: Իմացական բաղադրիչի հիմնական գործառույթը հարցեր տալու, խնդիրներ առաջադրելու և դրանք ուսումնասիրելու կարողությունն է: *Ռեֆլեկտիվ* բաղադրիչն ապահովում է անհատի ինքնակառավարումը, ինքնավերահսկումը և տարբեր խնդրային իրավիճակներում խորքային ուսումնասիրությունը: *Հոգեբանական* ենթահամակարգը ներառում է *մոտիվացիոն* բաղադրիչը, որը պատասխանատու է սովորողի հետազոտական ակտիվության և փնտրելու ակտիվության համար: *Կոնվերգենտ* և *տարամետ* բաղադրիչները պատասխանատու են մտածողության տարբեր ձևերի համար: Կոնվերգենտ մտածողությունն ուղղված է ենթադրյալ մեկ ճիշտ պատասխան գտնելուն. դա ավանդական մտածողությունն է: Տարամետ մտածողությունն ուղղված է բազմաթիվ մտքեր կամ այլընտրանքներ գտնելուն: Այն յուրահատուկ կամ ստեղծագործ մտածողության գլխավոր բաղադրիչն է: Մտածողության այս տեսակը լայնորեն կիրառվում է, երբ խնդրին անհրաժեշտ է տալ առավել ստեղծագործական լուծում: Սակայն ինչքան էլ խոսենք տեսական հարցադրումներից, յուրաքանչյուր նախագծի և ուսումնասիրության առանցքում պրակտիկ գործունեության ենթահամակարգն է:

Այս առումով, տեղական ակտիվ խմբերի համագործակցությամբ, դպրոցներում հնարավոր է ունենալ շուրջտարյա նախագծային ճամբարներ: Սակայն հաշվի առնելով առկա իրավիճակը՝ առաջարկվում է սկսել ամառային ու ձմեռային նախագծային ճամբարների մոդելներից:

**Գրադարան–կենտրոն**

Գյուղերում մշակույթի տների համատարած անմխիթար ֆոնին առաջնային է դառնում դպրոցում *Գրադարան–կենտրոնի* առկայությունը: Այս ծրագրի շրջանակներում հնարավոր է հիմնել նոր գրքերով և տեխնիկական հնարավորություններով հագեցած նման կենտրոններ: Սակայն անհրաժեշտ է հստակ սահմանել, որ այդ Գրադարան–կենտրոնների, ընթերցասրահների

շահառուները համայնքի բոլոր բնակիչներն են, այլ ոչ միայն դպրոցականներն ու ուսուցիչները:

Գրադարան–կենտրոններում, բացի զուտ ընթերցանության գործից, հնարավոր է կազմակերպել քննարկումներ, ընթերցանության ակումբներ, բանավեճի ակումբներ և այլն:

**Դուալ կրթություն**

Աշխատանքի վրա հիմնված ուսուցման առավել հեռանկարային մոդելը դուալ համակարգն է: Դրա առանցքում մասնավոր հատվածի և կրթական համակարգի սերտ համագործակցությունն է, որը սահմանում է ուսուցման կազմակերպման ներգրավման մակարդակները և պատասխանատվության շրջանակը՝ հմտությունների ձևավորման համար: Համակցված այս մոտեցումը լավագույն հնարավորություն է ընձեռում ուսանողների համար՝ անմիջապես աշխատանքային գործընթացներից դասեր քաղելու:

Այս համակարգը հիմնականում գործարկվում է ՄԿՈՒ ոլորտում, սակայն անհրաժեշտ է ներառել նաև հանրակրթության մեջ՝ օգտագործելով դպրոցի հնարավորությունները:

Բացի մասնագիտական հմտությունների ձևավորումից, այն ներառում է մասնագիտական գործունեության լայն շրջանակ և ճկունության շնորհիվ բավարարում է ինչպես առանձին ոլորտներում գործող ձեռնարկությունների կարճաժամկետ պահանջարկը, այնպես էլ աջակցում է փոքր ընկերություններին ու ողջ տնտեսությանը՝ ապագա մարտահրավերներին դիմակայելու:

Ծրագրի շրջանակներում հնարավոր է ոչ միայն ստեղծել կամ ամրապնդել մասնավոր–դպրոց կապը, այլ նաև կիրառել դպրոցի արտադրական հնարավորությունները հենց տեղում: Օրինակ՝ Մեծ Սեպասարի դպրոցում դրամաշնորհային ծրագրով բացված ջերմոցը փաստացի չի գործում այն պարագայում, երբ բազմաթիվ գյուղական դպրոցներ կերազեին նման պայմաններ ունենալ: Բոլոր գյուղական դպրոցներում կան հնարավորություններ՝ ջերմոցային տնտեսություն ստեղծելու, այգի, փոքր ծավալներով բանջարանոցներ, արտադրամասեր ու տնտեսական գործունեության այլ ձևեր: Սա անգամ հնարավոր է կազմակերպել այն վայրերում, որտեղ մասնավոր հատվածը նման գործունեություն չի իրականացնում:

***Նպատակ 2. Գյուղատնտեսության զարգացում և եկամտաբերության բարձրացում՝ արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ:***

Այս ընդհանուր նպատակին հասնելու համար սահմանված են հետևյալ մասնավոր նպատակները՝

-*Արդյունք 2.1.* Անասնապահության եկամտաբերության ավելացում:

-*Արդյունք 2.2.* Հողագործության եկամտաբերության ավելացում:

Այս նպատակին հասնելու համար պլանավորվում է՝

- հողերի ու սերմերի որակի գնահատում (որակյալ սերմերով ցանքաշրջանառության բազայի բարելավում),
- անցում հողերի մշակման նոր տեխնոլոգիաների՝ դարավանդային գյուղատնտեսության հիմնում և այլն,
- ագրոանտառտնտեսությունների, անտառտնտեսությունների հիմնում, կաթիլային ոռոգում, հակակարկտային ցանցի բարելավում, ջրային կարուսելների համակարգի ներդրում),
- նոր տեխնոլոգիաների կիրառման համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում և ագրոբիզնեսի ոլորտ երիտասարդների ներգրավածության խթանում,
- մեղվաբուծության, այդ թվում՝ օրգանիկ մեղրի արտադրության խթանում,
- գյուղատնտեսության մեջ (այդ թվում՝ անասնապահության) օգտագործվող առաջնային անհրաժեշտության նյութերի արտադրության խթանում,
- ֆերմերային տնտեսություններին ժամանակակից գյուղտեխնիկաներով և կցորդիչներով ապահովում,
- բարձրարժեք նոր մշակաբույսերի ներդրում,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ աշխատող ջերմոցային տնտեսությունների խթանում,
- գյուղատնտեսական թափոնների վերամշակում (էկոտներ, պարարտանյութեր, կենսահումուս, տորֆ և այլն),
- հացահատիկաընդեղենի, կաթնամթերքի, մսամթերքի, պտուղ-բանջարեղենի, մրգի, հատապտղի վերամշակման խթանում,
- սառնարանային և պահեստային տնտեսությունների խթանում,
- հատապտղաբուծության խրախուսում,
- վայրի բույսերի հավաքչության և վերամշակման խթանում,
- կերի բազայի ավելացում՝ կանաչ կերերի պահեստավորման հնարավորություն, կանաչ հակավորում, պիլետավորում:

## Բուսաբուծություն, վերամշակում, արժեշղթա

### Հացահատիկային, հատիկաընդեղեն և յուղատու մշակաբույսերի աճեցում, վերամշակում

Հացահատիկային, հատիկաընդեղեն և յուղատու մշակաբույսերի աճեցման և վերամշակման ամբողջ արժեշղթայի արդյունավետ ներդրումն ունի մեծ պոտենցիալ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման, ավելացված արժեքի ստեղծման և եկամուտների ավելացման տեսանկյունից: Խիստ կարևոր է, որ առաջնային աճեցումից և ավանդական արտադրությունից անցում կատարվի ամբողջական արժեշղթայի ներդրմանը և հարակից արտադրություններին: Մասնավորապես՝ ձավարեղենից ու ալյուրից կարելի է արտադրել ավելացված

արժեք ունեցող մի շարք արտադրատեսակներ, ինչպիսիք են էներգետիկ բարերը, փաթիլները, հատուկ գլյուտենից զուրկ ալյուրը, հացը, հացիկները: Այս ամենը անհրաժեշտ է զուգորդել մեղրատու մշակաբույսերի դեպքում մեղվապահությամբ, չոր շիլաների, այլընտրանքային շոկոլադի, պաստաների, օրթոպեդիկ բարձերի, անասնակերի և այլ կարևոր արտադրատեսակների արտադրությամբ:

**Արմատապտուղների աճեցում, վերամշակում**

Համաձայն ARMSTAT-ի տվյալների՝ 2021թ.-ին Հայաստան է ներմուծվել շուրջ 4 076,9 տոննա գազար, շաղգամ, սեղանի ճակնդեղ, նեխուր, ամսաբողկ և համանման ուտելի այլ արմատապտուղներ՝ թարմ կամ սառեցված, ընդհանուր առմամբ շուրջ 1 152 431 ԱՄՆ դոլար արժողությամբ: Այս ծավալի մոտ 90%-ը բաժին է ընկնում գազարին: Գազարի աճեցման համար շատ նպաստավոր են թիրախային տարածաշրջանի ոռոգման ջրով ապահովված համայնքները՝ Ամասիան և այն համայնքները, որտեղ առկա է ոռոգման ջուր:

Գազարը քիչ ջերմություն պահանջող բույս է. նոր ծլած բույսերը դիմանում են -3-4° C ցրտին, աճի համար լավագույնը 18-20 ° C ջերմությունն է: Կարտոֆիլը հանդիսանում է լավագույն նախորդ, ուստի այն կարելի է կիրառել ցանքաշրջանառության գծապատկերներում: Ճիշտ մշակության դեպքում հնարավոր է ապահովել բարձր բերքատվություն (միջինը՝ 40, առավելագույնը՝ 80 տ/հա): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համային լավ հատկանիշներով օժտված, բարձր բերքատու սորտերի մշակությանը: Լավագույն արդյունք ստանալու համար անհրաժեշտ է ստեղծել գազարի հետբերքահավաքային մշակման և պահպանման արտադրամաս:

**Գազարի հետբերքահավաքային մշակման արտադրամաս**

**Կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացում, ցանքատարածությունների ավելացում**

Անհնար է թերագնահատել բազմամյա, բակլազգի կերային մշակաբույսերի դերը էկոհամակարգերի կայունության, ցանքաշրջանառության արդյունավետության, հողը ազոտով հարստացնելու, հողի որակը լավացնելու հարցում: Ուստի շատ կարևոր է նպաստել կերային մշակաբույսերի, մասնավորապես՝ կորնգանի սերմնաբուծության զարգացմանը:

**Նորարարական լուծումներով ջերմոցային տնտեսությունների հիմնում (ելակ, թաղարային հատապտուղներ, ծաղիկներ և այլն)**

Նորարարական լուծումներով (գեոթերմալ էներգիայի օգտագործում, ոռոգման արդյունավետ ավտոմատացված համակարգ և այլն) փոքր և միջին ջերմոցային տնտեսությունների հիմնումը և շահագործումը կնպաստեն վեգետացիոն ժամանակահատվածի երկարաձգմանը, բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը և ստացվող եկամուտների ավելացմանը: Նմանատիպ ջերմոցներում նպատակահարմար կլինի զբաղվելու բարձրարժեք մշակաբույսերի, մասնավորապես՝ ելակի, ծաղիկների, կանաչիների և տարատեսակ սածիլների աճեցմամբ: Ինչպես նաև համեմատաբար նոր, սակայն արագ տեմպերով զարգացում ապրող ճյուղի՝ թաղարային հատապտուղների աճեցմամբ: Սա թույլ կտա աճեցնել մշակաբույսեր՝ դրանց մասսայական աճի սեզոնից դուրս, և համապատասխանաբար վաճառել առավել թանկ արժեքով:

**Դեղաբույսերի և եթերայուղատու մշակաբույսերի աճեցում, վերամշակում**

Ոչ ավանդական մշակաբույսերի, մասնավորապես՝ դեղաբույսերի և եթերայուղատու մշակաբույսերի ագրոէկոլոգիական-օրգանական աճեցման խթանումը ֆերմերների համար կծառայի եկամտի նոր աղբյուր և կստեղծի սպառման նոր շուկաներ: Դրանց առաջնային և երկրորդային վերամշակումից հնարավոր է արտադրել բարձրարժեք բազմաթիվ արտադրատեսակներ, ինչպիսիք են՝ չորացված դեղաբույսեր թեյի համար, եթերային յուղեր, կոսմետիկ միջոցներ, հիդրոլատներ, սաշեներ, ինչպես նաև կոմպոստ թափոնների վերամշակումից և ստանալ համապատասխան եկամուտ:

**Կարտոֆիլի աճեցում, վերամշակում**

Չնայած այն հանգամանքին, որ կարտոֆիլը հիմնական մշակաբույս չէ թիրախային տարածաշրջանների համար, այնուամենայնիվ այն մշակվում է ոռոգովի ցանքատարածություններում և կարևոր է որպես ցանքաշրջանառության անբաժանելի մաս: Կարտոֆիլի մշակության պարագայում նույնպես կարևոր է ամբողջական արժեշղթայի փակումը, մասնավորապես՝ վերամշակումը և նոր արտադրատեսակների ստացումը:

## Անասնապահություն – վերամշակում, արժեշղթա

**Սավերոյ հաբի ստեղծում, արոտավայրերի վերականգնում**

Երկրագնդի 1/3-ն արոտավայր է, իսկ արոտավայրերի 70%-ը դեգրադացված է:

Սավերոյ հաբը հոլիստիկ և պլանավորված արածեցում է՝ նպատակաուղղված արոտավայրերի վերականգնմանը: Համապարփակ կառավարումն օգտագործում է որոշումների կայացման ու պլանավորման ընթացակարգեր, որոնք մարդկանց տալիս են պատկերացումներ և կառավարման գործիքներ: Դրանք անհրաժեշտ են բնության մեջ գոյություն ունեցող բարդ ցանցի հետ աշխատելու համար, ինչը հանգեցնում է ավելի լավ, ավելի տեղեկացված որոշումների, որոնք հավասարակշռում են հիմնական սոցիալական, բնապահպանական և ֆինանսական նկատառումները:

Ամբողջ աշխարհում խոտածածկ տարածքների էկոլոգիական վերականգնման համատեքստում Սավերոյ հաբերի մենեջերներն իրականացնում են ամբողջական /հոլիստիկ/ պլանավորված արոտավայր՝ անասուններին ճիշտ կառավարելու համար՝ ընդօրինակելով բնությանը: Որպես հետևանք՝ տեղի է ունենում արոտավայրերի վերականգնում՝ երկնիշ, նույնիսկ եռանիշ թվերով խոտածածկի տոկոսային ավելացմամբ: Համանման մոտեցմամբ և կայուն կառավարմամբ արոտավայրերի բարելավման աշխատանքներն ուղիղ համեմատական են տարածաշրջանում անասնապահության զարգացման հետ: Հայաստանում արոտավայրերի պոտենցիալը ամբողջությամբ իրացվում է միայն Շիրակի մարզում, որտեղ ծանրաբեռնվածությունը կազմում է 0,93 գլուխ/հա: Արոտավայրերի կայուն կառավարման դեպքում կնվազի կերի ծախսը և տարեկան մինչև օրերի 65%-ը կենդանիները կարող են սնվել արոտավայրերում[21]:

**Կաթի, մսի արտադրություն - վերամշակման ուղղությունների զարգացում, համադրում կերային մշակաբույսերի աճեցմանը**

Կաթնային հոտի կովեր ունեցող ամենաշատ տնտեսությունների տեղակայմամբ Շիրակի մարզը զբաղեցնում է 2-րդ տեղը Գեղարքունիքի մարզից հետո՝ կազմելով 14%: Խոշոր եղջերավոր կենդանիների մեծ մասը ևս բաժին է ընկնում Գեղարքունիքի և Շիրակի մարզերին: Արտադրող ցուլերի 44%-ը նույնպես բաժին է ընկնում Շիրակի մարզին[22]:

Կաթնամթերքի ու մսամթերքի նկատմամբ աճող պահանջարկի պայմաններում, ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրերը կունենան կարևոր նշանակություն հատկապես մանր արտադրողների (մինչև 5 կով) համախմբմանը նպաստող ծրագրերի դեպքում, քանզի մանր արտադրողների տեսակարար կշիռը բարձր է, իսկ նրանց խնդիրների լուծման հնարավորությունները՝ ցածր: Արոտավայրերի օգտագործման կայունության և արդյունավետության բարձրացման, արտադրության և վերամշակման ավտոմատացման դեպքում կստեղծվեն ոլորտի զարգացման համար նպաստավոր պայմաններ: Վերամշակող փոքր արտադրամասերի հիմնումը, նոր՝ բարձրացված արժեքով արտադրատեսակների արտադրման ուղղվածությամբ կարող են հիմք հանդիսանալ փափ ցիկլով, շրջանաձև տնտեսության սկզբունքներով արտադրության համար: Այդպիսի տնտեսություններում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կերային

[21] Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտի ուսումնասիրություն, Հայաստանում գյուղական տարածքների զարգացման հիմնադրամ, 2017 http://freda.am/wp-content/uploads/Report_FREDA_Final.pdf

[22] Տե՛ս 2:

մշակաբույսերի արտադրությանը, գոմաղբի կոմպոստացմանը և որպես պարարտանյութ օգտագործմանը:

**Ոչխարաբուծության և հարակից արտադրությունների զարգացում**

Ներկայումս հանրապետությունում ոչխարաբուծությունը զարգանում է իր արտադրատնտեսական իրական հնարավորությունների 25-30%-ի սահմաններում, մինչդեռ ցածր ռիսկայնության, առկա հնարավորությունների լիարժեք օգտագործման և ցածր ինքնարժեքով մթերքների արտադրության առումով այն բավականին հեռանկարային է մեր երկրի համար: Ավելին, վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում աճեցված ոչխարների ձեռքբերման վերաբերյալ օտարերկրյա գործարարների առաջարկությունները հուսալի երաշխիք են այս ոլորտի ներդաշնակ զարգացման համար:

Նշված հանգամանքը ոչխարաբուծությունը հանրապետությունում կարող է դարձնել մրցունակ ոլորտ և արտահանման տեսանկյունից մենաշնորհային՝ անասնաբուծության ճյուղում ընդհանրապես[23]:

Ոչխարաբուծության զարգացման ծրագրերը հիմնականում պետք է միտված լինեն ոչխարի տեղական ցեղերի մթերատու հատկանիշների բարելավման և ոչխարաբուծության ոլորտում իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացմանը: Ոչխարաբուծության խթանումն արգելակող գործոն է նաև հանրապետությունում բրդի մեծածավալ և կանոնակարգված մթերման գործընթացի բացակայությունը: Այս առումով առաջնահերթ խնդիր է նաև բրդի և ոչխարենու (բրդածածկով կաշի) մթերման կազմակերպումը: Որպես լրացուցիչ վերամշակման և վերօգտագործման ուղղություն՝ կարելի է դիտարկել այլ նպատակների համար ոչ հարմար և չօգտագործվող ոչխարի բրդից օրգանական պարարտանյութի արտադրությունը:

**Մեղվապահության (օրգանական) զարգացում, մեղրից ստացվող նոր արտադրատեսակներ, համադրում մեղրատու բուսաբուծությանը**

Մեղվապահության, հատկապես օրգանական մեղվապահության և մեղրից ստացվող տարատեսակ արտադրատեսակների, մասնավորապես մեղրի և չորացված վայրի բույսերի խառնուրդների, կրեմ մեղրի, մեղրը ծաղկափոշով, քացախի և այլ արտադրատեսակների արտադրությունը հնարավորություն կտա ավելացված արժեքի ստեղծման և բարձրարժեք ու պահաջարկ վայելող արտադրատեսակների արտադրության համար:

Այս արտադրությունների օրգանական հավաստագրմամբ իրականացումը կբացի դրանց սպառման լրացուցիչ շուկաներ: Մեղվապահության զարգացումը հատկապես կարևոր է համակցել մեղրատու բուսաբուծությանը, որը կապահովի երկկողմանի օգուտներ և՛ մեղրի, և՛ մշակաբույսերի բերքատվության բարձրացման

[23] Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծության զարգացման հայեցակարգ http://www.irtek.am/views/act.aspx?aid=62705

տեսանկյունից: Համանման արժեշղթային մոտեցմամբ ծրագրերին անհրաժեշտ է տալ առաջնայնություն:

## Նոր, այլընտրանքային ուղղությունների զարգացում

### Օրգանական գյուղատնտեսություն

Օրգանական գյուղատնտեսությունը արտադրական համակարգ է, որն ապահովում է հողերի, էկոհամակարգերի և մարդկանց առողջությունը: Այն հիմնված է էկոլոգիական գործընթացների, կենսաբազմազանության և տեղական պայմաններին հարմարեցված ցիկլերի, այլ ոչ թե անբարենպաստ ազդեցություն ունեցող միջոցների օգտագործման վրա: Օրգանական գյուղատնտեսությունը համատեղում է ավանդույթը, նորարարությունն ու գիտությունը՝ նպաստելու ընդհանուր միջավայրին, արդար հարաբերություններին և ապահովվելու կյանքի լավ որակը բոլոր ներգրավվածների համար:

Օրգանական գյուղատնտեսության կարևորագույն առավելություններից է հողակենտրոն արտադրությունը, որի հիմքում հողի որակի պահպանումն է և բարելավումը: Առողջ հողը նպաստում է կլիմայի փոփոխությունների դեմ պայքարին՝ մթնոլորտից կլանելով ածխածինը: Օրգանական գյուղատնտեսության ոլորտ ներգրավված տնտեսությունների քանակը Շիրակի մարզում ամենացածրն է, ուստի ոլորտի զարգացումը կհանդիսանա ավելացված արժեք արտադրվող գյուղմթերքների համար: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում օրգանական կերարտադրության և անասնապահության ոլորտը, այդ ճյուղերն առհասարակ զարգացած չեն Հայաստանում:

### Պերմիկուլտուրա՝ մշտատև գյուղատնտեսություն, մշտատև մշակություն

Գյուղատնտեսական արտադրական համակարգերի գիտակից նախագծում և շահագործում, որոնք ունեն բնական էկոհամակարգերին բնորոշ բազմազանություն, կայունություն ու ճկունություն:

Դա մարդկանց և լանդշաֆտի ներդաշնակ ինտեգրումն է՝ տրամադրելով նրանց սնունդը, էներգիան, ապաստարանը և այլ նյութեր և ոչ նյութական կարիքները կայուն եղանակով:

Պերմիկուլտուրան նախագծման գործընթաց է: Այն օգնում է ձևավորելու խելացի համակարգեր, որոնք բավարարում են մարդկային կարիքները, միաժամանակ բարելավելով կենսաբազմազանությունը՝ նվազեցնելով մեր ազդեցությունը մոլորակի վրա և ստեղծելով արդար աշխարհ բոլորիս համար: Մարդիկ ամբողջ աշխարհում ստեղծում են բարգավաճ համայնքներ պերմիկուլտուրայի միջոցով: Խիստ ուրախալի է այն հանգամանքը, որ հյուսիսային տարածաշրջանի ՏԱԽ-ի անդամները մասամբ տեղեկացված էին պերմիկուլտուրայի մասին և հետաքրքրված էին նման համակարգերի նախագծման հարցում: Պերմիկուլտուրայի կամ մշտատև գյուղատնտեսության ներդրումը կօգնի ապահովելու էկոհամակարգերի կայունությունը, իսկ երկարաժամկետ կտրվածքում նաև կբարձրացնի արտադրության արդյունավետությունը:

**Կայուն վայրի հավաք**

Վայրի աճող բույսերը կարող են մեծ հետաքրքրություն ներկայացնել թե՛ ֆերմերների, թե՛ արտադրող ձեռնարկությունների համար: Սակայն վայրի ռեսուրսները շատ սահմանափակ են, և անխնա հավաքելու, անզգույշ վարմունքի հետևանքով կարող են վտանգի տակ դրվել թե՛ վայրի բուսատեսակների, պոպուլյացիաների գոյությունը, թե՛ գյուղական բնակչության՝ վայրի հավաքից ստացվող կողմնակի եկամուտները: Այսպիսով՝ շատ կարևոր են գիտելիքներ ունենալը և բնությանը խնամքով վերաբերվելը, որը կարող է փոխշահավետ լինել բոլորի՝ բնության, ֆերմերների և ձեռնարկությունների համար: Կայուն վայրի հավաքը ցանկալի է իրականացնել օրգանական եղանակով, որը կհանդիսանա ավելացված արժեք և կբարձրացնի պահանջարկը նաև օրգանական վերամշակողների շրջանակում:

Վայրի հավաքն առհասարակ մեծ տարածում չունի Շիրակում, սակայն հաշվի առնելով թիրախային համայնքների բարձր դիրքադրությունը՝ կարելի է զբաղվել մի շարք վայրի բույսերի կայուն հավաքով, որը կստեղծի եկամուտի լրացուցիչ աղբյուր:

**Անվար ցանքի տեխնոլոգիա**

Անվար ցանքի տեխնոլոգիան ենթադրում է հողի նկատմամբ զրոյական կամ նվազագույն միջամտություն: Սովորական հերկման դեպքում հողի վերին շերտը ենթարկվում է հիմնաշրջման մինչև ցանքը: Հիմնաշրջմամբ վարն օգնում է օդափոխելու հողը, այն դարձնում է փխրուն, հեշտացնում է պարարտանյութերի ներմուծման և արմատագոյացման, մոլախոտերի դեմ պայքարի գործընթացները: Այնուամենայնիվ, հողի հիմնաշրջմամբ վարը մեծապես նպաստում է հողի էրոզիային, առաջացնում է հողի միկրոֆլորայի անհավասարակշռություն, հողի ածխածինն արտազատում է մթնոլորտ՝ նպաստելով ջերմոցային էֆեկտին:

Անվար ցանքի տեխնոլոգիան ենթադրում է հատուկ շարքացանի և տափանող կցորդիչի կիրառում, որի շնորհիվ հնարավոր է հողն առանց վարելու ճեղքել և իրականացնել ցանք: Այս պարագայում հողը դիտարկվում է որպես կենդանի օրգանիզմ և չի խախտվում նրա ամբողջականությունը: Անվար ցանքի դեպքում նույնպես օգուտները տեսանելի են երկարաժամկետ կտրվածքում և ճիշտ կանոնակարգի պահպանման դեպքում:

Այս տեխնոլոգիան նույնպես հայտնի էր հյուսիսային ՏԱԽ-ի որոշ ներկայացուցիչների համար: Շիրակի մարզում՝ Կառնուտ գյուղում, շնորհիվ EU GAIA ծրագրի, առկա է նման շարքացան, որը կարող է իրականացնել անվար ցանք նաև մյուս հողատարածքներում:

**Ագրոանտառտնտեսություն- դաշտապաշտպան անտառաշերտեր**

Գյուղատնտեսական անտառտնտեսությունը կամ ագրոանտառները հողօգտագործման կառավարման համակարգ է, որի ընթացքում ծառեր կամ թփեր աճեցվում են դաշտերի շրջակայքում: Գյուղատնտեսության և

անտառտնտեսության այս դիտավորյալ համադրությունը բազմազան օգուտներ է բերում, ներառյալ կենսաբազմազանության ավելացումն ու էրոզիայի նվազումը:

Գյուղատնտեսական անտառտնտեսությունը կիսում է խառը ցանքերի կիրառման սկզբունքը: Երկուսն էլ կարող են հարևանությամբ աճեցնել երկու կամ ավելի բուսատեսակներ (օրինակ՝ ազոտ ֆիքսող բույսեր):

Սննդային անտառը կանխամտածված, ծրագրված և աճեցված «անտառային տարածք» է: Այն օգտագործում է տարբեր բարձրության ծառեր ու թփեր՝ տարբեր մակարդակներով սնունդ արտադրելու և արտադրությունն առավելագույնի հասցնելու համար:

Տնկումը ոչ գծային է: Սննդի անտառները նաև օգտագործում են ինչպես հողի վերևում՝ վերգետնյա մակարդակից, այնպես էլ հողի մակարդակից ցածր՝ արտադրությունն առավելագույնի հասցնելու համար:

Պերմիկուլտուրիստների շնորհիվ վերջին տասնամյակում սննդային անտառները աճող հանրաճանաչություն են ձեռք բերել:

Ագրոանտառներում ցանկալի է կիրառել չիչխանի ու մասրենու թփեր՝ դրանց պտուղները հետագայում վերամշակելու նպատակով: Այս թփերը կարելի է կիրառել նաև որպես բնական դաշտամիջյան ցանկապատ:

Շիրակի մարզը հանրապետության ամենասակավանտառ մարզն է: Համեմատության համար նշենք, որ անտառային պետական ֆոնդը կազմում է հանրապետության տարածքի 11.2%-ը, իսկ Շիրակի մարզում այն կազմում է ընդամենը 1%: Անտառների պակասը հանգեցրել է կլիմայի խիստ չորայնության և էրոզիոն երևույթների ակտիվացման: Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը՝ ագրոանտառների ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացումը կարող է թողնել բազմակողմանի դրական ազդեցություն ագրոէկոհամակարգերի վրա:

***Նպատակ 3. Գյուղական, արկածային և սպորտային զբոսաշրջության խթանում:***

- *Արդյունք 3.1.* Զբոսաշրջիկների ու այցելուների համար զարգացած և արդյունավետ գործող հանգստի ու ժամանցային վայրերի և նոր զբոսաշրջային պրոդուկտների զարգացում, զբոսաշրջության ընդհանուր արժեշղթայի խթանում:
- *Արդյունք 3.2.* Տարածքի՝ որպես զբոսաշրջային նոր ուղղության հանրայնացում և ճանաչելիության խթանում:

Այս նպատակին հասնելու համար պլանավորվում է՝

- Արկածային և սպորտային (այդ թվում՝ ձմեռային) զբոսաշրջության զարգացում,
- գյուղական զբոսաշրջությունը խթանող պրոդուկտների ստեղծում,
- էկոզբոսաշրջային արահետների պատրաստում, վերազինում,

- պատմամշակութային հուշարձանների բարեկարգում,
- հարակից տեղական և միջազգային զբոսաշրջային շուկաների հետ համագործակցության խթանում,
- նորարարական մոտեցումներ կիրառող սննդի և գիշերակացի ծառայությունների ստեղծում, ինչպես նաև զբոսաշրջային արժեշղթան լրացնող այլ ծառայությունների խթանում,
- տարածաշրջանի բրենդը հանրայնացնող աշխատանքների աջակցություն,
- տարածքի մասին տեղեկատվության ապահովում վիրտուալ և իրական հարթակներում,
- տարածքի զբոսաշրջային պոտենցիալը հանրայնացնող նորարարական միջոցառումների կազմակերպում (տոնավաճառներ, փառատոներ և այլն)։

Այս շրջանը հարուստ չէ պատմամշակութային հուշարձաններով և զբոսաշրջային գրավչություններով։ Տարածաշրջանում մշակութային զբոսաշրջության զարգացման հնարավորությունները սահմանափակ են։ Երկար ու ձյունառատ ձմեռները պետք է դիտարկել որպես հիմնական զբոսաշրջային ակտիվ շրջան։

Այս տարածաշրջանի դեպքում զբոսաշրջության զարգացման առավել հեռանկարային տարբերակ կարող է լինել ձմեռային զբոսաշրջությունը՝ երկու հիմնական թիրախային շուկաներում առաջխաղացման հեռանկարով՝ արկածային և ընտանեկան։

Նախնական շրջանում տարածաշրջանի առաջարկի իրացման առաջնային շուկա առաջարկվում է դիտարկել Ներքին զբոսաշրջային շուկան։

**Ձմեռային-արկածային զբոսաշրջության համատեքստում նպաստավոր պայմաններ կան հատկապես նշված ձևերի համար՝**

- լեռնադահուկային սպորտ
- սնոուբորդինգ
- սահնակային սպորտ
- շնասահք
- դահուկավազք
- սկանդինավյան քայլք
- ձնային ռաֆտինգ
- սնոուկայտինգ

Զբոսաշրջության շուկայում **ընտանեկան փորձառությունների** պահանջարկի շարունակական աճի պայմաններում, առաջարկի դիրքավորումն **ընտանեկան զբոսաշրջության շուկայում և հարմարեցումը այս շուկայի առանձնահատուկ պահանջներին լուրջ մրցակցային առավելություններ կտան տարածաշրջանին**։

Մասնավորապես՝ **հարկ է զարկ տալ մանկապատանեկան տարիքի այցելուների համար նախատեսված ծառայությունների, հետաքրքրությունների, գրավչությունների ստեղծմանը:**

Մանկապատանեկան զբոսաշրջային ծառայությունների օրինակներ՝

- Մանկահասակ երեխաների խնամքի, զբաղվածության կենտրոններ
- Ատրակցիոններ, պուրակներ, թեմատիկ այգիներ
- Մանկապատանեկան ճամբարներ, բանակումներ
- Մանկապատանեկան սպորտային և այլ փառատոներ, մրցույթներ

## Տարածաշրջանի զբոսաշրջային ռեսուրսի փուլային զարգացման գործողությունների պլան

- Առաջին փուլում՝ ձմեռային զբոսաշրջության բուն ենթակառուցվածքների ստեղծմանը զուգահեռ (սահուղիներ և այլն), առաջարկվում է սկսել մեկօրյա փառատոների, քվեստների կամ նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպումից: Քանի որ կացարաններ չկան, առաջարկվում է սկսել ցերեկային միջոցառումներից՝ զբոսաշրջային շարժն ու պահանջարկը խթանելու համար:
  *Որպես օրինակ կարելի է դիտարկել Արենի գյուղը և Վայոց ձորի տարածքը, որտեղ Գինու փառատոնի շնորհիվ զբոսաշրջության ծավալներն սկսել են ինտենսիվ աճել:*
- Հաջորդ փուլում արդեն ավելի խոշոր գրավչության ստեղծման հարկ կլինի, և ըստ այդմ առաջարկում ենք դիտարկել թեմատիկ այգու ստեղծման տարբերակը: «Սանտայի տան» գաղափարը շրջանառվում է և եթե հաջողությամբ իրականացվի, կարող է բացառիկ մրցակցային առավելություն տալ շրջանին:
- Զբոսաշրջային հոսքերի ակտիվացմանը զուգահեռ՝ շրջանի առավել ակտիվ համայնքներից մեկում առաջարկվում է հիմնել տեղեկատվական կենտրոն (կամ համայնքային զբոսաշրջային կենտրոն), որը կսպասարկի ՏԱԽ 1 ամբողջ տարածաշրջանին՝ նպաստելով զբոսաշրջային մշակույթի զարգացմանը, միաժամանակ դառնալով զբոսաշրջության ինստիտուցիոնալ հիշողության կենտրոնը:
  Կենտրոնն ինքնաֆինանսավորման և ֆինանսական հոսքերի ապահովման մեխանիզմներ կարող է կիրառել: Որպես հաջողված օրինակ՝ միջազգային շուկայում կարելի է դիտարկել զբոսաշրջային գույքի վարձակալության ծառայությունը:
- Զուգահեռաբար շրջանի զբոսաշրջային հնարավորությունները ներկայացնող և ուղղորդող ցուցանակներով հարկ է կահավորել տարածաշրջանով անցնող միջազգային նշանակության և այլ կարևոր

ճանապարհները՝ այս կերպ գրավելով Վրաստանից Հայաստան (նաև հակառակ) ուղղությամբ ճամփորդող զբոսաշրջիկների ուշադրությունը:

Այս ցանկում ներկայացված են **հավելյալ** զբոսաշրջային ծառայություններ ու զբոսաշրջության տեսակներ, որոնք կարող են առաջարկվել բուն՝ ձմեռային զբոսաշրջային առաջարկին զուգահեռ: Սրանք կարող են **հավելյալ գրավչություն** և հավելյալ զբոսաշրջային այցելություններ ապահովել տարածաշրջանում նաև **մյուս սեզոնների ընթացքում՝**

- Արշավներ, ձիարշավներ, ամենագնացներով երթեր
- Ձկնորսություն
- Ռաֆթինգ, բայակավարություն (կայակինգ)
- Էկոզբոսաշրջություն
- Ագրոզբոսաշրջություն
- Աստղազբոսաշրջություն (Աստղադիտումներ)

**Առաջխաղացման միջոցառումներ**

*Զբոսաշրջային առաջարկի ձևավորումից հետո արդեն հարկ կլինի վերջինիս ներկայացումն ու առաջխաղացումը զբոսաշրջային շուկայում:*

Խիստ կարևոր է բարձր որակի թվային ներկայության (լուսանկարներ, հոդվածներ, տեսանյութեր և այլն) ապահովումը թվային զբոսաշրջային հարթակներում (համացանցում *առհասարակ):*

Կարևոր են նաև համագործակցությունը ներգնա և ներքին զբոսաշրջությամբ զբաղվող կազմակերպությունների հետ, վերջիններիս համար ճանաչողական այցերի կազմակերպումը, թարմացումների, նոր առաջարկների մասին տեղեկության տրամադրումը:

**Տեղեկատվական կենտրոնի ստեղծում**

Տարածաշրջանային զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի առկայությունը ևս կարևոր առաջնահերթություն է: Այն ոչ միայն տեղում զբոսաշրջիկների **ուղղորդման** կարևոր հարցը կլուծի, այլ նաև կստանձնի **տվյալների հավաքման** և **վերլուծման** կարևորագույն պատասխանատվությունը:

Գործունեության ընթացքում կենտրոնում հավաքված տվյալները ծառայությունների որակի անընդհատ բարելավման, շուկայի պահանջների արդյունավետ գնահատման հնարավորություն կստեղծեն:

Ըստ այդմ՝ առաջարկվում է ընտրված համայնքում հիմնել տեղեկատվական կենտրոն (կամ համայնքային զբոսաշրջային կենտրոն), որը կսպասարկի ամբողջ տարածաշրջանը՝ դառնալով զբոսաշրջության ինստիտուցիոնալ հիշողության կենտրոն:

## 4.3 Միջոլորտային թեմաներ

Լիդեր մոտեցման հիմնական բաղադրիչները հիմք ընդունելով՝ Հյուսիսային ուղի ՏԱԽ-ը սույն ռազմավարությամբ նպատակ ունի ստեղծելու զարգացման մի նոր՝ նախկինում տարածքում չկիրառված մոդել, որը, բնակիչների ֆինանսական բարեկեցությունն ապահովելուց զատ, հատուկ շեշտադրում կկատարի նաև սոցիալական ներառման, կանանց ու տղամարդկանց հավասար հնարավորություններ ընձեռելու և նրանց գործողություններն առավելագույնս ի նպաստ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղելու վրա: Այդ նպատակով ՏԱԽ-ը համագործակցել է նշված երեք ոլորտների փորձագետների հետ, որոնք, վերլուծելով ՏԱԽ բնակավայրերում իրենց ոլորտային առանձնահատկությունները, հանդես են եկել առաջարկների փաթեթներով, որոնց կիրառությունն ավելի նկատելի ու երկարաժամկետ զարգացում կապահովի: Այն ծրագրերը, որոնք կներկայացվեն ՏԱԽ-ին ֆինանսական աջակցություն ստանալու ակնկալիքով, պետք է իրենց գործողություններում հնարավորինս արտացոլեն այդ առաջարկները՝ բնականաբար հարմարեցված իրենց ծավալած գործունեությանը: Կան առաջարկներ, որոնք կարող է իրականացնել հենց ՏԱԽ-ը:

### 4.3.1 Գենդերային հավասարություն

Հաշվի առնելով Շիրակի մարզում և ծրագրի իրականացման համայնքներում իրականացված հետազոտությունների ու վերլուծությունների տվյալները՝ ներկայացվել են ծրագրի գենդերային ռազմավարության հետևյալ առաջարկները:

Գենդերային հավասարությունը գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման ոլորտում

1. Ծրագրի բոլոր բաղադրիչներում գենդերային հավասարության ներուղղում (Gender mainstreaming), այսինքն՝ ծրագրի բոլոր բաղադրիչները պետք է դիտարկվեն կանանց և տղամարդկանց խնդիրների, կարիքների ու առաջնահերթությունների դիտանկյունից:

   Գենդերային ներուղղումը ենթադրում է՝

   - Ծրագրի, դրանով նախատեսված գործողությունների մշակման, պլանավորման, ընթացքի, մոնիտորինգի, կարճաժամկետ և երկարատև գնահատման գործողություններում գենդերային ցուցանիշների ներդրում:
   - Գենդերային արդյունավետ ներուղղում ապահովելու նպատակով իրականացնել շահառու համայնքներում գենդերային տարաբաժանված և զգայուն քանակական ու որակական ցուցանիշների (gender disaggregated data) հավաքագրում:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվում է «Հայաստանի կանայք և տղամարդիկ» և «Հայաստանի մարզերը՝ թվերով» վիճակագրական տարեգրքերի հրապարակումը, որոնք դժվարությամբ են համադրվում, քանի որ ներկայացվում են գենդերային տվյալներ՝ մարզային ոչ մանրամասն ցուցանիշներով, իսկ մարզային ցուցանիշները չեն պարունակում գենդերային մանրամասն տվյալներ, ինչպես, օրինակ, գյուղատնտեսական զբաղմունքների գենդերային տվյալներ գյուղատնտեսության և անասնապահության մեջ՝ ըստ ճյուղերի, եկամտի ստացման և բաշխման մարզային կամ ըստ համայնքների տվյալներ, ժողովրդագրական մանրամասն տվյալներ՝ ըստ համայնքների՝ ներառյալ տարիքային խմբերը՝ ըստ սեռի, կանանց քաղաքական և հանրային մասնակցության մանրամասն տվյալներ՝ ըստ համայնքների։

Ծրագրի իրականացման, ինչպես նաև համայնքների զարգացման արդյունավետությունը սերտորեն կապված է լավ և մանրամասն վիճակագրության հետ։ Շիրակի մարզում բնակչության 53%-ը կանայք են։ Հետևաբար, կանանց կարիքները նկատի չառնելը բացասական ազդեցություն է ունենում ամբողջ հասարակության վրա, քանզի նրանք կազմում են բնակչության մեծամասնությունը, ռեսուրսների և ներուժի կեսը, և այդ ռեսուրսները կմնան չօգտագործված, եթե կանայք սահմանափակված լինեն ոչ արդար ու խտրական գործոններով։

*Իրականացնել շահառուների գենդերային վերլուծություն և շահառուների կարիքների գնահատում՝ ըստ սեռի։ Այս տվյալներն օգտակար են լինում համայնքային զարգացման խնդիրներում միայն տղամարդկանց և օգնում են վերլուծելու կանանց համար առաջնահերթ հիմնախնդիրները և դրանց ազդեցությունները երկու սեռի վրա* [24] ։

*Իրականացնել համայնքային զարգացման ծրագրերում գենդերային հավասարության մասին կարողությունների զարգացման և ոչ ֆորմալ կրթության գործողություններ* ՝ դասընթացներ, ծրագրեր, քննարկումներ՝ գենդերային իրազեկվածության մակարդակի բարձրացման և զարգացման ծրագրերի արդյունավետ պլանավորման համար։ Այս գործողության թիրախ խմբերն են՝ ծրագրում ընդգրկված համայնքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչները, ՏԱԽ անդամները, դրամաշնորհների դիմորդները՝ որպես կողմնորոշիչ աջակցող գործողություն մրցունակ դրամաշնորհներ կազմելու նպատակով։

[24] Ծրագրի ելակետային զեկույցը ներառում է առաջնահերթությունների և խնդիրների ներկայացում՝ SS-ների, համայնքային և համապետական մակարդակներում, սակայն այս առաջնահերթությունների գենդերային դիտանկյունները կօգնեն ծրագրի՝ խնդիրների առավել արդյունավետ թիրախավորմանը։

2. ***Նպաստել շահառու համայնքներում եկամտի բազմազանեցմանը և տնտեսական զարգացմանը՝ հաշվի առնելով գենդերային հավասարության և կանանց հզորացման խնդիրները:***

Այստեղ առաջարկվում է *ավանդական գիտելիքներ-նոր հմտություններ* սկզբունքի կիրառումը, քանի որ համարվում է, որ զարգացման ծրագրերն սկզբում պետք է հիմնվեն կանանց ու տղամարդկանց ավանդական գործողությունների և հմտությունների վրա՝ արդյունավետ սկիզբ ապահովելու համար: Այս մոտեցման դեպքում առաջարկվում է իրականացնել գործողություններ, որոնք կնպաստեն կանանց ու տղամարդկանց ավանդական գիտելիքների ու հմտությունների ապրանքայնացմանը և առևտրայնացման հնարավորությունների զարգացմանը:

Այս բաղադրիչի համար առաջակվում է իրականացնել՝

- Մշակութային ժառանգության և ստեղծարարության գենդերային ախտորոշում, այսինքն՝ ավանդական գիտելիքի ու հմտությունների տեղական համայնքային մշակութային առանձնահատկությունների և կենսունակ ոչ նյութական մշակութային ժառանգության պրակտիկաների, արհեստագործական ավանդույթների հմտությունների քարտեզագրում, ուսումնասիրություն՝ ըստ կանանց ու տղամարդկանց ոլորտների՝ այնուհետև համայնքային զարգացման մեջ այս բաղադրիչի ներուժը կիրառելու համար:

Տարբեր հետազոտություններ փաստել են, որ տեղական մշակութային ժառանգության մասին կանայք կարևոր գիտելիքի են տիրապետում: Ավելին, նրանք ոչ միայն տեղական, ոչ նյութական մշակութային ժառանգության մասին գիտելիքի ու հմտությունների պարզ փոխանցողներ են, այլև նորարարություններ են կիրառում այս ոլորտներում: Նրանք լավագույն փորձագետներն են ծնունդի, թաղման ու հարսանյաց ծեսերի, կրոնական ժողովրդական պրակտիկաների, որոնք համայնքների կյանքում կարևոր կարգավորող դերակատարում ունեն: Կանայք նաև խորը գիտելիքներ ունեն իրենց համայնքների բնության ժառանգության մասին, որը առանցքային կարևորություն ունի էկոհամակարգերի, բիոբազմազանության և կլիմայի փոփոխությունների հարցերում: Տղամարդկանց ու կանանց ավանդական գիտելիքը տարածքի ու միջավայրի մասին փոխլրացնող է և ներկայացնում է հասարակության արտադրական մշակույթի տարբեր կողմերը: Տեղական մշակութային ժառանգության մասին գիտելիքի ներառումը համայնքային ծրագրերում կարող է դառնալ եկամուտ ստեղծող գործողություն և նպաստել համայնքում գենդերային հարաբերությունների ներդաշնակեցմանը:

- Նոր մշակաբույսերի, անասնապահության կամ տնտեսական այլ գործողություններում տեխնիկական նորարարությունների մասին գիտելիքի հասանելիության ապահովում:
- Նոր տեխնոլոգիաների և նոր զբաղվածության հնարավորությունների հասանելիության ապահովում:

Վերը նշված կետերով առաջարկվող միջամտությունների իրականացման նպատակով հետազոտությունները փաստում են, որ ավանդական հմտությունները պետք է համալրվեն նորարարությամբ, երբ պարզ դառնա, որ ունեցած գիտելիքն ու հմտությունները եկամտաբերություն չեն ապահովում: Շիրակի մարզում մասնագիտական հմտությունների և մասնագիտության ընտրության վիճակագրությունը ցույց է տալիս, որ իրավիճակը խնդրահարույց է: Այսպես, ըստ վիճակագրության՝ Շիրակի մարզում ըստ մասնագիտության աշխատում են տղամարդկանց ընդամենը 7,4%-ը, իսկ կանանց՝ 11,2%-ը: Կրթությունն ընդհատելու պատճառներում ցուցանիշները ևս մտահոգիչ են. այսպես, կրթությունն ընդհատած կանանց 42,2%-ը այդպես են վարվել ամուսնանալու պատճառով, մինչդեռ տղամարդկանց ընդամենը 4,5%-ն է ամուսնանալու պատճառով ընդհատել կրթությունը: Իսկ սեզոնային աշխատանքի մեկնելը տղամարդկանց 10%-ի համար է դարձել կրթությունը թողնելու պատճառ: Այս ցուցանիշները հստակ ցուցում են հասարակական գենդերային դերերի ու պարտականությունների մասին, ինչը որպես հետևանք ազդում է կրթության իրավունքի վրա:

Այս ցուցանիշը վկայում է նաև մասնագիտական կողմնորոշման թույլ կարողությունների ու հնարավորությունների մասին, ինչը բնականաբար ազդում է նաև գենդերային իրողությունների և աշխատաշուկայի գենդերային սեգրեգացիայի դինամիկայի վրա:

Շուկայի հասանելիության խթանում, որը կարող է ենթադրել արտադրողների, կոոպերատիվների և ֆիզիկական ենթակառուցվածքների ստեղծում, ինչպես, օրինակ՝

-մայրուղիների, բանուկ ճանապարհների շուկաների ստեղծում,
-համայնքային գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի կետերի ստեղծում:

3. *Դրամական կամ վարկավորման ռեսուրսների հասանելիության ապահովում:*

Այս դեպքում հաշվի առնելով, որ հաճախ միայն կանանց համար նախատեսված վարկային ծրագրերն առիթ են դառնում ֆորմալ ձևակերպումների և չեն կարողանում, այդպիսով, նպաստել նրանց հզորացմանը, միայն կանանց համար նախատեսված վարկային ծրագրերում սահմանել նրանց առաջնորդող դերն ու

պատասխանատվությունը և որոշումների ընդունմանը մասնակցությունը ցույց տվող հստակ չափանիշներ։

4. ***Ծրագրով նախատեսված գործողություններով փորձել ազդել համայնքներում առկա գենդերային պատկերացումների, անհավասարությունների մեղմման և կանանց հզորացման վրա։***

Այս նպատակով առաջարկվում է՝

***Նպաստել «աշխատանք-կյանք ներդաշնակ համադրում» աշխատանքային մշակույթի և մոտեցման կիրառմանն ու տարածմանը։***

Համարվում է, որ կանանց համար զբաղվածության հնարավորություններ ստեղծելը բավարար չէ գենդերային սահմանափակումները վերացնելու և կանանց հզորացման համար։ Այս դեպքում որպես բացասական հետևանք կարող ենք հանդիպել կանանց կրկնակի շահագործման երևույթին (կանանց աշխատանքային ծանրաբեռնվածություն, երբ վճարովի աշխատանքային պարտականությունները ուղեկցվում են կենցաղային և ընտանիքի անդամների խնամքի պարտականություններով, որոնք չեն փոխվում կամ նվազում անգամ վճարվող աշխատանք ունենալու դեպքում)։

Որպես այս ուղղությամբ կոնկրետ լուծումներ առաջարկվում է՝

- Խրախուսել և ներմուծել կանանց ու տղամարդկանց համար նորմավորված աշխատաժամերի մշակույթ,
- աշխատանքային ժողովները, հանդիպումները, քննարկումները հնարավորության սահմաններում իրականացնել աշխատավայրում և աշխատանքային օրվա ընթացքում՝ հնարավորինս խուսափելով ոչ աշխատանքային օրերին ու ժամերին աշխատանքային պարտականությունների համար աշխատանքի գնալը,
- կանանց ակտիվ մասնակցություն ենթադրող ծրագրերում երեխաների խնամքի ծառայությունների ու հնարավորությունների ստեղծում ծրագրի կողմից կամ աջակցությամբ,
- օգտագործել գենդերային զգայուն լեզու, օրինակ՝ աշխատատեղերի հայտարարության մեջ կանանց մասնակցությունը խթանելու համար հնարավորինս մանրամասն նշելով աշխատանքային պարտականություններն ու պայմանները, գրաֆիկը և այլն,
- խրախուսել ըստ կարողությունների և կոմպետենցիաների համարժեք վճարումը՝ բացառելով սեռով պայմանավորված խտրությունը աշխատավարձերի միջև, երբ նույն աշխատանքի դիմաց նույն կոմպետենցիաներով տղամարդը վճարվում է ավելի բարձր։ Այս մոտեցումը

խթանելու համար առաջարկվում է ներառել ծրագրում ընդգրկված աշխատուժի պարտականությունների ու պահանջվող հմտությունների և դրա դիմաց վճարման մանրամասն նկարագրություն։

***Խրախուսել կանանց մասնակցությունը համայնքի հասարակական և տնտեսական կյանքին։***

- Ապահովել ռազմավարության տեսանելիության և հեղինակության, առաջխաղացման բարձրացման գործողություններ, քանի որ այն անուղղակիորեն նպաստում է կանանց հասարակական ծրագրերին մասնակցության հնարավորությանը։
- Ապահովել ռազմավարությամբ իրականացված ծրագրերի հաջողված կանանց պատմությունների հավաքագրում ու հանրայնացում։
- Ապահովել Շիրակի և այլ մարզերի գյուղական համայնքներում կին ձեռներեցների հետ հանդիպումների հնարավորություն՝ փոխադարձ այցելություններով ու համատեղ քննարկումներով։
- Իրականացնել երիտասարդ կանանց, ավագանու կին անդամների և ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց համար առաջնորդության կարողությունների զարգացման ոչ ֆորմալ կրթության դասընթացների կազմակերպում։

Ծրագրի շրջանակներում կազմակերպվող բոլոր դասընթացների, հանդիպումների և քննարկումների գենդերային զգայունության բարձրացման համար

- Ներգրավել կին մենթորների և փորձագետների՝ դրական վարքային մոդելների խրախուսման նպատակով։ Հնարավորության դեպքում ներգրավել տեղացի կին փորձագետների ու դասընթացավարների։
- Միջոցառումների անցկացման վայրերը, ժամերը և պայմանները ներկայացնել հանրային, հնարավորինս մանրամասն նկարագրությամբ։
- Միջոցառումների ժամի ընտրության հարցում հաշվառել կանանց զբաղվածության սահմանափակումները՝ ընտանեկան կամ գյուղատնտեսական աշխատանքներով պայմանավորված։
- Միջոցառումների անցկացման վայրի ընտրության հարցում կողմնորոշվել համայնքում այդ վայրի հանդեպ դրական, ապահով ու անվտանգ ընկալվելու մոտեցումներով։ Հնարավորության դեպքում երիտասարդների ներգրավում ենթադրող ծրագրերը փորձել իրականացնել համայնքում դպրոցի մասնակցությամբ (ինչպես տարածքի օգտագործման, այնպես էլ իրազեկման ու մասնակիցների ներգրավման աշխատանքներում), քանի որ ոչ ֆորմալ կրթական ծրագրերում երիտասարդ աղջիկների մասնակցությունը գյուղական համայնքներում կարող է սահմանափակվել այդ դասընթացների անցկացման վայրով պայմանավորված։ Դպրոցը՝ որպես հանրակրթական միջավայր, համայնքում համարվում է ապահով և «ստուգված» տարածք, ինչը կարող է լրացուցիչ վստահություն հաղորդել միջոցառումներին։

- Քննարկումների, հանդիպումների համար երիտասարդական հանրային, ֆիզիկական ապահով ու անվտանգ, գրավիչ տարածքների ստեղծում, կահավորում:

**Գենդերային հավասարությունը կրթության ոլորտում**

Ավանդական գիտելիքի նորացման և նորարարությունների, նորարարական գիտելիքի խթանման համար առաջարկվում է *իրականացնել կարողությունների զարգացման և ոչ ֆորմալ կրթության հետևյալ ծրագրերը՝*

***Մասնագիտական կողմնորոշման դասընթացներ և ծրագրեր՝*** հիմնված շահառու համայնքների աշխատուժի կարիքների գնահատման վրա: Մասնագիտական կողմնորոշման դասընթացները կարևոր են երիտասարդների համար՝ աշխատաշուկայում իրենց իրացվելիության բազմազան հնարավորությունները պատկերացնելու համար: Արդյունավետ մասնագիտական կողմնորոշումը կարող է դառնալ համայնքային զարգացման կարևոր հնարավորություն: Ներկայումս կրթական համակարգը չի նախատեսում սովորողների մասնագիտական մրցունակ կողմնորոշման գործիքակազմ: Ծրագիրը կարող է դառնալ համայնքային կրթական միջավայրում ոչ ֆորմալ կրթական ծրագրերով այս խնդրին արձագանքող:

***Մասնագիտական նոր հմտությունների ձեռքբերմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր:***

Ոչ ֆորմալ կրթության ծրագրերի օրինակներ են՝

- ձեռնարկատիրական հմտությունների զարգացում,
- գյուղատնտեսության մեջ նորարարությունների ուսումնասիրություն,
- բարձրարժեք մշակաբույսերի մշակություն,
- գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման հմտությունների զարգացում,
- մասնագիտական հմտությունների բարելավում:

***Գենդերային կարծրատիպային պատկերացումների փոփոխությանն արձագանքելու նպատակով կանանց ու տղամարդկանց համար համատեղ իրականացնել՝***

- Դրական ծնողավարման, երեխաների դաստիարակության, խնամքի, կրթության հարցերում գենդերային խտրականությունների բացասական դերերի խնդիրների քննարկման մասին դասընթացների կազմակերպում:
- Ընտանեկան հարաբերությունների, երեխաների դաստիարակության վրա սեզոնային աշխատանքային միգրացիայի բացասական ազդեցության մասին համայնքային, հանրային քննարկումների նախաձեռնում, արձագանքման ծրագրերի մշակում:

- Խմբային, միջսերնդային ծրագրերի խթանում, որը կարող է նպաստել համայնքի սոցիալական համերաշխության բարձրացմանը և գենդերային անհավասարությունների մեղմմանը:

### 4.3.2 Բնապահպանություն

Հյուսիսային ուղի ՏԱԽ-ի բնակավայրերում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների շրջանակներում առաջարկվում է բնահեն լուծումների փաթեթ՝ հաշվի առնելով ռազմավարական առաջնահերթ ուղղությունները՝ կրթությունն ու գյուղատնտեսությունը:

**Միջոլորտային մոտեցումներ**

***Համայնքային բնապահպանական գործողությունների պլանի ներառում տեղական զարգացման ռազմավարություններում:*** ՏԱԽ-ի շարունակական աշխատանքի արդյունքում կազմել Համայնքային բնապահպանական գործողությունների պլան՝ համադրելով ու տեղայնացնելով *ԲՊՄՄ բնահեն լուծումների համաշխարհային ստանդարտների շրջանակի*[25] և *GEN-ի Էկոգյուղերի ձևավորման ուղեցույցի*[26] համապատասխան սկզբունքները: Հանդիպումներն առաջարկվում է անցկացնել *Էկոգյուղերի ձևավորման քարտերի*[27] կիրառմամբ սոցիալական ինտերակտիվ խաղի ձևաչափով, որի արդյունքում հենց տեղաբնակների կողմից կվերհանվեն և կամրագրվեն *Համայնքային բնապահպանական զարգացման պլանի* հիմնական դրույթները:

***Բնապահպանական ուղեցույցի մշակում Հյուսիսային ուղի ՏԱԽ-ի տարածքում գործող / նորաստեղծ ՓՄՁ-ների, ՀԿ-ների կամ անհատների կողմից իրականացվող ծրագրերի համար:***

Մատչելի ուղեցույցը կնպաստի համայնքային բիզնես միջավայրում բնապահպանական պատասխանատվության ինտեգրմանը, տեղացիների մտածելակերպում դրա կարևորության, դրական ազդեցությունների ձևավորմանը: Ուղեցույցը կկազմվի՝ տեղի ձեռնարկատիրական ներուժի առանձնահատկությունները և ծրագրային առաջնահերթությունները հաշվի առնելով: Ուղեցույցի գործնական կիրառման եղանակների վերաբերյալ կարելի է կազմակերպել կեսօրյա ինտերակտիվ աշխատարան:

***Էկո-սոցձեռներեցությունների հնարավորությունների ներկայացում շահառու համայնքներում նախապես վերհանված խնդիրների հիման վրա:***

[25] ԲՊՄՄ բնահեն լուծումների համաշխարհային ստանդարտների շրջանակ: Հղումը՝ այստեղ:
[26] GEN-ի Էկոգյուղերի ձևավորման ուղեցույց: Հղումը՝ այստեղ:
[27] Էկոգյուղերի ձևավորման քարտեր: Հղումը՝ այստեղ:

- Տարածաշրջանին հատուկ ուտելի բույսերի հիմքով սննդի արտադրություն, ռեստորանային, հյուրատնային բիզնես (բուսակերական)։
- Բրդի, կաշվի թափոնների ավելցուկի վերամշակում (պարարտանյութի, շինանյութի, գործվածքի արտադրություն)։

**Բնապահպանությունը գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման ոլորտում**

*1. Առավել գիտահեն լուծումների մշակում ու տարածում*

- Ցանքաշրջանառությունների ու հողում խոնավության կուտակման ավանդական ձևերի համատարած կիրառություն։
- Հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառություն, որոնք առավելապես անվնաս են շրջակա միջավայրին։
- Բարձր կալորիական, բարձր սննդային արժեք ունեցող մշակաբույսերի աճեցում՝ որպես այլընտրանք արոտավայրերին։ Այն հնարավորություն կտա նաև նվազեցնելու հողի հնարավոր էրոզիոն վտանգները, գերարածեցման ռիսկը։
- Հողի որակի վերլուծության լաբորատորիաների հիմնում, պարարտացման նորմերի սահմանում՝ ըստ հողի որակի ու մշակաբույսի առանձնահատկության, բացառելով հողերի և ստացվող բերքի անվտանգությունը։
- Խոզանի այրման մշակույթի բացառում, որպես հետևանք՝ արտանետումների կրճատում և թափոնների վերամշակում։
- Փորձի փոխանակման ու խորհրդատվական հարթակների ստեղծում առցանց ու կամավոր հիմունքներով՝ տարածելու կայուն գյուղատնտեսության հաջողված օրինակներն ու փորձը։ Տեղացի ֆերմերների մասնագիտական վերապատրաստումներ։

*2. Ռեսուրսների արժևորում և կայուն օգտագործում*

- Ջրային ռեսուրսների առավել կայուն օգտագործում։ Գետային ցանցի աղտոտման դեպքերի բացառում կոյուղաջրերով և կենցաղային աղբով։ Անձրևաջրերի հավաք ու օգտագործում տնային տնտեսությունների մակարդակով։
- Թափոնների կառավարում, այդ թվում՝ հանքարդյունաբերական, անասնաբուծական և օրգանական այլ ծագման թափոնների կիրառության ոլորտների մշակում ու փորձարկում։
- Որսագողության կանխում և վայրի կենդանատեսակների թվաքանակի կարգավորում։

- Արոտների կայուն կառավարում: Համայնքամերձ արոտներում ծանրաբեռնվածության բացառում:
- Վայրի հավաքի կանոնակարգում, որտեղ առկա են ռիսկեր:

*3. Բնակլիմայական անբարենպաստ պայմանների մեղմում ու տարերային աղետների ռիսկերի նվազեցում*

- Դաշտապաշտպան, ճանապարհապաշտպան ու ջրային մակերեսները ստվերացնող անտառաշերտերի հիմնում, արդյունքում գոլորշիացման նվազում ու ձյան շերտի առավել երկար պահպանում հողի մակերեսին:
- Պերմակուլտուրայի ու բույսերի փոխլրացման սկզբունքների հիման վրա մոդելային տնկարկների հիմնում:
- Գրունտային ջրերի ավելացում՝ լեռնային անտառների մակերեսի ավելացմամբ:

**4. Զբոսաշրջության զարգացում**

- «Արփի լիճ» ազգային պարկում, Ախուրյան գետի կիրճում, Բավրայի ջրամբարում և ձմեռային սպորտի զարգացող ուղղություններով Աշոցքում, Աչքասարում, Ծաղկաշենում, Սարաձորում վայրի բնության մեջ քայլարշավների կազմակերպում, լեռնային արշավներ, թռչնադիտումներ և մեկօրյա հանրային այլ միջոցառումների կազմակերպում շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնելու պայմանով:
- Ագրոտուրիզմի հնարավորությունների լայն կիրառություն Պեմզաշենում և այլ բնակավայրերում, որտեղ կան հյուրատներ կամ զբոսաշրջային պարզ հանգրվաններ: Այստեղ կա տարատեսակ կամ տարածաշրջանի համար յուրահատուկ մշակաբույսերի աճեցման կամ կենդանատեսակների բուծման փորձ, այդ թվում՝ մեղվաբուծության և մեղվաբուժության (ապիթերապիա): Կայուն և անգամ օրգանական գյուղատնտեսության փորձի տարածում:
- Զբոսաշրջային հանգրվաններում արևային էներգիայի ու անձրևաջրերի օգտագործման հնարավորությունների ներդրում, թափոնների տեսակավորված հավաք և կայուն կենսակերպի խրախուսում:

**Բնապահպանությունը կրթության ոլորտում**

*1. Շահառու համայնքներում բնապահպանական կրթական ցանցի ստեղծում*

Համայնքային դպրոցները կարող են դառնալ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված գործողությունների ցուցադրական, մոդելային վայրեր ու մշակել ոչ ֆորմալ ծրագրահեն ուսուցման մեթոդաբանություն / դասապլան դպրոցահասակների թիրախային խմբերի համար, որը, առանցքում ունենալով կրթական նյութեր/տեղեկատվություն տարածաշրջանային բնական ռեսուրսների, կենսաբազմազանության և

բնապահպանական ժամանակակից միտումների (կանաչ կենսակերպ, զրո թափոն, էկոզբոսաշրջություն, էկոգյուղատնտեսություն) վերաբերյալ, ներկառուցված կունենա նաև կարողությունների զարգացման բաղադրիչ (փափուկ հմտություններ, «կանաչ» մասնագիտական կողմնորոշում ևն)։ Հնարավոր է կազմակերպել նաև դասընթաց դասընթացավարների համար (ToT)։

Երկարաժամկետ հեռանկարում դպրոցներում ստեղծված էկոկրթական կենտրոնները կարող են ընդարձակել թիրախային խումբը՝ շարունակական (բնապահպանական/բնահեն) կրթության ոլորտ ներգրավելով տարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների, որոնք կարող են հաճախել կենտրոնում պարբերաբար կազմակերպվող հանդիպում/քննարկում/դասընթացների, ստանալ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն։

Այս կետի իրականացման համար առաջարկվում է համագործակցել Ա.Լ. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի հետ, տեղայնացել նաև GEN-ի *«Կանաչ դպրոց՝ կայուն համայնք»*[28] ծրագրային մոտեցումը։

***2. Բնապահպանական իրազեկման բարձրացմանը, վերաբերմունքի փոփոխությանն ուղղված էկոմիջոցառումների կազմակերպում***

- **Բնարվեստի / Էկոարվեստի / Թափոնարվեստի (Environmental Art, Eco-Art, Waste Art) փառատոն(եր):** Գյումրիում և Ամասիայում պլաստիկ թափոններից արտ-օբյեկտների ստեղծման հաջողված նախադեպի օրինակով արդեն եղած վիզուալ նյութի վրա մշակել փառատոնի ծրագիր, լայնորեն տարածել միջազգային երիտասարդական հարթակներում։
- Ներգրավել շահառու համայնքների դպրոցահասակներին/երիտասարդներին, փառատոնի շրջանակում ունենալ տարածաշրջանային/միջհամայնքային մակարդակով առանձին անվանակարգեր։
- **Էկո-հեք (hackathon, hackfest) մտագրոհ-հանդիպումներ**[29]**:** Ներկայումս Հայաստանում շեշտակի զարգացող SS ոլորտի խոշոր ներկայացուցիչների կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում հատկապես համայնքային, այդ թվում՝ բնապահպանական ծրագրերին ֆինանսական և բնեղեն աջակցության աճող միտում է նկատվում։ Հնարավոր է՝ SS համայնքի ներգրավմամբ շահառու համայնքների բնապահպանական խնդիրներին ուղղված արդի տեխնոլոգիական լուծումները մշակել ու ներդնել։

- **Տեղեկատվական էկոարշավներ**։ Տարածաշրջանին բնորոշ, տեղի բարբառով պարզ կարգախոսների մշակում, սոցիալական տեսահոլովակների ստեղծում և տարածում, սոցմեդիա հարթակում մրցույթների անցկացում։

[28] Global ecovillage network. Retrieved from: https://ecovillage.org/projects/ecovillage-programmes/greening-schools/
[29] University of Saskatchevan. Retrieved from: https://sustainability.usask.ca/programs/ecohack.php#WhatisEcoHack

Շահառու համայնքներում (սոց)տեղեկատվական ցուցապաստառներ՝ նույն կարգախոսներով:

- **Թեմատիկ, միջազգային օրերի ներառում, ամենամյա միջոցառումների պլանավորում** (Թռչունների օր, Երկրի օր և այլն):

- **«Բնապահպանություն և գենդեր»** թեմայով հանդիպում-աշխատարանի կազմակերպում համայնքներում, որի ընթացքում կշեշտադրվի կանանց դերը բնապահպանական գործընթացներում՝ հաջողության պատմությունների ներկայացմամբ:

***3. Թափոնների «կանաչ» կառավարում***[30]

- **Օրգանական թափոնների համայնքային կոմպոստավորում**
- **Դպրոցահասակների կողմից մետաղական, պլաստիկե թափոնների հավաքագրում՝** որպես բնապահպանական կրթական ծրագրի մաս, ներառյալ նաև վերոգրյալ էկո-արտ փառատոնի հնարավոր հումք:

## 4.3.3 Սոցիալական ներառում

ՏԱԽ-ի գործունեության հիմնական նպատակներից է նպաստել թիրախային համայնքների բնակիչների կյանքի որակի բարելավմանը՝ սոցիալական ներառման խթանմամբ և համայնքային միջավայրը տարբեր սոցիալական խմբերի համար ավելի հարմարավետ դարձնելով: Այս ամենը կբերի գյուղական համայնքների զարգացմանը՝ դարձնելով դրանք ավելի լավ վայր ապրելու, աշխատելու և ստեղծագործելու համար: Կարևոր է նշել, որ 2021-2026 թթ. իր ծրագրում ՀՀ Կառավարությունը ևս կարևորել է պայքարը աղքատության ու սոցիալական բացառման դեմ՝ սահմանելով այն իր թիրախային ուղղություններից մեկը:

ՏԱԽ-ը պատրաստակամ է ապահովելու իր տարածքում ապրող տարբեր սոցիալական խմբերի՝ ներառյալ մշակութային և կրոնական խմբերի, հաշմանդամություն ունեցող անձանց, ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքների կամ այլ խոցելիություն ունեցող անձանց ներգրավվածությունը իր ռազմավարությունների մշակման և իրականացման գործընթացում: Վերոնշյալ խմբերի սոցիալական ներառումն ապահովելու համար ՏԱԽ-ը կարևորում է նաև պետական և համայնքային ծառայությունների հետ կապերի ամրապնդումն ու զարգացումը, որոնք առաջնայնորեն աշխատում են տարբեր սոցիալական խմբերի՝

[30] Community Composting: A Practical Guide for Local Management of Biowaste. Retrieved from: https://zerowasteeurope.eu/wp-content/uploads/2019/04/zero_waste_europe_fertile_auro_guide_community-composting_en.pdf

ներառյալ մշակութային և կրոնական խմբերի, հաշմանդամություն ունեցող անձանց, ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքների կամ այլ խոցելիություն ունեցող անձանց հետ: Այստեղ մասնավորապես խոսքը համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի և միասնական սոցիալական ծառայությունների մասին է:

Սոցիալական ներառմանը հնարավոր կլինի հասնել նաև համայնքներում ապրող տարբեր սոցիալական խմբերին «միավորող» նախաձեռնությունների խրախուսմամբ, որոնք մեկ հարթակում կհավաքեն համայնքի բոլոր սոցիալական շերտերի ներկայացուցիչներին:

ՏԱԽ-ը հատուկ կարևորում է իր կողմից ֆինանսավորվող և / կամ իրականացվող ծրագրերում սոցիալական ներառումը խթանող բաղադրիչի առկայությունը, քանի որ այն Լիդեր մեթոդաբանության կարևորագույն սկզբունքներից մեկն է: Ծրագրեր մշակելիս ՏԱԽ-ը խրախուսում է դիմորդներին խորհրդակցել ՏԱԽ տարածքում ապրող տարբեր սոցիալական խմբերի հետ՝ ներառյալ մշակութային և կրոնական խմբերի, հաշմանդամություն ունեցող անձանց, ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքների կամ այլ խոցելիություն ունեցող անձանց հետ՝ իրենց մոտեցումներն ու կարծիքները ներկայացված ծրագրերում արտացոլելու նպատակով: Վերոնշյալ խմբերը պետք է հավասարապես մասնակցեն կամ օգտվեն իրականացվող ծրագրի գործողություններից և ոչ մի կերպ բացասական ազդեցություն չկրեն ծրագրերի իրականացման արդյունքում: ՏԱԽ-ի առաջնահերթություններից է տարածքում գործող սոցիալական ձեռնարկությունների զարգացումն ու նորերի ստեղծմանը նպաստելը:

**Սոցիալական ներառումը գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման ոլորտում**

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ՏԱԽ տարածքում ապրող շատ սոցիալական խմբեր իրականացվող ծրագրերին չեն մասնակցում իրազեկված չլինելու կամ իրականացվող ծրագրերի մասին խորը, համապարփակ պատկերացում կամ վստահություն չունենալու պատճառով: Վերոնշյալը հաշվի առնելով՝ ՏԱԽ-ը յուրաքանչյուր ծրագիր իրականացնելիս և / կամ ֆինանսավորելիս պետք է համայնքի բնակիչների շրջանում որոշակի իրազեկվածության աշխատանքներ իրականացնի, որի արդյունքում ՏԱԽ տարածքում ապրող տարբեր սոցիալական խմբեր ավելի ակտիվ կմասնակցեն իրականացվող ծրագրերին:

ՏԱԽ տարածքում ապրող տարբեր սոցիալական խմբեր՝ ներառյալ մշակութային և կրոնական խմբեր, երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքները կամ այլ խոցելիություն ունեցող անձինք, ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն

գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալելու և իրականացվող ծրագրերի շահառու դառնալու համար: Այդ ամենը պայմանավորված է առաջին հերթին իրենց տրամադրության տակ գտնվող նյութական ռեսուրսների սակավությամբ կամ բացակայությամբ, ինչպես նաև արդյունավետ և արդի գյուղատնտեսության հնարավորությունների մասին գիտելիքների պակասով: Ընդհանրապես ՏԱԽ տարածաշրջանի շատ ֆերմերներ գյուղատնտեսությամբ զբաղվում են որպես կես դրույքով գործունեություն: Ցածր եկամուտները և գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի սեզոնայնությունը ևս կարող են աղքատության և սոցիալական բացառման համար մեծ վտանգ ստեղծել: Ավելին, գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսական հողերի մասնատվածությունը և տնտեսական գործունեության փոքր չափերի խնդիրներն աղքատության ու սոցիալական բացառման մեկ ուրիշ ցուցիչ են ֆերմերների և նրանց ընտանիքների համար: Առաջարկվում է ՏԱԽ տարածաշրջանում ստեղծել ֆերմերների դպրոց, ինչպես նաև սկսնակ գյուղատնտեսության աջակցության ծրագրեր մշակել: Արդյունավետ կլինի թիրախավորել հատկապես ՏԱԽ տարածաշրջանում ապրող երիտասարդներին, քանի որ նրանք ավելի հակված են վարքագծային փոփոխությունների գյուղատնտեսության ոլորտում, արդի մոտեցումների որդեգրման համատեքստում:

Սոցիալական ներառման խթանման և բիզնեսի համատեղ զարգացման լավագույն օրինակը սոցիալական ձեռնարկությունների գործունեությունն է: Սոցիալական ձեռնարկատիրության հայեցակարգը կարող է գործածական լինել կազմակերպությունների լայն շրջանակի համար, որոնք տարբեր են իրենց չափերով, հետապնդվող նպատակներով: Եթե սովորական ձեռնարկատերերը, որպես կանոն, գնահատում են իրենց գործունեության հաջողությունը՝ կողմնորոշվելով դեպի շահույթը, եկամուտը (վաճառքների ծավալ) կամ բաժնետոմսերի արժեքը, ապա սոցիալական ձեռնարկատիրոջ համար հաջողության գլխավոր չափանիշը դառնում է «սոցիալական նվիրումը» և «սոցիալական ներառումը»:

ՏԱԽ-ի ընդհանուր մոտեցումը պետք է լինի տարածաշրջանում սոցիալական ձեռնարկությունների ստեղծումը և արդեն իսկ առկա ձեռնարկությունների աջակցությունը՝ նոր շուկաներ գտնելու, կարողությունները զարգացնելու և ձեռնարկության գործունեությունն ընդլայնելու:

Ավելի նախկինում և ներկայում իրականացվող ՓՄՁ ձեռնարկությունների զարգացման ծրագրերի գերակշիռ մասը հասանելի չէր կամ չէ ՏԱԽ տարածքում ապրող տարբեր սոցիալական խմբերի՝ ներառյալ մշակութային և կրոնական խմբերի, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների, ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքների կամ այլ խոցելիություն ունեցող անձանց: Կարևոր է մշակել ՓՄՁ զարգացման այնպիսի ծրագրեր, որոնք կթիրախավորեն նաև սկսնակ ձեռնարկատերերին, քանի որ նրանք մեկնարկային ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն:

ՏԱԽ տարածքում ապրող տարբեր սոցիալական խմբերի՝ ներառյալ մշակութային և կրոնական խմբերի, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքների կամ այլ խոցելիություն ունեցող անձանց աջակցության հնարավորություններից մյուսն էլ կարող է հանդիսանալ «Աղքատության փուլային հաղթահարման» մոդելի կիրառումը և դրա համար որոշակի ֆինանսավորման հատկացումը: Այն ենթադրում է իրար հաջորդող, բազմասեկտորալ միջամտություններ, որոնց արդյունքում վերոնշյալ սոցիալական խմբերը հաղթահարում են աղքատությունը՝ դառնալով կայուն տնտեսություններ: Տվյալ գործընթացում վերոնշյալ խմբերը ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, որոնք նախադրյալ կլինեն զարգացման տարբեր ծրագրերի շահառու դառնալու համար:

Հնարավորության դեպքում ՏԱԽ-ը կաշխատի տարածաշրջանում արդեն իսկ գործունեություն ծավալող ՓՄՁ-ների հետ՝ խրախուսելով սոցիալապես խոցելի խմբերի անդամներին զբաղվածության ապահովման հարցում: Կարևոր է նշել, որ այս գործընթացում չափազանց կարևոր է հաշվի առնել բիզնես շահը, ինչպես նաև ձեռնարկությունների զարգացման և շարունակականության համատեքստը:

**Սոցիալական ներառումը կրթության ոլորտում**

2009 թվականին Բուդապեշտում կազմակերպված «Գյուղական համայնքներում աղքատության և սոցիալական բացառման դեմ պայքարի» վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված համաժողովն ուշադրություն հրավիրեց գյուղական աղքատության հիմնական գործոնների վրա, որոնք ներառված էին իր զեկույցում: Դրանցից էին նաև կրթությունը, աշխատաշուկայի հասանելիությունը և համայնքների կտրվածությունը (remoteness):

Կրթությունը և ուսուցումը հիմնական գործոններն են, որոնք դրականորեն են ազդում քաղաքացիների կյանքի որակի վրա, և հետազոտությունները ցույց են տալիս, որ գյուղական շրջանները հիմնականում հետ են մնում կրթված աշխատուժի առումով: Ներկայումս ֆորմալ կրթությանը հավասար կարևոր է նաև ոչ ֆորմալ կրթության առկայությունը: Առաջարկվում է ստեղծել երիտասարդների ոչ ֆորմալ կրթության կենտրոն, աջակցել տարածաշրջանում առկա միջին մասնագիտական կրթական կենտրոններին վերազինվելու, կրթական մոդուլների աշխատաշուկայի պահանջներին համապատասխանացնելու և շուկայի հետ կապերն ամրապնդելու առումով: ՏԱԽ-ի կողմից ֆինանսավորվող և / կամ իրականացվող ծրագրերում հնարավորության դեպքում առաջարկում է ավելացնել ոչ ֆորմալ կրթության բաղադրիչ (օրինակ՝ փորձնակների ծրագրի իրականացում, իրականացվող ծրագրին համապատասխան դասընթացի մոդուլի մշակում կամ ոչ ֆորմալ կրթության կենտրոնում դասընթացների, աշխատարանների կազմակերպում): Առաջարկվում է նաև տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների միջոցով (Birthright, Peace Corps, EVC և այլն) ՏԱԽ

տարաշրջանի համայնքներ ներգրավել միջազգային կամավորների, որոնք նաև օտար լեզուների դասընթացներ կկազմակերպեն բնակիչների համար։

ՏԱԽ տարածաշրջանի բազմաթիվ ներառական նախակրթարաններն ու դպրոցներն ունեն նեղ մասնագետներ։ Քանզի սոցիալական ներառումն առաջին հերթին սկսվում է հենց նախակրթարաններում և դպրոցներում ներառականության առկայությունից, բովանդակային առումով բավականին շատ աշխատանքի տեղ կա։ Անհրաժեշտ է տվյալ հաստատությունները և՛ ֆիզիկապես (շենքային պայմաններ ու հագեցվածություն), և՛ բովանդակային առումով (մասնագետների վերապատրաստում և կրթական նյութերի համապատասխանեցում հատուկ կարիքներով երեխաների կրթական կարիքներին) ներառական դարձնել։

Առաջարկվում է ՏԱԽ-ին սերտորեն համագործակցել խոշորացված համայնքների ՏԻՄ-երի և Շիրակի մարզպետարանի հետ, որպեսզի տարածաշրջանում պլանավորվող բոլոր ծրագրերում հաշվի առնվի սոցիալական ներառման համատեքստը, և թե ինչքանով է տվյալ ծրագիրը նպաստում համայնքում ներառականության խթանմանը։ Ապագայում ՏԱԽ-ը կարող է դիտարկել իրեն որպես տարածաշրջանում սոցիալական ներառումը խթանող, շահերի պաշտպանության նախաձեռնություններ իրականացնող մարմին։

## 4.4 Ռիսկերի գնահատում

Գծապատկեր 9-ում վեր են հանվել ռազմավարության իրականացման ընթացքին խոչընդոտող հնարավոր ռիսկերն ու դրանց կանխարգելման կամ արձագանքման մեխանիզմները։

| **Ռիսկի տեսակը** | **Ռիսկի նկարագրություն** | **Ռիսկի հավանականությունը** | **Ռիսկի հնարավոր ազդեցությունը** | **Ռիսկերի կանխարգելման / արձագանքման գործողություններ** |
|---|---|---|---|---|
| **Ռազմավարության իրականացմանը սպառնացող ռիսկեր** | Սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը երկրում անկայուն է։ | միջին | միջին | -Մննդի անվտանգությանն ուղղված ծրագրերի իրականացում։ |
| | Բնական կամ մարդկային գործոնով | միջին | բարձր | -Բնակչության դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացում։<br><br>-Մարզին բնորոշ աղետների կանխարգելման/ իրազեկման ծրագրերի իրականացում։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանավորված աղետներ։ | | | -Աղետի ազդեցությունից կախված արագ արձագանքման գործողությունների իրականացում։ |
| | Տարածքային և տեղական իշխանությունները հակված չեն համագործակցության։ | ցածր | բարձր | Տեղեկատվության շարունակական փոխանցում ու թափանցիկության ապահովում։ |
| | Բնակչությունը հակված չէ համագործակցելու։ | ցածր | բարձր | Համագործակցելու պատրաստակամություն ունեցող բնակիչների հետ աշխատանքի տեսանելի արդյունքների տարածում համայնքներում։ |
| | Երիտասարդ ընտանիքները արտագաղթում են գյուղերից։ | բարձր | բարձր | -Ծրագրի շրջանակներում նոր աշխատատեղերի ու եկամտի նոր աղբյուրների ստեղծմամբ արտագաղթի տեմպի նվազման ապահովում։<br><br>-Բնակավայրերի ավագ սերնդի ներկայացուցիչների թիրախավորմամբ երիտասարդ ընտանիքների ներգաղթի համար նախադրյալների ստեղծում։ |
| | Շահառուները չեն իրագործում ՏԱԽ բրենդի կոնցեպտին համա-պատասխան դրույթները։ | միջին | բարձր | -Մեծացնել ՏԱԽ-ի բրենդի առաջխաղացմանն ուղղված միջոցառումների ծավալներն ու տարածել բրենդի ներքո հանդես եկող բիզնեսների հաջողության պատմությունները՝ օգտագործելով սոցիալական ու հեռուստատեսային հարթակները։<br><br>-Զարգացնել բրենդի առաջխաղացման աշխատանքային խմբի կարողությունները։ |
| | Շահառուները հակված չեն կիրառելու նորարարական | ցածր | բարձր | Ճանաչողական այցերի միջոցով գործնականում ցուցադրել նորարար տեխնոլոգիաների ու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մոտեցումներ ու տեխնոլոգիաներ։ | | | մոտեցումների կիրառման արդյունավետությունը։ |
| **Կրթության զարգացման ծրագրերի արդյունքներին հաս-նելուն սպառնացող ռիսկեր** | Շահառուները և տարածքի բնակչությունը չեն կրում ռազմավարական զարգացման նպատակները։ | բարձր | բարձր | ՏԱԽ-ի ու ՏԻՄ-ի համագործակցությամբ տարածել ռազմավարության հիմնական դրույթներն ու հաջողված բիզնեսների օրինակները։ |
| | Շահառուները չեն իրականացնում դրամա-շնորհային պայմանագրով սահմանված դրույթները։ | միջին | բարձր | Պայմանագրային դրույթների պարզաբանում։ |
| | Տեղացիները չեն գիտակցում կրթական նախաձեռնությունների կարևորությունը։ | բարձր | բարձր | -Ճանաչողական այցերի կազմակերպմամբ ու հաջողակ օրինակների ցուցադրությամբ ոլորտի հանդեպ հետաքրքրության մեծացում։<br><br>-Վարքագծի փոփոխությանն ուղղված միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ TED talkեր, իրական պատմությունների ներկայացում, սերունդների երկխոսության հնարավորությունների ստեղծում և այլն։ |
| | Շահառուները հակված չեն կիրառելու նորարարական մոտեցումներ և տեխնոլոգիաներ։ | ցածր | բարձր | Փորձի փոխանակման նպատակով ճանաչողական այցերի կազմակերպում շահառուների ու նորարարական լուծումներով հագեցած բիզնես/ հանրային ծրագրեր իրականացնողների միջև ՀՀ-ում ու արտերկրում։ |
| | Շահառուները չունեն կրթության ոլորտում հանրային կամ բիզնես ծրագրերի գաղափարներ։ | բարձր | բարձր | |
| | Շահառուները հակված չեն սովորելու նոր և արդի | | | Նոր հմտություններ ձեռք բերելու համար նախատեսված դասընթացներին մասնակցությունը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գիտելիքներ / հմտություններ։ | ցածր | բարձր | դարձնել դրամաշնորհ ստանալու պայմաններից մեկը։ |
| | Շահառուները, մասնավորապես՝ մանկավարժները, չեն ընդունում կրթական նոր մեթոդների կիրառումը։ | բարձր | բարձր | Թիրախավորել համագործակցությանը բաց շահառուներին ու նրանց փորձի տարածմամբ մեծացնել նոր մեթոդների կիրառումը կրթական գործընթացում։ |
| **Գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման ծրագրի արդյունքնե-րին հասնելուն սպառնացող ռիսկեր** | Համապատասխան օրենսդրությունը չի մնում նույնը կամ փոփոխվում է ի վնաս ֆերմերների և փոքր բիզնեսի։ | ցածր | միջին | Շահերի պաշտպանության միջոցառումների իրականացում։ |
| | Շահառուները հակված չեն սովորելու նոր և արդի գիտելիքներ / հմտություններ։ | միջին | բարձր | Նոր հմտություններ ձեռք բերելու համար նախատեսված դասընթացներին մասնակցությունը դարձնել դրամաշնորհ ստանալու պայմաններից մեկը։ |
| | Անկայուն գներ գյուղմթերքների շուկայում։ | միջին | միջին | Պատասխանատու գերատեսչություններից կատարել տեղեկատվության հավաքագրում, վերլուծել իրավիճակն ու առաջարկներ ներկայացնել ՏԱԽ բնակչությանը։ |
| | Ոչ բավարար մուտք դեպքի անհրաժեշտ ֆինանսներ։ | միջին | միջին | Հատուկ վարկային փաթեթների բանակցում միկրոֆինանսավորող և զարգացման կազմակերպությունների հետ։ |
| **ՏԱԽ-ի գործունեությանն առնչվող** | ՏԱԽ-ի անդամները կորցնում են խմբի գործունեության հանդեպ հետաքրքրությունը։ | | | Գյուղերում շարունակական այցերի ու հանդիպումների արդյունքում պոտենցիալ նոր անդամների բացահայտում։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **կազմակերպական ռիսկեր** | | միջին | բարձր | |
| | ՏԱԽ-ի խորհուրդը չի պահպանում անաչառությունը ծրագրերի ընտրության փուլում: | միջին | բարձր | Խորհրդի նոր կազմի ընտրությունների կազմակերպում: |
| | ՏԱԽ-ի երիտասարդ անդամներն արտագաղթում են ՏԱԽ բնակավայրերից: | միջին | բարձր | ՏԱԽ-ի կազմում հավասարակշռել երիտասարդների ու ավագ սերնդի այն ներկայացուցիչների թիվը, որ հակված չեն գյուղը լքելու, իսկ երիտասարդների բացը լրացնել դպրոցների հետ ակտիվ համագործակցությամբ: |
| | ՏԱԽ-ի անդամները չեն պահպանում գործընկերության հուշագրի դրույթները: | ցածր | բարձր | Հուշագրից բխող գործողությունների իրականացում: |
| | ՏԱԽ-ի շարունակականության համար չկան բավարար դրամական միջոցներ: | բարձր | բարձր | Մեծ ռեսուրսներ ներդնել ՏԱԽ-ի ֆոնդահայթայթման խմբի կարողությունների զարգացման համար: |

**Գծապատկեր 9:** *Հնարավոր ռիսկերի գնահատում*

## 4.5 Նորարարություն

Նորարարությունը Լիդեր մոտեցման հիմնական բաղադրիչներից մեկն է և արտացոլված է սույն Ռազմավարության թեմատիկ առաջնահերթությունների՝ ընդհանուր և մասնավոր նպատակների մեջ՝ ընդգծելով համայնքային զարգացման մեջ նորարարական մոտեցումների ու ստեղծարարության կարևորությունը: Նորարարական գաղափարների գեներացմանը նպաստելու և ստեղծարարությունը խթանելու համար ՏԱԽ-ի անդամների ու պոտենցիալ շահառուների հետ պարբերաբար կանցկացվեն նորարարության դասընթացներ, այդ թվում՝ սոցիալական նորարարության մասին, ինչը հնարավորություն կտա ՏԱԽ-ի անդամներին աջակցելու պոտենցիալ շահառուներին՝ իրենց գաղափարների

նորարարականության բաղադրիչը զարգացնելու, իսկ շահառուներին՝ փոխելու բիզնեսի ու համայնքային զարգացման ավանդական մոտեցումները՝ օգտագործելով նորարարական տեխնոլոգիաներ ու մոտեցումներ, որոնք տարածքում երբևէ չեն օգտագործվել: ՏԱԽ-ի շահառուները նաև հնարավորություն կունենան աշխատելու նորարարության փորձագետի հետ՝ իրենց ծրագրային գաղափարները զարգացնելու համար:

Տարածքում նորարարական մտածելակերպը խթանելու և տեղացիներին նորարարական գաղափարներով աջակցելու համար պարբերաբար կկազմակերպվեն նորարարությունը խթանող միջոցառումներ, որտեղ կներկայացվեն նորարարական տեխնոլոգիաներ, որոնք հնարավոր է օգտագործվեն ռազմավարական առաջնահերթություն հանդիսացող ոլորտների արդյունավետ զարգացումն ապահովելու համար:

Ամփոփելով՝ նորարարության խթանում կիրականացվի գործողության վրա հիմնված կրթության մոտեցումներում, որոնք կարող են փորձարարաբար կիրառվել ՏԱԽ-ի հետ. հաջողության դեպքում ՏԱԽ-ը կարող է այն կիրառել կարողությունների զարգացման տարբեր իրավիճակներում: Այսպիսով, նորարարության զարգացումը կենթադրի մի գործընթաց, որը հաշվի է առնում 70/20/10 կանոնը կրթական նախաձեռնություններում. 70% գիտելիքն ու հմտությունն առաջանում են իրենց աշխատանքին առնչվող փորձից ու առաջադրանքներ իրականացնելուց, 20%-ը՝ փորձի փոխանակումից, ուրիշների հետ շփումներից ու հարաբերություններ ստեղծելուց, իսկ 10%-ը՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական գործողություններից: Հետևաբար, ՏԱԽ-ի և տարածաշրջանի բնակիչների համար կկազմակերպվեն տարբեր վերապատրաստումներ, դրանց առնչվող այցեր, հատկապես ռազմավարություն գերակայությունների ոլորտում գործող նորարարական նախաձեռնություններ / բիզնեսներ, ինչպես նաև հենց իրենք կմասնակցեն նման նախաձեռնությունների մշակմանն ու իրականացմանը դրամաշնորհների և այլ միջացառումների համատեքստում:

## 4.6 Կայունություն

Կայունությունը կենտրոնական դեր ունի ՏԱԽ-ի ռազմավարության, ինչպես նաև Լիդեր մոտեցման պատշաճ կիրարկման մեջ, ոչ միայն ՏԱԽ-ի կազմակերպական զարգացման, այլև ՏԱԽ-ի կողմից աջակցվող ծրագրերի կայուն ազդեցության ապահովման տեսանկյունից: ՏԱԽ-ում ընդգրկված բոլոր տեղացիները, ծրագրի շահառուները պարտավոր են խթանել ու պահպանել շրջակա միջավայրը,

խնայողաբար օգտագործել տարածքի ռեսուրսները՝ իրենց բիզնեսի և համայնքային ծրագրերի իրագործման ժամանակ և դրանից դուրս:

Ռազմավարության մեջ տեղ գտած առաջնահերթությունները, նպատակներն ու գործողությունների ծրագիրը մշակվել են՝ հաշվի առնելով Ավստրիական զարգացման գործակալության Բնապահպանական, գենդերային և սոցիալական ներառման ազդեցության կառավարման ձեռնարկի[31] սկզբունքներն ու ստանդարտները, որոնք ենթադրում են՝ շրջակա միջավայրի կայունություն և բնական ռեսուրսների խելամիտ օգտագործում, անհավասարությունների վերացում, տնտեսության մեջ անվնաս տեխնոլոգիաների կիրառում, սոցիալական ներառում, պատշաճ կենսապայմանների ապահովում:

Ռազմավարության շրջանակներում աջակցվող ծրագրերը պետք է տրամադրեն ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության արդյունքները, դեռևս հայտադիմումների ստացման փուլում:

ՏԱԽ-ի աշխատանքում կայունության սկզբունքների կիրառումը խթանելու նպատակով կկազմակերպվեն դասընթացներ, որոնք հնարավորություն կտան ՏԱԽ-ի անդամներին և պոտենցիալ շահառուներին ավելի լավ հասկանալու ԱԶԳ-ի կայունության սկզբունքները և հետևողականորեն օգտագործելու դրանք ՏԱԽ-ի աշխատանքներում ու աջակցվող ծրագրերում:

Կայունության համատեքստում կիրականացվեն ծրագրեր, որոնք ոչ միայն ուղղված են միջավայրի, այլև հենց ՏԱԽ-ի ու իրականացված ծրագրերի շարունակականության ապահովմանը: Դրա համար ՏԱԽ-ի հետ ստեղծման պահից կունենա նման քննարկումներ, որոնք կվերածվեն հաջորդական քայլերի: Մասնավորապես՝ արդեն կան որոշակի հիմքեր, որոնք կսահմանեն ՏԱԽ կայունության ուղիները և ռազմավարությունը.

- Գյուղմթերքի բաժնի ստեղծում ու կարողությունների զարգացում: Բաժինը ծառայություններ կմատուցի տարածաշրջանի ֆերմերներին և ստեղծվելիք/գործող բիզնեսներին՝ ապահովելով ներդրանքների և վերջնական արդյունքերի շուկաներ:
- Ստեղծված բիզնեսներին ՏԱԽ-ը կարող է նաև մատուցել հաշվապահական ծառայություններ, երբ մի քանի բիզնես կօգտվեն միևնույն հաշվապահի ծառայությունից՝ կրճատելով ծախսերը:
- Հյուսիսային ուղի բրենդի առաջշարժում ու տարածում (մարկետինգ): Կատարել բրենդի ներքո հանդես եկող բիզնեսների առաջարկած ապրանքների/ ծառայությունների որակի ստուգում ու գնահատում, ինչպես նաև սահմանել պայմանները, ըստ որոնց՝ տվյալ բիզնեսները կարող են հանդես գալ բրենդի ներքո (Հավելված 7).

[31] EGSIM_Manual_Juni2018.pdf (entwicklung.at)

- Համագործակցել կրթության ու գյուղատնտեսության զարգացմամբ զբաղվող այլ կազմակերպությունների հետ.
- Իրականացնել ստեղծված բիզնեսների խորհրդատվության, ուղղորդման և կապերի ապահովման ծառայություններ.
- Ստեղծել ֆոնդահայթայթման թիմը, որը կաշխատի ինստիտուցիոնալ ու մյուս դոնորների հետ, ինչպես նաև կստեղծի ֆոնդահայթայթման գործողությունների փաթեթ՝ ուղղված ՏԱԽ տեղական և արտերկրի սփյուռքին, և այլ հետաքրքրված կազմակերպությունների ու անհատների.
- Վերհանել զարգացման պոտենցիալ ունեցող բիզնես գաղափարներ՝ հաշվի առնելով Հյուսիսային ուղի ՏԱԽ-ի աշխարհագրական ու ռեսուրսային առանձնահատկությունները և ստեղծել ՏԱԽ-ի ներքո աշխատող տարբեր բիզնեսներ, որոնց շահույթը կծախսվի տվյալ բիզնեսների հզորացման և ՏԱԽ նպատակների իրագործման համար։

## 4.7 Այլ ռազմավարությունների և նախագծերի հետ համապատասխանեցման ապահովում (քաղաքականության համատեքստ)

Ռազմավարության մշակման, առաջնահերթությունների սահմանման ու գործողությունների պլանի կազմման համար մանրամասնորեն ուսումնասիրվել են թիրախ բնակավայրերն ընդգրկող համայնքների հնգամյա զարգացման պլանները, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը և ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգը։

Տեղական զարգացման ռազմավարության նպատակներն ամբողջությամբ համապատասխանում են մարզի զարգացման ռազմավարության երեք հիմնական գերակայություններից երկուսին, այն է՝ *գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում, փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում։* Մյուս կողմից, մարզի զարգացման ռազմավարությունն անդրադառնում է նաև սոցիալական ներառմանը՝ ի թիվս այլ գերակայությունների, մասնավորապես՝ ընդգծելով *սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման և համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովման կարևորությունը։* Այս առումով, ռազմավարության բոլոր ընդհանուր նպատակների իրականացումը բխում է նաև մարզային զարգացման ռազմավարությունից և հնարավորություն է ստեղծում սիներգիաների ստեղծման համար։

Աշոցք և Ամասիա համայնքների համայնքային զարգացման հնգամյա պլանները ևս արտացոլում են սույն ռազմավարության առաջնահերթություններն ու նպատակները, մասնավորապես՝ ընդգծելով *գյուղատնտեսության*

*(հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործմամբ*: Հատկանշական է, որ զարգացման ծրագրերում ևս նշվում է գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման, գյուղմթերքի ծավալների ավելացման, վերամշակման խթանման ու եկամտաբերության բարձրացման մասին: Մյուս կողմից, ծրագրերը նաև կարևորում են բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, սպասարկման ոլորտի զարգացումը:

Անդրադառնալով կրթության, մասնավորապես՝ նախադպրոցական և արտադասարանական կրթության, ինչպես նաև սոցիալական ծառայությունների հասանելիությանը, զարգացման ծրագրերը նպատակադրում են բարելավել պայմաններն ու ընդլայնել ծառայությունների շրջանակը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ սույն Ռազմավարությունն ամբողջապես համապատասխանում է մարզի զարգացման ռազմավարության և թիրախ համայնքների զարգացման ռազմավարական նպատակներին ու գերակայություններին, ինչը ցույց է տալիս, որ Ռազմավարության մշակման ժամանակ պահպանվել է տեղացիների և թիրախ համայնքների համայնքապետարանների ներկայացուցիչների մասնակցությունը, իրականացվել է առկա փաստաթղթերի համապարփակ վերլուծություն:

# 5. Ցանցային կապեր և համագործակցություն

Կապերի ստեղծումն ու համագործակցությունը Լիդեր մոտեցման կարևոր բաղադրիչներից են, որոնք գտնվում են սույն Ռազմավարության արդյունավետ իրականացման հիմքում: Կապերի ստեղծումն ու համագործակցությունը այս համատեքստում կարող ենք դիտարկել երեք հիմնական պիլարներով՝

1) **Միջոլորտային համագործակցություն**

Ռազմավարական նպատակներին լավագույնս հասնելու համար անհրաժեշտություն կա խթանելու ոչ միայն ՏԱԽ-ը կազմող երեք հիմնական ոլորտների /հանրային, մասնավոր և քաղաքացիական հասարակություն/ սերտ փոխգործակցությունն ու համատեղ աշխատանքը, այլ նաև խթանելու սերտ համագործակցությունը ռազմավարական առաջնահերթություններում ընդգրկված ոլորտների և դրանց ներկայացուցիչների միջև՝ բազմարկելով յուրաքանչյուր իրականացված ծրագրի արդյունք և ապահովելով կայուն գործընկերային մթնոլորտ: Այսպես, օրինակ՝ գյուղատնտեսական ու զբոսաշրջության ոլորտների ներկայացուցիչների

փոխգործակցության խթանմամբ երկու ոլորտներն էլ ավելի կզարգանան՝ դառնալով միմյանց ապրանքների ու ծառայությունների սպառողը։

2) **Տեղական ՏԱԽ-երի միջև համագործակցություն**

Փորձի փոխանակման, քաղած դասերի, լավագույն պրակտիկաների կիրառման տեսանկյունից անհրաժեշտ է խթանել համագործակցությունն ու ստեղծել ամուր կապեր Շիրակի մարզում և ՀՀ այլ մարզերում գործող ՏԱԽ-երի հետ։ Այս առումով կարևոր է ստեղծել համագործակցության ցանց ու հարթակ, որը հնարավորություն կտա նույն կամ նմանատիպ համատեքստում աշխատող ՏԱԽ-երին կիսվելու իրենց փորձառությամբ, գեներացնելու գիտելիք ու փորձառություն, որը կիրառելի կլինի այլ ՏԱԽ-երի համար ռազմավարությունն իրականացնելիս։

3) **Միջազգային համագործակցություն**

Լիդեր մոտեցմամբ գյուղական համայնքների զարգացման մեծ փորձառություն կա կուտակված ԵՄ անդամ երկրներում և ԵՄ հարևանության քաղաքականության թիրախ երկրներում, այդ թվում՝ Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում, որոնցում տեղական համատեքստը նման է հայաստանյան համատեքստին։ Այս առումով կարևոր է խթանել համագործակցությունն ու ստեղծել միջազգային կապեր ԵՄ անդամ երկրներում և ԱլԳ երկրներում (Մոլդովա, Վրաստան) գործող ՏԱԽ-երի հետ՝ միջազգային լավագույն փորձը կիսելու ու տեղայնացնելու Հայաստանում։ Ուստի, հատուկ ջանքեր կգործադրվեն միջազգային կոնֆերանսներին, դասընթացներին և այլ միջոցառումներին ՏԱԽ-ի անդամների մասնակցությունը խթանելու, ինչպես նաև արդեն իսկ գործող միջազգային ցանցերին (օրինակ՝ Elard) անդամակցելու կամ որպես դիտորդ մասնակցելու համար։

Այսպիսով, սույն Ռազմավարության արդյունավետ իրականացման, ՏԱԽ-ի կազմակերպական կարողությունների զարգացման նպատակով կխթանվի միջոլորտային համագործակցությունը, կստեղծվեն կապեր ու փոխգործակցության համար անհրաժեշտ կայուն միջավայր այլ ՏԱԽ-երի հետ՝ մարզային, ազգային և միջազգային մակարդակներում։

# 6. ՏԱԽ կազմակերպչական կառուցվածք, ղեկավարում և որակի ապահովում

## 6.1 Կազմը և կառուցվածքը

ՏԱԽ-ը կազմված է տարածքի բնակավայրերից ընտրված 33 անդամից, որոնք կազմում են ՏԱԽ-ի բարձրագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովը: ՏԱԽ-ն ունի նաև Խորհուրդ, որը միաժամանակ Ծրագրերի ընտրության կոմիտեն է և կազմված է 9 անդամից: ՏԱԽ-ում վերահսկող մարմին Վերստուգող հանձնաժողովն ունի 3 անդամ:

Ընդհանուր ժողովը, Խորհուրդը և Վերստուգող հանձնաժողովը կազմված են ՏԱԽ-ի հիմքում ընկած երեք ոլորտների (հանրային, մասնավոր և քաղաքացիական հասարակություն) հավասար թվով ներկայացուցիչներից (Հավելված 6):

ՏԱԽ-ը նաև ունի համակարգող մարմին, որն ընդգրկում է ՏԱԽ-ի համակարգողին և համակարգողի օգնականին: ՏԱԽ համակարգողն ընտրվում է Խորհրդի կողմից: ՏԱԽ-ում նաև գործում են աշխատանքային խմբեր, որոնք կարող են առնչվել թեմատիկ առաջնահերթություններին, ինչպես նաև ՏԱԽ-ի կազմակերպակառավարմանը: Վերջիններս ստեղծվում են ՏԱԽ խորհրդի կողմից համակարգողի առաջարկությամբ և ընդգրկում են ոչ միայն ՏԱԽ անդամներին, այլ նաև տարածքի այն բնակիչներին, որ ցանկանում են միանալ խմբին:



## 6.2 Կանոններ, առաջադրանքներ, գործողության և իրականացման եղանակներ

ՏԱԽ-ի բարձրագույն մարմինն **Ընդհանուր ժողովն է,** որը լիազորված է հաստատել ՏԱԽ-ի խորհրդի (Ծրագրերի ընտրության կոմիտեի), Վերստուգող հանձնաժողովի և ստեղծվելիք այլ մարմինների ընթացակարգային կանոնները: Կոնկրետ առաջադրանքների համար հետագա մարմինների ստեղծման կամ մարմինների հարմարեցման նպատակով Ընդհանուր ժողովը կայացնում է որոշում՝ ձայների որակյալ մեծամասնությամբ (75%): Վերջինս ընտրում է Խորհրդի անդամներին ՏԱԽ-ի անդամներից՝ 2 տարի ժամկետով, ինչպես նաև Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին՝ 1 տարի ժամկետով: Ընդհանուր ժողովը հաստատում է տեղական զարգացման ռազմավարությունը՝ ներառյալ գնահատումները, անդամավճարները, ՏԱԽ-ի ֆինանսավորման ռազմավարությունը:

**ՏԱԽ-ի խորհուրդը** քննարկում և որոշումներ է կայացնում ՏԱԽ-ի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են ՏԱԽ-ի համաժողովի իրավասությունների մեջ: Այն քննարկում և հաստատում է ծրագրերի ընտրության քաղաքականությունը, ներառյալ գնահատման չափանիշները առաջարկների ներկայացման հայտի հրապարակման փուլում: Կառավարող մարմնի կողմից հայտերի յուրաքանչյուր հավաքագրումից հետո գնահատում, ընտրում և հաստատում է ծրագրերի հայտերը, որոնք հասանելի հանրային ռեսուրսներով կարող են ֆինանսավորվել գյուղական համայնքների զարգացման կամ հարակից այլ նպատակների համար:

Խորհուրդը քննարկում և հաստատում է ՏԱԽ-ի կայունության և ֆինանսական պլանը, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը, շահերի բախման և էթիկայի ներքին կանոնակարգը, գործուղումների, հաշվապահական հաշվառման և գնումների քաղաքականությունները և այլ կորպորատիվ փաստաթղթեր: ՏԱԽ-ի անունից ընդունում և հանդես է գալիս հայտարարություններով, հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:

**ՏԱԽ-ի վերստուգող հանձնաժողովը** մշտադիտարկում է ՏԱԽ-ի գործունեությունը, ներառյալ վերահսկողություն է իրականացնում համակարգող մարմնի և կառավարման խորհրդի կողմից ՏԱԽ-ի միջոցների օգտագործման նկատմամբ: Վերջինս իրականացնում է ՏԱԽ-ի ֆինանսական միջոցների օգտագործման աուդիտ տարեկան առնվազն մեկ անգամ՝ համաձայն Ընդհանուր ժողովի կողմից հաստատված ընթացակարգի:

ՏԱԽ-ն ունի ներքին վերահսկողական համակարգ՝ հանձինս Վերստուգող հանձնաժողովի, որը տարեկան հաշտվետվություններ է ներկայացնում Ընդհանուր

ժողովին: Ընդհանուր ժողովը անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում անցկացնել ՏԱԽ-ի արտաքին ֆինանսական աուդիտ:

ՏԱԽ-ն ունի արտաքին վերահսկողական համակարգ՝ վեբ կայք, որտեղ հրապարակվում են իր գործունեության տարեկան հաշվետվությունները, արտաքին ֆինանսական աուդիտի եզրակացությունները, ՏԱԽ քաղաքականությունները՝ ներառյալ ծրագրերի ընտրության և գնահատման չափանիշները:

## 6.3 ՏԱԽ-ի կառավարումը

ՏԱԽ-ի կառավարումն իրականացվում է **Համակարգող մարմնի** կողմից, որը գլխավորում է **ՏԱԽ-ի համակարգողը:** Վերջինս հանդիսանում է ՏԱԽ-ի հաշվետու մարմինը, իրականացնում է Ընդհանուր ժողովի, Կառավարման խորհրդի և Վերստուգող հանձնաժողովի գործավարությունը, տնօրինում է ՏԱԽ-ի արխիվը, հավաքագրում ծրագրերի հայտերը և ներկայացնում է ՏԱԽ-ի կառավարման խորհրդին, պահպանում է ծրագրային հայտերի և ընտրությունների արդյունքները, դրանց ընտրության վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումները ներկայացնում է համապատասխան մարմնին:

ՏԱԽ-ի համակարգողը ներկայացնում է ՏԱԽ-ը երրորդ անձանց հետ հարաբերություններում, ՏԱԽ-ի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է ՏԱԽ-ի կողմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը, համակարգում է ՏԱԽ-ի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները, ՏԱԽ-ի անդամներին տեղեկացնում է ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունների մասին, վարում է ՏԱԽ-ի անդամների հաշվառումը, անդամության նոր դիմումներ ներկայացված հայտերի ռեեստրը, ինչպես նաև ապահովում է ՏԱԽ-ի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքն ու թափանցիկությունը:

ՏԱԽ-ի կառավարման արդյունավետությունը և մասնակցայնությունը խթանալու նպատակով ՏԱԽ-ում կարող են ստեղծվել **աշխատանքային խմբեր,** որոնք կարող են լինել ինչպես կազմակերպական հարցերով զբաղվող, այնպես էլ թեմատիկ առաջնահերթությունների վրա աշխատող: Վերջիններիս կարող են անդամակցել ՏԱԽ անդամները, ինչպես նաև ՏԱԽ-ի անդամ չհանդիսացող տեղացիները, ոլորտի ներկայացուցիչները, փորձագետները: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ կազմում է իր աշխատանքային պլանը և ներկայացնում համակարգողին: Աշխատանքային խմբերի գործառույթների համակարգումը և նրանց աշխատանքների մշտադիտարկումը կատարվում են ՏԱԽ-ի համակարգողի կողմից, և արդյունքների մասին զեկույցը ներկայացվում է Ընդհանուր ժողովին:

## 6.4 Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցում

ՏԱԽ-ում ստեղծվել է Հաղորդակցության և միջոցառումների իրականացման աշխատանքային խումբը, որի աշխատանքներում նաև ընդգրկված են սույն Ռազմավարության հանրայնացման աշխատանքները։

Ռազմավարության և գործողությունների պլանի հանրայնացման, տեսանելիության բարձրացման համար ՏԱԽ-ն օգտագործում է հետևյալ ռեսուրսները՝

- ՏԱԽ-ի կայքէջ և սոցիալական ցանցերի էջեր
- Էլեկտրոնային լրատվամիջոցներ և համացանցային հարթակներ
- Մարզային և հանրապետական ծածկույթ ունեցող ԶԼՄ-ներ («Ցայգ» ՀԸ, «Շանթ» ՀԸ, Հանրային հեռուստաընկերություն և այլն)
- Հանդիպումներ տեղացիների հետ իրենց բնակավայրերում, տեղեկատվական ֆորումներ, աշխատանքային հանդիպումներ։

Ռազմավարության և գործողությունների պլանի հանրայնացման, տեսանելիության բարձրացման հիմնական թիրախ խմբերն են՝

- տարածքի բնակիչները (պոտենցիալ շահառուներ),
- տեղական (համայնքապետեր, վարչական ղեկավարներ) և մարզային իշխանությունների ներկայացուցիչներ,
- հասարակական կազմակերպություններ,
- միջազգային կառույցներ, այդ կառույցների հայաստանյան ներկայացուցչություններ,
- պոտենցիալ համագործակիցներ, գործընկերներ,
- ԶԼՄ-ներ։

## 6.5 Մշտադիտարկման և ինքնագնահատման ընթացակարգ

ՏԱԽ-ի տարածքի տեղական զարգացման 2022-2026 թթ. ռազմավարության բարեհաջող իրականացման համար անհրաժեշտ է ապահովել ռազմավարության իրականացման որակյալ մոնիթորինգ և գնահատում, ինչն իրականացվելու է հետևյալ գործողություններով՝

- Ռազմավարության շրջանակներում իրականացվող ծրագրերի համար մշակել հնարավոր ցուցիչների եռաստիճան (impact, outcome, output) աղյուսակ, որը պարտադիր կկիրառվի բոլոր իրականացվող ծրագրերի համար։ Նման ստանդարտացված մոտեցումը թույլ կտա ընդհանրացնել Ռազմավարության շրջանակներում աջակցություն ստացող բազմաթիվ դրամաշնորհային ծրագրերի արդյունքները։
- Հաշվի առնելով Հայաստանում Լիդեր մոտեցման կիրառության փորձի պակասը և արդյունավետ մոնիտորինգ իրականացնելու և որակի

ապահովման անհրաժեշտությունը՝ ՏԱԽ անդամների, հատկապես Ծրագրերի ընտրության կոմիտեի/խորհրդի և Վերստուգող հանձնաժողովի անդամների համար անհրաժեշտ է իրականացնել վերապատրաստում հետևյալ թեմաներով՝

1. Որակյալ ծրագրերի մշակում և իրականացում
2. Մոնիթորինգ և գնահատում
3. Աուդիտ
4. Տվյալների հավաքագրում և վերլուծություն
5. Հաշվետվությունների կազմում և այլն:

Վերապատրաստումները թույլ կտան արդյունավետ վերահսկողություն իրականացնել ՏԱԽ-ի աշխատանքների ու գործողությունների պլանի իրականացման նկատմամբ և դրամաշնորհառուներին տրամադրել որակյալ աջակցություն.

- Ռազմավարության մոնիթորինգը պետք է վերլուծի գործողությունների իրականացման ընթացքը և անմիջական արդյունքներին հասնելու աստիճանը՝ ըստ նախապես սահմանված ցուցիչների: Ռազմավարության մոնիթորինգը պետք է իրականացվի ՏԱԽ-ի վերստուգող հանձնաժողովի, ինչպես նաև արտաքին կազմակերպության կողմից: Մոնիթորինգ իրականացնելու համար հնարավոր է մշտադիտարկել ռազմավարության շրջանակներում իրականացվող ծրագրերը՝ տեղում այցելությունների կազմակերպմամբ, ուսումնասիրել մշակված նյութերը, հետևել հանրայնորեն տարածված տեղեկությանը, ուսումնասիրել ծրագրերն իրականացնող կառույցների հաշվետվությունները, օգտագործել հարցումներ, հարցազրույցներ և տվյալների հավաքագրման այլ գործիքներ շահառուներից տեղեկություն ստանալու համար:

Ռազմավարության գնահատման համար առաջարկվում է իրականացնել արտաքին գնահատում յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ: Գնահատումը պետք է չափի ընդհանուր և մասնավոր ռազմավարական նպատակների իրականացման աստիճանը, տրամադրի Ռազմավարության բարելավման առաջարկներ: Գնահատման համար հնարավոր է օգտագործել ինչպես երկրորդային տվյալներ, օրինակ՝ Ռազմավարության մոնիթորինգի հաշվետվությունները, իրականացված ծրագրերի հաշվետվությունները, այնպես էլ հավաքագրել առաջնային տվյալներ, օրինակ՝ ֆոկուս խմբային քննարկումներ, առցանց և առերես հարցումներ, հարցազրույցներ և այլն:

Մոնիթորինգի և գնահատման արդյունքները կօգտագործվեն ՏԱԽ համապատասխան մարմինների կողմից՝ իրագործման ընթացքի փոփոխման, նոր հիմնախնդիրների կանխարգելման կամ առկա հիմնախնդիրներին անդրադառնալու համար:

ՏԱԽ-ի տարածքի տեղական զարգացման ռազմավարության գնահատման արդյունքները պետք է հասանելի լինեն հանրությանը, ուստի կներբեռնվեն ՏԱԽ-ի կայքում և կքննարկվեն տեղացիների հետ տեղական հանդիպումների միջոցով՝ ռազմավարության իրականացման թափանցիկությունն ապահովելու և գնահատման արդյունքները վավերացնելու նպատակով:

# 7. Ֆինանսական պլան

| Ընթացիկ ծախսեր – մանրամասներ | Տարեկան գնահատված ծախսեր |
|---|---|
| Համախառն աշխատավարձը. ՏԱԽ-ի ղեկավար | 5.000.000 |
| Գրասենյակային տարածք | 2.000.000 |
| Հաղորդակցման ծախս | 3.000.000 |
| Գրասենյակային ծախսեր | 300.000 |
| Գրենական պիտույքներ | 1.500.000 |
| Սարքավորումներ | 2.800.000 |
| Այլ | 1.000.000 |

| Գործունեություն | «ԼԻԴԵՐ»-ի ինդիկատիվ բյուջեն | Այլ միջոցներ[32] |
|---|---|---|

[32] Այլ միջոցների տվյալները կթարմացվեն ֆոնդահայթայթման աշխատանքային խմբի կարողությունների զարգացումից ու դրա արդյունքում արդյունավետ աշխատանք իրականացնելուց հետո:

| | | |
|---|---|---|
| **ՏԱԽ-ի տարածքի բնակիչների համար հմտությունների փոխանցում և ներգրավվածության ապահովում** | Կորոշվի՝ համաձայն կարողությունների զարգացման պլանին հատկացված բյուջեի | |
| **ՏԱԽ-ի ընթացիկ ծախսեր** | 15.600.000 | |
| **Փոքրածավալ նախագծեր** | 25.000.000 | |
| **Համագործակցության նախագծեր** | 250.000.000 | |
| **Ընդամենը՝ 2022-2026թթ.** | 290.600.000 | |

# 8. Նախապատրաստման և մշակման գործընթաց

## 8.1 Տեղացիների ներգրավվածության նկարագրությունը

ՏԱԽ-ի շրջանակներում ռազմավարության մշակման գործընթացը համակարգելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ՝ կազմված ՏԱԽ-ի երեք ոլորտների ներկայացուցիչներից, որոնք մշակել են ռազմավարության մասնակցային սահմանման համար անհրաժեշտ գործողությունների պլան: Աշխատանքային խմբի համար իրականացվել է դասընթաց կարիքների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ: Խումբը ոչ միայն մշակել է գործողություններ՝ ըստ ընտրված մեթոդի, որոնցով կապահովվի ավելի շատ տեղացիների մասնակցությունը, այլ նաև ներգրավվել է ՏԱԽ-ի բոլոր անդամներին կազմակերպչական աշխատանքներում:

Այսպիսով, որպես ՏԱԽ-ի տարածքի գնահատման մեթոդ ընտրվել է Ռեսուրսների վրա հիմնված համայնքային զարգացման (Area-Based Community development (ABCD)) մեթոդաբանությունը, որի նպատակն է համայնքային զարգացման համար շեշտադրումն անել ռեսուրսների վրա՝ քարտեզագրելով դրանք և համադրելով զարգացման կարիքներին:

ՏԱԽ-ի անդամները թիրախ բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքապետարանների ներկայացուցիչների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ կազմակերպել են հանդիպումներ թիրախ 21 բնակավայրերում՝ ռեսուրսների բացահայտման ու կարիքների վերհանման համար, որոնց մասնակցել են 129 տեղաբնակներ: Ստացված առաջնային տեղեկատվությունը մշակվել է խմբի անդամների կողմից, որից հետո ներկայացվել Աշոցք և Ամասիա համայնքների համայնքապետերին, համայնքապետարանի ներկայացուցիչներին, թիրախ բնակավայրերի վարչական ղեկավարներին, որոնք՝ որպես տեղացիների ներկայացուցիչներ, հնարավորություն են ունեցել իրենց առաջարկություններն անելու: Ստացված առաջարկություններն ինտեգրվել են հավաքված տեղեկատվության մեջ և վերլուծվել:

Ռազմավարության մշակման գործընթացում նաև ուսումնասիրվել են Աշոցք և Ամասիա համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը, ՀՀ Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը՝ ռազմավարական նախնական առաջնահերթությունների համապատասխանությունը ստուգելու և դրանց սահմանման համար:

Սահմանված առաջնահերթությունները ներկայացվել են ՏԱԽ-ի բոլոր անդամներին, որոնք որոշել են ստացված տեղեկատվության վերլուծությամբ առաջարկել չորս հիմնական առաջնահերթություն: Վերջիններիս հիման վրա ՏԱԽ-ում ստեղծվել են չորս թեմատիկ աշխատանքային խմբեր: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ առանձին իրականացրել է թեմատիկ SWOT վերլուծություն

և մշակել նախնական գործողությունների պլան՝ կիսելով դրանք ՏԱԽ-ի մյուս անդամների հետ խորհրդակցության ու լրամշակման նպատակով:
Ռազմավարության նախնական տարբերակը կիսվել է տեղաբնակների հետ, հատկապես նրանց, ովքեր մասնակցել են առաջնային փուլերում կարիքների գնահատմանը՝ նրանց վերջնական հաստատումը ստանալու և առաջարկությունների հիման վրա ռազմավարության վերջնական լրամշակման համար:

## 8.2 Փորձագետների դերի նկարագրությունը

Ռազմավարության սահմանման ու գործողությունների պլանի վերջնական մշակման նպատակով ներգրավվել են ոլորտային մասնագետներ՝ ըստ նախանշված առաջնահերթությունների ու ընդհանրական թեմաների (գենդեր, սոցիալական ներառում, նորարարություն, բնապահպանություն), որոնք անմիջապես աշխատել են աշխատանքային խմբերի հետ: Ներգրավված փորձագետներն իրականացրել են թեմատիկ դասընթացներ աշխատանքային խմբերի և ՏԱԽ-ի անդամների համար՝ զբոսաշրջության, գյուղատնտեսության, բնապահպանության, սոցիալական ներառման, կրթության, ՓՄՁ-ների վերաբերյալ՝ զարգացնելով վերջիններիս կարողությունները և խթանելով նրանց արդյունավետ աշխատանքը ռազմավարության մշակման մեջ:

# 9.Հավելվածներ

| Հավելված 1. Թիրախ բնակավայրերի մշտական բնակչության ընդհանուր թիվը՝ ըստ բնակավայրի[33] և սեռատարիքային բաշխումը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքի անվանումը (անգլերեն) | Համայնքի անվանումը (հայերեն) | Թիրախ բնակավայրերի մշտական բնակչության ընդհանուր թիվը՝ ըստ բնակավայրի | | | | | | |
| | | Նրանց թվում՝ ըստ սեռի | | Նրանց թվում՝ ըստ տարիքային խմբի | | | | |
| | | արական | իգական | Մինչև 6 տարեկան | 7-ից 18 տարեկան | 19-ից 41 տարեկան | 42-ից 64 տարեկան | 65 և ավելի |
| Amasia | Ամասիա | 1006 | 955 | 85 | 281 | 560 | 689 | 331 |
| Aregnadem | Արեգնադեմ | 262 | 213 | 9 | 43 | 156 | 206 | 50 |
| Bandivan | Բանդիվան | 146 | 137 | 11 | 44 | 95 | 98 | 33 |
| Byurakn | Բյուրակն | 427 | 433 | 55 | 123 | 354 | 360 | 112 |
| Gtashen/Kamkhut* | Գտաշեն/Կամխուտ | 271 | 214 | 8 | 40 | 127 | 236 | 74 |
| Hovtun | Հովտուն | 94 | 93 | 9 | 33 | 55 | 73 | 17 |
| Meghrashat | Մեղրաշատ | 216 | 195 | 14 | 79 | 108 | 172 | 38 |
| Voghji | Ողջի | 340 | 309 | 31 | 93 | 169 | 258 | 100 |
| Jradzor | Ջրաձոր | 180 | 152 | 15 | 33 | 120 | 145 | 30 |
| Ashotsk | Աշոցք** | 1467 | 1351 | 201 | 429 | 852 | 1020 | 316 |
| Bavra | Բավրա** | 366 | 291 | 59 | 94 | 196 | 251 | 57 |

[33] Այստեղ և հետո ՛՛**՛՛ նշված բնակավայրերի տվյալները վերցված են համայնքային զարգացման ծրագրից և արտացոլում են 2019թ. հունվարի 1-ի տվյալները, մյուս տվյալները վերցված են համայնքապետարանից և արտացոլում են 2021թ. հունվարի 1-ի տվյալները:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Zuygakhpyur | Զույգաղբյուր** | 276 | 240 | 38 | 74 | 154 | 202 | 48 |
| Tavshut | Թավշուտ** | 199 | 174 | 26 | 49 | 123 | 144 | 31 |
| Karmravan | Կարմրավան** | 143 | 123 | 18 | 42 | 84 | 98 | 24 |
| Krasar | Կրասար** | 285 | 238 | 39 | 99 | 150 | 192 | 43 |
| Ghazanchi | Ղազանչի** | 349 | 291 | 40 | 88 | 155 | 290 | 67 |
| Mets Sepasar | Մեծ Սեպասար** | 490 | 417 | 74 | 154 | 255 | 361 | 63 |
| Saragyugh | Սարագյուղ** | 132 | 122 | 26 | 36 | 81 | 92 | 19 |
| Sizavet | Սիզավետ** | 232 | 161 | 18 | 61 | 116 | 157 | 41 |
| Pokr Sepasar | Փոքր Սեպասար** | 137 | 134 | 31 | 45 | 82 | 94 | 19 |
| | Ընդհանուր | **7018** | **6243** | **807** | **1940** | **3992** | **5138** | **1513** |

| Հավելված 2. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը և մեղվաընտանիքների քանակը թիրախ տարածքում 2020 թվականին | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կենդանիներ | ԱՄԱՍԻԱ համայնքի բնակավայրեր | | ԱՇՈՑՔ համայնքի բնակավայրեր | | Ընդամենը | |
| | 2019 | 2020 | 2019 | 2020 | 2019 | 2020 |
| Խոշոր եղջերավոր, | 4881 | 5275 | 11040 | 11549 | 15921 | 16824 |
| *որից կովեր* | 2356 | 2412 | 5325 | 5644 | 7681 | 8056 |
| Մանր եղջերավոր, | 7574 | 8559 | 8092 | 8113 | 15666 | 16672 |
| *որից մաքիներ* | 5113 | 5689 | 5117 | 5169 | 10230 | 10858 |
| Խոզեր, | 646 | 656 | 447 | 557 | 1093 | 1213 |
| *որից մերուներ* | 198 | 203 | 206 | 249 | 404 | 452 |
| Թռչուններ, | 9655 | 10377 | 7446 | 7890 | 17101 | 18267 |
| *որից ածան հավեր* | 8615 | 8894 | 5267 | 5469 | 13882 | 14363 |
| Մեղվաընտանիքներ | 1439 | 1106 | 574 | 591 | 2013 | 1697 |

| Հավելված 3. Տարածքում գործող ՓՄՁ-ների թիվը՝ ըստ բնակավայրերի և սեկտորների | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բնակավայրի անվանումը | ՓՄՁ-ների թիվը | ՓՄՁ-ներում աշխատող ների թիվը | Առևտուր | Գործարան/ արտադրություն | Ծառայություններ |
| Ամասիա | 20 | 296 | 11 | 3 | 6 |
| Արեգնադեմ | 1 | 1 | 1 | - | - |
| Բանդիվան | 3 | 65 | 2 | 1 | - |
| Բյուրակն | 2 | 3 | 2 | - | - |
| Գտաշեն/Կամխուտ | 1 | 1 | 1 | - | - |
| Հովտուն | 0 | 0 | - | - | - |
| Մեղրաշատ | 2 | 2 | 2 | - | - |
| Ողջի | 2 | 2 | 2 | - | - |
| Ջրաձոր | 0 | 0 | - | - | - |
| Աշոցք | 20 | 43 | 15 | 2 | 3 |
| Բավրա | 3 | 6 | 3 | - | - |
| Զույգաղբյուր | 1 | 2 | 1 | - | - |
| Թավշուտ | 1 | 2 | 1 | - | - |
| Կարմրավան | 1 | 1 | 1 | - | - |
| Կրասար | 2 | 4 | 2 | - | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ղազանչի | 3 | 6 | 3 | - | - |
| Մեծ Սեպասար | 4 | 14 | 4 | - | - |
| Սարագյուղ | 2 | 4 | 2 | - | - |
| Սիզավետ | 1 | 2 | 1 | - | - |
| Փոքր Սեպասար | 1 | 2 | 1 | - | - |
| **Ընդհանուր** | **69** | **456** | **55** | **5** | **9** |

| **Հավելված 4. Տարածքի դպրոցական, նախադպրոցական և արտադասարանական կրթական հաստատությունների տվյալները՝ ըստ բնակավայրերի** | | | | |
|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Բնակավայրի անվանումը** | **Հաստատության անվանումը** | **Հզորությունը ըստ նախագծի** | **Երեխաների փաստացի թիվը** |
| **1** | Աշոցք** | «Աշոցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 360 | 303 |
| | | «Աշոցքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 120 | 85 |
| | | «Աշոցքի արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 120 | 72 |
| **2** | Սարագյուղ** | «Սարագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 80 | 14 |
| **3** | Բավրա** | «Բավրայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 130 | 81 |
| | | նախակրթարան | | 13 |
| **4** | Սիզավետ** | «Սիզավետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 120 | 50 |
| **5** | Թավշուտ** | «Թավշուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 120 | 55 |
| **6** | Ղազանչի** | «Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 140 | 75 |
| | | Ղազանչիի մանկապարտեզ | | 25 |
| **7** | Մեծ Սեպասար** | «Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 250 | 159 |
| | | նախակրթարան | | 18 |
| | | Մեծ Սեպասարի մանկապարտեզ | | 25 |
| **8** | Կրասար** | «Կրասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 100 | 82 |
| **9** | Կարմրավան** | «Կարմրավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 60 | 36 |
| **10** | Զույգաղբյուր** | «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 100 | 46 |
| **11** | Ամասիա | «Ամասիայի Նանե նախակրթարան» ՀՈԱԿ | 80 | 80 |
| | | «Ամասիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 316 | 209 |
| | | «Ամասիայի արվեստի դպրոց» ՊՈԱԿ | | |
| | | Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ | 270 | 80 |
| **12** | Արեգնադեմ | «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 37 |
| **13** | Բանդիվան | «Բանդիվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 66 |
| **14** | Բյուրակն | «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 84 |
| **15** | Գտաշեն | «Գտաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 28 |
| | | «Գտաշենի նախակրթարան» ՀՈԱԿ | - | 9 |
| **16** | Հովտուն | «Հովտունի տարրական դպրոց» ՊՈԱԿ | - | 14 |
| **17** | Ջրաձոր | «Ջրաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 26 |
| **18** | Մեղրաշատ | «Մեղրաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 63 |
| | | «Մեղրաշատի նախակրթարան» ՀՈԱԿ | - | 12 |
| **19** | Ողջի | «Ողջիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | - | 36 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ողջիի մանկապարտեզ | - | 8 |
| **20** | Փոքր Սեպասար[34] | - | - | - |

## Հավելված 5. Տրամաբանական հենք

Northern Way LAG_ logframe, action pla

## Հավելված 6. Գործընկերության հուշագիր

Գործընկերության-Հ ուշագիր-Հյուսիսային

Հավելված Հյուսիսային ՏԱԽ Pro

## Հավելված 7. ՏԱԽ բրենդի առաջշարժման ռազմավարություն

*Ռազմավարությունը կմշակվի ծրագրի ընթացքում

[34] Նախադպրոցական և դպրոցական հաստատություններ չեն գործում, երեխաները հաճախում են ՄԵԾ Սեպասարի դպրոց և նախակրթարան